ՆԻՆՈ ԷՐԵՄԱՇՎԻԼԻ
ԼԵՎԱՆ ԱԽՎԼԵԴԻԱՆԻ
ԴԱՎԻԹ ԼՈՍԱԲԵՐԻԶԵ
ԹԱՄԱՐ ՌՈՒԽԱԶԵ

ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռնարկ
IX դասարանի համար

USAID FROM THE AMERICAN PEOPLE
PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

Համագործակցություն տեղական իշխանության և լրատվամիջոցների հետ

Աշակերտի գիրք

Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռնարկ IX դասարանի համար, երրորդ հրատարակության հայերեն թարգմանություն

Ձեռնարկի տվյալ հրատարակությունը տպագրվել է ՍՊԸ **«Փաունտեյն Ջորջիայում»**

Հեղինակներ.
Նինո Էրեմաշվիլի
Լևան Ախվլեդիանի
Դավիթ Լոսաբերիձե
Թամար Ռուխաձե

Խորհրդատու.
Նինո Գվարամաձե

Թարգմանությունը՝ **Զոյա Մխիթարյանի**
Խմբագիր՝ **Գիսանե Հովսեփյան**

Դիզայներ՝ **Մարթա Թաբուկաշվիլի**

© Project Harmony, Inc., 2019

ISBN: 978-9941-8-0574-5

Ձեռնարկը պատրաստվել է ամերիկյան ժողովրդի աջակցության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Ձեռնարկում տրված տեղեկությունների և նրանում արտահայտված կարծիքների համար միանձնյա պատասխանատու են հեղինակները, և դրանք չեն հանդիսանում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ԱՌԱՋԱԲԱՆ

2010-2014 թվականներին PH International կազմակերպության կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Վրաստանում իրականացվել է «Քաղաքացիական կրթության և մանկավարժների վերապատրաստման ծրագիր»:

Ծրագիրը նպատակ ուներ բարելավել քաղաքացիական կրթության դպրոցական ծրագրի որակը և խթանել ժողովրդավարական հասարակության կառուցման գործընթացի մեջ երիտասարդների մասնակցությունը:

Այդ նպատակին հասնելու համար ծրագրի շրջանակներում ստեղծվեց քաղաքացիական կրթության ուսուցման չորս օժանդակ ձեռնարկ, անցկացվեցին մանկավարժների թրեյնինգներ, ձևավորվեցին դպրոցական քաղաքացիական ակումբներ, փոքր դրամաշնորհներ հատկացվեցին աշակերտների, ուսուցիչների և ծնողների քաղաքացիական նախաձեռնությունների համար, հիմնադրվեց քաղաքացիական կրթության մանկավարժների համաժողով, կազմակերպվեցին քաղաքացիական կրթության ամառային ճամբարներ, ստեղծվեցին քաղաքացիական կրթության և քաղաքացիական նախաձեռնությունների երկու վեբպորտալներ՝ www.civics.ge և www.initiatives.ge, անցկացվեցին աշակերտների թրեյնինգներ սոցիալական մեդիայից և ստեղծվեցին քաղաքացիական կրթության գրադարաններ:

Տվյալ ձեռնարկը մեկն է այն օժանդակ ձեռնարկների շարքից, որ ստեղծվել է ծրագրի շրջանակներում: Ձեռնարկի երկրորդ հրատարակությունը մշակվել է 2015 թվականին, քաղաքացիական կրթության նոր՝ «Ապագա սերունդ» ծրագրի շրջանակներում, որը նույնպես իրականացվում է PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ: Այժմ առաջարկում ենք նույն ծրագրի շրջանակներում ստեղծված դասագրքի երրորդ հրատարակությունը, որը կազմված է վերջին օրենսդրական փոփոխությունների նախատեսմամբ: Ձեռնարկը ձեզ շատ հետաքրքիր և օգտակար տեղեկություններ կհաղորդի, հնարավորություն կտա օգտագործել ձեր ձեռք բերած գիտելիքները ձեր ամենօրյա կյանքում և գործունեության մեջ, գտնել համախոհներ, գործընկերներ, համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ձեր համայնքի և հասարակության համար կարևոր խնդիրների լուծման նպատակով: Ձեռնարկը կօգնի ձեզ նաև իմանալ լրատվամիջոցների դերի մասին պետության և հասարակության զարգացման գործում: Գործնականում իրականացնելով լավ քաղաքացիության սկզբունքները, դուք կմասնակցեք Վրաստանի՝ որպես հզոր ժողովրդավարական պետության կառուցմանը և զարգացմանը:

Ապագա հաջողությունների ցանկությամբ՝
Մարինա Ուշվերիձե

Քաղաքացիական կրթության «Ապագա սերունդ» ծրագրի տնօրեն
PH International - Վրաստան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

Ներածություն 5
Ինչպես օգտվենք գրքից 7

ԹԵՄԱ 1 Տեղական ինքնակառավարում՝ պատմական ակնարկ և ժողովրդավարական երկրների փորձը 9

Ի՞նչ է տեղական ինքնակառավարումը 10
Ինքնակառավարման պատմությունը 11
Ինքնակառավարումը և ժամանակակից փորձը 12
Կյանքը և օրենքը 13

ԹԵՄԱ 2 Ինքնակառավարման էությունը և նշանակությունը, ինքնակառավարման համակարգը և օրենսդրական դաշտը Վրաստանում 19

Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները 22

ԹԵՄԱ 3 Տեղական ինքնակառավարման բնութագրիչները և հիմնական նպատակները 27

Տեղական ինքնակառավարման գործառույթները 29

ԹԵՄԱ 4 Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմինները 35

Ինքնակառավարման մարմինների ստեղծման-ձևավորման կարգը (ընտրություններ) 36
Ինքնակառավարման մարմինների գործունեության ձևերը 39

ԹԵՄԱ 5 Լրատվամիջոցների դերը ժողովրդավարական հասարակությունում 41

Ի՞նչ են լրատվամիջոցները և ինչի՞ համար են անհրաժեշտ դրանք մեզ 42
Լրատվամիջոցները հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը 44
Լրատվամիջոցների էթիկան և ինքնակարգավորումը 45
Լուրեր 49
Հասարակությանը կողմնորոշված լրատվամիջոցներ 52
Համագործակցություն լրատվամիջոցների հետ 56

ԹԵՄԱ 6 Ինչպե՞ս իրականացնենք ինքնակառավարումը 59

Հավելված 1
Վրաստանի օրգանական օրենք՝
«Տեղական ինքնակառավարման օրենսգիրք» 66
Հավելված 2 76
Հավելված 3 77
Հավելված 4 79
Հավելված 5 80
Հավելված 6 81
Հավելված 7 82
Տերմինների այբբենական բառարան 83
Օգտագործած գրականություն 91
Օգտագործված լուսանկարներ 92

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ ձեռնարկի նպատակն այն է, որ աշակերտները գիտակցեն տեղական ինքնակառավարման նշանակությունը և գործառույթները, հասկանան, թե երբ և ինչու պետք է դիմեն տեղական ինքնակառավարմանը, զարգացնեն տեղական ինքնակառավարման հետ համագործակցելու հմտություններ ու կարողություններ, նույնականացնեն այն հիմնախնդիրները, որոնք ի զորու է իրականացնել տեղական ինքնակառավարումը, կազմեն նախագծեր և տվյալ հիմնախնդիրները լուծեն ինքնակառավարման հետ միասին:

Վրաստանում շատ կարևոր քայլեր են ձեռնարկվել տեղական ժողովրդավարության հաստատման նպատակով, սակայն մինչև լիարժեք ինքնակառավարման հաստատումը դեռևս երկար ճանապարհ ունենք անցնելու: Այս կարևոր գործի մեջ մեծ ներդրում կարող են ունենալ ակտիվ քաղաքացիները և ակտիվ քաղաքացիական հասարակությունը:

Քաղաքացիական ակտիվության սկզբունքները հստակեցնելու նպատակով սույն ձեռնարկի միջոցով աշակերտները կծանոթանան նաև լրատվամիջոցների գործունեության սկզբունքներին, կտեղեկանան, թե ինչպես կկարողանան համագործակցել լրագրողների հետ: Ձեռնարկի այդ մասը կօգնի աշակերտներին հասկանալ, թե ինչ են լրատվամիջոցները և ինչու են դրանք անհրաժեշտ մեզ, պետության համար ինչու է կարևոր լրատվամիջոցների ազատությունը և, ընդհանրապես, ինչ դեր ունի այն ժողովրդավարական հասարակությունում:

Երիտասարդներն ավելի ակտիվ պետք է համագործակցեն տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների) հետ և իրենց քաղաքի, ավանի կամ գյուղի համար ստանան բոլոր այն բարիքները, որոնք ըստ օրենքի սահմանված են իրենց համար:

Ինչպե՞ս օգտվենք գրքից

Ձեռնարկը բաղկացած է վեց թեմաներից, ինչն ընդհանուր առմամբ ներառում է 12 դաս, ինքնակառավարման ներկայացուցիչների հետ մեկ հանդիպում և մեկ ամփոփիչ դաս: Յուրաքանչյուր դաս բաղկացած է տեսական մասից, տնային առաջադրանքներից և դասարանական աշխատանքից, որը դասարանում ուսուցչի օգնությամբ կկատարեք:

Յուրաքանչյուր դասի վերջում տրված տնային առաջադրանքները կօգնեն ձեզ մեկ մեծ նախագծի իրականացման գործում: Այս նախագիծը, տեղական ինքնակառավարման և լրատվամիջոցների հետ համագործակցությամբ, միտված է ձեր իսկ քաղաքի, ավանի կամ գյուղի խնդիրների լուծմանն ու կարգավորմանը:

Դասերի մեջ մանրամասնորեն բացատրված է, թե ինչ է տեղական ինքնակառավարումը, ինչ նշանակություն ունի այն երկրի և առանձին քաղաքացու համար, ինչպես պետք է համագործակցեք նրա հետ:

Գրքում տրված է նաև բառարան՝ տերմինների բացատրություններով:

Հաջողություններ՝ ենք ցանկանում:

ԹԵՄԱ 1

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

ԹԵՄԱ 1

Ի՞ՆՉ Է ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Թբիլիսիի ավագանին Ազատության հրապարակ

ԲԱՌԱՐԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ ժողովրդի կառավարում) – քաղաքական կարգի առաջադիմական ձև, որը հիմնված է մեծամասնության կառավարման վրա:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - պետություն, որը հիմնված է ժողովրդավարական կառավարման վրա:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ – Եվրոպական խարտիայի համաձայն, իշխանության տեղական մարմինների իրավունքն ու հնարավորությունը, Օրենքի շրջանակներում կարգավորել և վարել հասարակական գործերի նշանակալի մասը՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերին համապատասխան:

Անհնար է պատկերացնել **ժողովրդավարական պետությունն** առանց հզոր և արդյունավետ տեղական ինքնակառավարման, քանի որ տեղական **ինքնակառավարումը** պետության մեջ **ժողովրդավարական կառավարման** գոյության պարտադիր պայմաններից մեկն է:

Տեղական ինքնակառավարումը հասարակությանն ամենից մոտ կանգնած իշխանական մակարդակն է: Ըստ օրենսդրության, այն անկախ է հանդես գալիս և տեղերում կենտրոնական իշխանության անմիջական շարունակողը չէ: Նրա միջոցով այս կամ այն քաղաքի կամ գյուղի բնակիչներն իրենք, կենտրոնական իշխանությունից անկախ, տեղական նշանակության հարցեր են կարգավորում: Տեղական ինքնակառավարումը մի կողմից քաղաքացիների համար մատչելի է դարձնում երկրի կառավարումը և նրանց հնարավորություն տալիս պաշտպանել սեփական իրավունքները, իսկ մյուս կողմից՝ նպաստում նրանց քաղաքացիական պատասխանատվության ձևավորմանը, այսինք՝ տեղական ինքնակառավարումը քաղաքացու իրավունքն է և պատասխանատվությունը՝ մասնակցելու այն խնդիրների լուծմանը, որոնք ուղղակիորեն վերաբերում են իրեն և իր կենսական միջավայրին: Հետևաբար, տեղական ինքնակառավարման մարմինները որքան հնարավոր է մոտ պետք է լինեն բնակչությանը և պաշտպանեն նրա շահերը:

Տեղական ինքնակառավարումը կարող է դիտվել՝ որպես մի տեսակ «պայմանագիր» ժողովրդի և իշխանության միջև, որում սահմանված են երկկողմ իրավունքներ ու պարտականություններ:

Ինքնակառավարումը հնարավոր է միայն այնտեղ, որտեղ ժողովուրդը և իշխանությունն իրենց պարտականություններին և իրավունքներին պատասխանատվությամբ են մոտենում:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնակառավարման պատմությունը բազում դարեր է անցել: Դեռևս հնագույն **Շումերի** և **Միջագետքի** տարբեր քաղաք-պետությունների կառավարմանն ակտիվորեն մասնակցում էր ժողովրդական ժողովը, որի անդամ էին հանդիսանում բոլոր չափահաս տղամարդիկ: Առանց ժողովրդական ժողովի համաձայնության ոչ մի կարևոր պետական հարց չէր վճռվում:

Դասական տեսքով ժողովրդավարության և ինքնակառավարման նմուշ էր ներկայացված հին հունական **պոլիսներում**: Ժողովրդավարության առումով հատկապես Աթենքն էր առանձնանում, որի մասին պատմությունն ամենից շատ տեղեկություններ է պահպանել: Քաղաքի կառավարմանն անմիջականորեն ընդգրկված էին բոլոր քաղաքացիները, ազատ մարդիկ: Սա **ուղիղ ժողովրդավարության** ամենավառ օրինակն է: Հենց աթենացիների կողմից ստեղծված ժողովրդավարական կառավարումը դարձավ ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի պետությունների կազմակերպման հիմքը: Այս համակարգի ամենանշանակալի տարրն է հանդիսանում ինքնակառավարումը:

Հին շումերական երկաթագիր

Աթենք, Միջնաբերդ

ԲԱՌԱՐԱՆ

ՇՈՒՄԵՐ– հնագույն պետություն Միջագետքի տարածքում:

ՄԻՋԱԳԵՏՔ – տարածք Տիգրիս և Եփրատ գետերի միջև, ներկայիս Իրաքի տարածքում:

ՊՈԼԻՍ – հունական քաղաք-պետություն:

ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ – ժողովրդավարական կառավարման ձև, երբ որոշումների ընդունման գործընթացի մեջ ներգրավված են անմիջապես բոլոր քաղաքացիները:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՐՁԸ

ԲԱՌԱՐԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ - ենթադրվում են Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրները:

ԱՆԳԼՈՍԱՔՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ – անգլալեզու երկրներ՝ ԱՄՆ, Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա և այլն:

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ - կառավարման կենտրոնացում մեկ կենտրոնում՝ տեղական ինքնակառավարման սահմանափակման հաշվին:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ - կառավարման համակարգ, երբ հանրային իշխանության մի շարք գործառույթների իրականացման իրավունքը փոխանցվում է ինքնակառավարման մարմիններին:

ԽԱՐՏԻԱ – հասարակական-քաղաքական նշանակության որոշ փաստաթղթերի անվանում՝ հռչակագիր բառի հոմանիշ:

Արևմտյան երկրներում ինքնակառավարման ժամանակակից համակարգերի և պետության ժողովրդավարական կազմակերպման հիմքը դրվում է միջնադարում և վերջնականապես ձևավորվում XIX դարում: Բացի այդ, յուրաքանչյուր առանձին պետությունում կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման միջև հարաբերությունների տարբեր մոդելներ են ձևավորվում: Հասարակական կառավարման կառույցների ձևավորումն այդ երկրներում տեղի է ունեցել տեղական, պատմական, մշակութային, քաղաքական և այլ գործոնների ազդեցությամբ, ինչը հանգեցրել է հասարակական մոդելների և մեխանիզմների բազմազանության՝ սկսած տեղական ինքնակառավարման մարմիններին լայն իրավունքների շնորհմամբ (առավելագույն **ապակենտրոնացում**), ավարտած պակաս ապակենտրոնացված (համեմատաբար **կենտրոնացված**) համակարգի գոյությամբ: Առաջին խմբին կարող ենք վերագրել **Անգլոսաքսոնյան** երկրները (ԱՄՆ, Կանադա և այլն) և Շվեյցարիան, իսկ երկրորդին՝ Ֆրանսիան:

Չնայած նման բազմազանությանը, Արևմուտքի կառավարման կառույցների զարգացման մեջ ակնհայտորեն նկատվում է կենտրոնական իշխանության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին ավելի ու ավելի շատ իրավունքների փոխանցման միտում: Պետությունն անմիջականորեն չի միջամտում տեղական ինքնակառավարումների ամենօրյա գործունեությանը: Միևնույն ժամանակ, այն պահպանում է վերահսկողության իրավունքը, որպեսզի որևէ ինքնակառավարման գործողություն հակասության մեջ չլինի ընդհանուր ազգային օրենսդրության հետ:

Ռատուշա – Եվրոպայի որոշ երկրներում քաղաքի ինքնակառավարման մարմին, նաև՝ շենք, որտեղ տեղակայված է այս մարմինը:

Այս առումով, եվրոպական երկրները, ԱՄՆ-ը և մի շարք այլ զարգացած երկրներ բավական զարգացած են: Դրա ապացույցն է **«Եվրոպական խարտիա տեղական ինքնակառավարման մասին»** փաստաթղթի ստեղծումը, որը ստորագրվել է 1985 թվականին, Ստրասբուրգում: Խարտիան սահմանում է ինքնակառավարման գործունեության երաշխիքները, և այս սկզբունքների ընդունումը պարտադիր է բոլոր երկրների համար:

ՆԱԽԱԳԻԾ

I փուլ.

Ձեր հարևանության կամ ընկերների շրջանում անցկացրե՛ք հարցում «Ի՞նչ է ինքնակառավարումը» թեմայով: Հարցվողներին միայն երկու հարց առաջադրեք. 1. Ի՞նչ է ինքնակառավարումը, 2. Ի՞նչ նշանակություն ունի ինքնակառավարումը երկրի զարգացման համար: Ստացած պատասխաններն ամփոփե՛ք և հաջորդ դասի համար պատրաստե՛ք փոքր շնորհանդես, որում ներկայացված կլինեն ձեր հարցվածների հայացքները: Բացի այդ, անցկացրե՛ք հարցում և բացահայտե՛ք ձեր համայնքում առկա խնդիրները: Նյութը հաջորդ դասի համար պատրաստե՛ք քննարկման:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.1

1. Ծանոթացե՛ք Իլյա Ճավճավաձեի «Կյանքը և օրենքը» հոդվածին, որտեղ հեղինակը վերլուծում է ինքնակառավարման նշանակությունը հասարակության զարգացման համար: Իլյան համարում է, որ պետական կառավարման մեջ ինքնակառավարման սկզբունքների ներմուծումը երկրի առաջընթացի հիմնական ցուցանիշն է:
2. Հոդվածի յուրաքանչյուր հատվածը կարդալուց հետո պատասխանե՛ք հարցերին:

ԿՅԱՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ

Իլյա Ճավճավաձեի «Կյանքը և օրենքը» հոդվածաշարը տպագրվել է 1877-1881 թվականներին, «Իվերիա» թերթում: Առաջարկում ենք հատված հոդվածների այն մասերից, որոնք վերաբերում են ինքնակառավարման հարցերին:

ԻԼՅԱ ՃԱՎՃԱՎԱՁԵ (1837-1907) – վրաց գրող, բանաստեղծ, հրապարակախոս, քննադատ և լուսավորիչ: Իլյա Ճավճավաձեն XIX դարի վրաց գրականության և հասարակական կյանքի կենտրոնական դեմքերից մեկն է:

Բնությունը որքան էլ հարստությամբ զարդարի որևէ երկրամաս կամ երկիր, որքան էլ լավ կլիմա պարգևի մարդուն ապրելու, և արգավանդ հող՝ ապրուստի համար, միևնույն է, մարդկանց բարեկեցությունն այլ կողմից ևս աջակցության կարիք ունի: Մարդուն բավականաչափ չի կարողանա օգնել ո՛չ օդի մաքրությունը, ո՛չ հողի արգավանդությունը, ո՛չ ամեն ինչ անելու կարողությունը, եթե մարդկանց միջև բարյացակամորեն սահմանված և հստակ որոշված չեն փոխադարձ իրավունքները և պարտականությունները: Մարդկանց գոհունակության, ժողովուրդների բարեկեցության համար վերջինս ավելի անհրաժեշտ պայման է, քան երկրագնդի վրա որևէ այլ բան:

Շոտլանդացի լեռնեցին շրջապատված է ինքնամփոփ, աղքատ, ոչ արգավանդ բնությամբ: Նա ժրաջան և վաստակած աշխատանքի արդյունքում է բնությունից ստանում այն մի պատառ հացը, որ տալիս է իր ընտանիքին՝ ապրուստի համար: Նա անձնուրացաբար, իրեն չխնայելով օր ու գիշեր պայքարում է բնության դեմ, և այս ճանապարհով ձեռք բերած ամեն մի կտոր հացը նրա ջանքերի ու աշխատասիրության արգասիքն է: Անկախ նրանից, որ այսպես է մթնում և լուսանում նրա օրը, նա ավելի երջանիկ է և բավարարված, քան պարսիկը,

ում ճակատագիրը պարգևել է ավելի լավ երկիր՝ ապրելու և գոյությունը պահպանելու համար: Մեկն ամբարտավան է, համարձակ, ազատ, վճռական, իսկ մյուսը՝ ինքնամփոփ, ուժասպառ, խրտնած ու ոտնահարված: Մեկը հույսով լի առաջ է նայում, և յուրաքանչյուր քայլը նրան տանում է դեպի վաղվա անպարտելիություն, երկրորդը՝ վիատ է, անընդհատ վախով հետ է նայում և երեկվա, խաղաղ անցկացված օրն է երազում՝ չհավատալով վաղվա օրվան: Մեկը հոգով և մարմնով ամեն օր հաջողության մեջ է, թեպետ աղքատ բնությամբ է շրջապատված, երկրորդը և՛ հոգով, և՛ մարմնով սպառվում է, թեպետ նրա շուրջ բնությունն առատ է ու հարուստ: Ի՞նչն է դրա պատճառը: Այն, որ երջանիկ շոտլանդացին գիտի. «Իմն այստեղ ավարտվում է, և ուրիշինն այստեղ է սկսվում», իսկ դժբախտ պարսիկը ո՛չ իրենն է հասկանում, ո՛չ էլ ուրիշինը: Ինչն ուրիշինն է՝ իմ պարտականությունն է, ինչն իմն է՝ դա իմ իրավունքն է:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է ըստ Իլյայի շոտլանդացիների հաջողության գաղտնիքը: Հիմնավորե՛ք:
2. Իլյայի կարծիքով ի՞նչ է անհրաժեշտ ժողովուրդների բարեկեցության համար:
3. Իլյան ի՞նչն է համարում պարսիկների անհաջողությունների պատճառը:
4. Ինչպե՞ս է բացատրում Իլյան պարտականությունը և իրավունքը: Դատողություն ծավալե՛ք:

Յուրաքանչյուր պետություն, գոնե այս կամ այն չափով կարգի եկած, մասերի է բաժանված, որ հեշտ լինի նրան տերություն անելը և նրա մասին հոգ տանելը...

...Երկրագնդի վրա կառավարումը երկու տիպի կարգ և կառուցվածք է ունեցել և ունի: Եթե որևէ տեղ որևէ փոփոխություն կա, ուրեմն հնարավոր չէ, որ կառավարումը կամ դեպի մեկը, կամ դեպի մյուսը չլինի հակված: **Կառավարման մի տեսակն այն է,** երբ և՛ պետության, և՛ հասարակության համար անհրաժեշտ գործերը ինքը՝ կառավարությունն է տնօրինում ամեն տեղ և ամեն մասում: Այս դեպքում կառավարությունը բոլոր գործերի նախաձեռնողը և ղեկավարն է, ամեն տեսակ գործ անողը, ամեն ինչի մասին հոգացողը և վարողը, այնպես որ, ամեն ինչ նրանից է սկսվում և ամեն ինչ հենց նրան էլ հանգում է: Այսպիսի կառավարման համար նա ունի իր սեփական պաշտոնավոր մարդկանց խումբը, որոնց ինքն է ընտրում, ինքը նշանակում, ինքն ազատում, և որոնք միայն նրա նկատմամբ են պատասխանատու: Այսպիսի կառավարումը **կենտրոնացում** է կոչվում:

Երկրորդ տիպի կառավարումն այն է, երբ կառավարության ձեռքում են միայն ամբողջ պետական նշանակության գործերը, իսկ մնացած բոլորը հասարակության ձեռքում են, այն էլ այնպես, որ ամեն մաս ունի իր տեղական գործերը՝ ամբողջությամբ իրեն վստահված: Այս հասարակական անհրաժեշտության գործերը, բաշխված տեղական մարմինների վրա, անպայման տնօրինվում են տեղական պաշտոնավորների միջոցով, որոնց ընտրում է հենց տեղի բնակիչների հասարակությունը, և որոնք պատասխանատու են նույն հասարակության նկատմամբ: Այսպիսի կառավարումը կոչում են **ինքնակառավարում** (ապակենտրոնացում), քանի որ այս դեպքում միևնույն պետության յուրաքանչյուր մաս իր սեփական գործն է տնօրինում, ինքը տերություն անում, և ինքը կառավարում: Մի խոսքով, այսպիսի կառավարման հիմնական էությունն այն է, որ տեղական գործերը պետք է հենց տեղի բնակիչների կողմից կառավարվեն:

ՀԱՐՑԵՐ

5. Կետերով գրե՛ք տարբերությունները Իլյայի կողմից բնութագրված կենտրոնացված և ինքնակառավարմամբ իրականացվող պետական կառավարումների միջև:

Այսպիսի կառավարումն ավելի է նպաստում երկրի բարեկեցությանը. ժողովրդին զգոնացնում է, բացում նրա խելքն ու գիտակցությունը, քանի որ արթնացնում է հասարակական հոգածության համար պատրաստակամությունը և նրան վարժում հասարակական գործերի համար: Նման կառավարումն այնպիսի հատկություն ունի, որ մարդը, որտեղ էլ կամենա, ամենուրեք և ամեն տեսակ մարդկանց մեջ կկատարի իր գործը և կստանա իր պտուղը: Այնտեղ, որտեղ այդպիսի կառավարումը ճանապարհ և տեղ է ունեցել, ամենուրեք մարդը ծաղկեցրել է կյանքը և թեթևացրել պետության համար կառավարման ծանր բեռը:

Մի գրող ասել է. «Պատմությունն ապացուցում է, որ ինքնակառավարումը ամենալավ դեղն է ժողովրդի բոլոր տեսակի կարիքների դեմ, որտեղ էլ տնկեք այն, աճում է՝ և՛ Անգլիայում, որտեղ միշտ կարգերի հիմքը ազնվականությունն է եղել, և՛ Ամերիկայում, որտեղ անսահման ազատությունն է ընդունված՝ որպես պետության անկյունաքար: Միանման բարիքով և երախտապարտությամբ է գործում և տեղ ունի նա և՛ այնպիսի փոքրիկ երկրում, ինչպիսին Շվեյցարիան է (739 քառակուսի միլ է), և՛ այնտեղ, որտեղ այնպիսի անծայրածիր անբնակ դաշտեր են, ինչպիսին Հյուսիսային Ամերիկան է, նաև այնտեղ է բարյացակամ և յուրացված, որտեղ այնպիսի հեղինակավոր քաղաքակրթություն է, ինչպիսին Լոնդոնում է, և՛ այնտեղ, որտեղ այնպիսի անգրագետ ժողովուրդներ են, ինչպիսիք Կանադայում, Ավստրալիայում և Անգլիայի մյուս գաղութներում են»...

ՀԱՐՑԵՐ

6. Դատողություն արե՛ք, թե ինչ դրական կողմեր են բնորոշ ինքնակառավարմանը:

Չնայած այսպես է, սակայն այդ ինքնակառավարումը երկրագնդի վրա շատ թշնամիներ ունի, շատերին անտեղի զրկում է քնից և հանգստից: Ասում են, որ վտանգավոր է հասարակությանն այդ իրավունքը շնորհելը. կսկսվի խառնաշփոթ, որը կտարածվի և դուրս կգա ենթակայությունից:

Այս ինքնակառավարման սահմանման համար դժվարն այն չափը գտնելն է, որով սովորաբար ընդհանուր պետական կարիքների գործերը վերագրվում են պետության կառավարմանը, իսկ հասարակականները՝ տեղական հասարակությանը: Դժվար է գտնել իսկական սահմանն այս երկուսի միջև, քանի որ նույնիսկ բնությամբ այս երկու կարիքների թելերը կապված և միահյուսված են իրար եթե ոչ ամեն ինչում, ապա գոնե շատ բաներում: Սակայն ինքնակառավարումը գովելու համար գոնե պետք է ասենք, որ այստեղ չափն անցնելը եթե օգուտ չի բերում, ապա նրան այնպիսի վնաս չի հետևում, ինչպես այն դեպքում, երբ պետությունը՝ կառավարությունը, գերազանցված չափով է կյանքում տեղ զբաղեցնում...

ՀԱՐՑԵՐ

7. Ինչ եք կարծում, հնարավո՞ր է արդյոք, որ ինքնակառավարման ներմուծումը բացասաբար ազդի երկրի զարգացման վրա: Հիմնավորե՛ք պատասխանը:

Տեղական ինքնակառավարումը և գերագույն կառավարությունը ոչ միևնույնն են, ոչ էլ՝ միմյանց հակասող և միմյանց հետ մրցակցող: Միևնույն երկրում, միևնույն պետության մեջ խաղաղ համագոյակցում են նրանք և գործում՝ ի շահ մեկը մյուսի...

...Գերագույն իշխանության անմիջական նշանակման իմաստն այն է, որ ամեն հպատակի ցավը հասկանա, նրան համապատասխանաբար դարմանի, յուրաքանչյուրի համար բացի բարիքի և բարեկեցության ճանապարհը: Դրա համար անհրաժեշտ է, որ գերագույն կառավարությունը անկեղծ, անաչառ, ճշտորեն գիտենա ամեն կողմի իսկական իրավիճակը, նրա լավն ու վատը, որպեսզի որտեղ հնարավոր է օգնել, օգնի, սատարի: Պարզ է, որ գերագույն կառավարությունն ինքը, առանց ուրիշի օգնության չի կարող տեսնել այն, ինչ կատարվում է ամենուր, ո՛չ կարող է լսել, ո՛չ էլ օգնության ձեռք հասցնել...

...Գերագույն կառավարությունը, որպես իր դիտորդ, ծառայող և տեղական գործերի վարիչ, նշանակում է տեղի բնակիչներին: Նրանք ավելի լավ գիտեն իրենց վիճակը, ավելի լավ գիտեն իրենց կարիքները, ավելի լավ կարող են իրենց խնամել, տերություն անել իրենց գործերին: Այս դեպքում, մի կողմից՝ ամեն կողմի իսկական կարիքները, ցավը, անկեղծ և ճշմարիտ նկրտումները հասնում են կառավարությանը, մյուս կողմից՝ գերագույն կառավարության ընդհանուր հոգածությունը միատեսակ սրտացավությամբ, միևնույն շնորհով հասցվում է յուրաքանչյուր երկրամաս, հարմարեցվում նրան և սփռվում այնտեղ:

ՀԱՐՑԵՐ

8. Ըստ Իլյայի, ինքնակառավարումը կենտրոնական իշխանության մաս է հանդիսանում, թե՞ առանձին համակարգ է, որը համագործակցում է կենտրոնական իշխանության հետ:

9. Ըստ Իլյայի, ի՞նչ առավելություն ունի կենտրոնական իշխանության համար երկրի կառավարման մեջ ինքնակառավարման ներմուծումը:

...Այստեղից պարզ է դառնում, թե որտեղ պետք է անցնի սահմանը գերագույն կառավարության և ինքնակառավարման միջև: Գերագույն կառավարությունը, ինչպիսին էլ այն լինի, համընդհանուր գործերի մասին հոգ տանողն ու արարողն է, այսինքն՝ այն գործերի ոչ միայն յուրաքանչյուր մասի, այլև յուրաքանչյուր հպատակի (վրացահպատակի, վրաց պետության հպատակի) միանման և միաբնույթ կվերաբերի և որոնք ընդհանուր, համընդհանուր բարեկեցությանը հայտնի են:

Նման գործերը պատկանում են համընդհանուր օրենսդրության վարույթի, համընդհանուր ֆինանսների (մուտք-ելք) շարժմանը և համընդհանուր բանակ ունենալուն: Այս ամենն անձեռնմխելի պատկանելությունն են գերագույն կառավարության, և ինքնակառավարումը, որպես մասնավոր վարչություն, այս գործերի մեջ ձայն չունի, նա ենթարկվում է այն ամենին, ինչը տնօրինվում, դասավորվում և սահմանվում է գերագույն կառավարությունից: Ինքնակառավարումն այս դեպքում ստորակարգն է գերագույն կառավարության և ընդհանուր օրենքի պահապանը և կատարողն է տեղում:

Այն, ինչը պետական ընդհանուր իրավիճակին չի պատկանում, **ինքնակառավարման** անվիճելի պատկանելությունն է: Ինքնակառավարումն իր տեղում բոլոր տնային գործերի տնօրինողն է և սատարողը, բոլոր ընդհանուր պետական ծախսերը և աշխատանքը տեղի բնակիչների միջև բաշխողը, տեղի հասարակության կարգ ու կանոնը դասավորողը, նրա բարոյականության, պատվի, գույքի, կրթության, ընդհանրապես, բարեկեցության մասին

հոգացողը: Այս ամենը կատարողն է այնչափ, որչափ որ այն վերաբերում է իր վարչության շրջանակում բնակվողներին մասնավորեցված և չի հակասում ընդհանուր պետական օրենքին և կարգադրությանը: Այստեղից երևում է, որ ինքնակառավարումը մի կողմից տեղական գործերը դասավորողն է և կարգավորողը, մյուս կողմից՝ գերագույն կառավարության իշխանական մարմին է...

ՀԱՐՑԵՐ

10. Լրացրե՛ք T դիագրամը. ձախ կողմում գրե՛ք գերագույն իշխանության գործառույթները, աջ կողմում՝ ինքնակառավարման գործառույթները:

11. Իլյայի կարծիքի ամրապնդման համար բերե՛ք լրացուցիչ փաստարկներ ձեր ամենօրյա կյանքից:

Ինքնակառավարման կարևորագույն հիմքերն են.

1. Ձայնը և ընտրելու իրավունքը պետք է շնորհվի յուրաքանչյուր տեղական բնակչի, ով չափահաս է: Այսպիսով, յուրաքանչյուր պարտականության մեջ պետք է լինի յուրաքանչյուր բնակչի բաժինը:
2. Տեղական վարչության ստորադրյալներ պետք է լինեն բոլորը, ովքեր ապրում են վարչության սահմաններում: Այստեղ, ինչպես առաջին դեպքում, կոչումների միջև բաժանում և սահմանազատում դնելը վնասակար է և հակասում է ինքնակառավարման էությանը:
3. Տեղական դատավորները, նաև ծառայողները պետք է ընտրվեն տեղական բնակիչներից:
4. Յուրաքանչյուր տեղական պաշտոնատար անձ պատասխանատու պետք է լինի հասարակական իրավունքի և օրենքի, այլ ոչ թե իր ղեկավարների նկատմամբ:

...Մենք կարծում ենք, այն, ինչ ասացինք, դա էլ էր բավական փաստաթուղթ, որ վերանայվի այս հարցի վերաբերյալ ամեն տեսակ օրենսդրություն, եթե որևէ մեկի համար ցանկալի է գյուղի բարեկեցությունը: Իսկ ո՞ւմ համար դա ցանկալի չպիտի լինի: Փաստ է, որ միայն գյուղը, որպես վերջին օղակ բարդ շղթայի, չի կարող պահել ինքնակառավարում, եթե միայն գյուղում սկսվի, հենց գյուղում էլ կդադարի: Գյուղին գավառը կհետևի, գավառին՝ նահանգը...

...Այժմ ասենք, որ մեր ժողովուրդն իսկապես անպատրաստ է: Ուրեմն՝ ինչ, ով անպատրաստ է, մինչև կյանքի վերջ այլևս չպիտի՞ պատրաստվի: Ի՞նչն է պատրաստում ժողովրդին: Սովորելը, վարժվելը, փորձը, այն գործին տեղյակ պահելը, ինչին անհրաժեշտ է պատրաստվել: Մարդու ձեռ ու ոտը կապում եք և ասում՝ սովորիր մաքառել, ժողովրդին դատավոր ընտրելու կամք չենք տալիս, սակայն ասում ենք՝ սովորի՛ր լավ դատավորներին տարբերել: Սա նման է նրան, թե՝ սովորի՛ր լող տալ, սակայն ջուրը մի՛ մտիր, ճանապա՛րհ անցիր, սակայն տնից ոտքդ դուրս մի՛ դիր: Այս հրաշքը ժողովուրդը չի կարող կատարել... Ժողովրդին անպայման անհրաժեշտ է, որ իր ամենօրյա մանր գործերի համար, որքան հնարավոր է մոտակայքում, ունենա հաշտարար դատավոր...

ՀԱՐՑԵՐ

12. Ըստ Իլյայի, որո՞նք են ինքնակառավարման հիմնական հիմունքները:

13. Ինչո՞ւ է Իլյան համարում, որ ինքնակառավարման ներմուծումը անհրաժեշտ է, չնայած նրան, որ, ոմանց կարծիքով, հասարակությունն անպատրաստ է դրա համար:

ԹԵՄԱ 2

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԹԵՄԱ 2

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Եվրամիության դրոշը

Վրաստանի դրոշը

Վրաստանում, ողջ մնացած աշխարհի նման, ինքնակառավարումը սկսվում է հնագույն ժամանակներից: Մինչև պետությունների ստեղծումը և դրանից հետո ևս բնակավայրերում, կիրճերում, համայնքներում գոյություն ուներ հասարակության կողմից ընտրված իշխանություն (ավագներ, երեցներ, աղսակալներ, տիրացուներ և այլն):

Հնագույն շրջանում և միջին դարերում քաղաքներում ինքնակառավարման ավելի բարդ համակարգ է ստեղծվում: XII դարում քաղաքները ղեկավարում էին ամիրաց-ամիրները (քաղաքի կառավարիչները), որոնց ենթարկվում էր պաշտոնյաների ողջ անձնակազմը (իրավապահներ, տեղական տուրքեր հավաքողներ և այլն): Ավելի ուշ քաղաքները ղեկավարում էին թագավորի կողմից նշանակված մովրովները (օրինակ, Թբիլիսիի ղեկավար էր մեծ մովրով Գիորգի Սաակաձեն):

Ռուսական կայսրության կողմից Վրաստանի զավթումից հետո քաղաքներում ձևավորվեց եվրոպական կառավարման ոճը: 1840 թվականին Թբիլիսին, իսկ 1870-ական թվականներից՝ Քութաիսին, Գորին, Ախալցիխեն, Փոթին, Բաթումին, Թելավին, Սիղնաղին, Ախալքալաքը, Օզուրգեթին, Սուխումին և այլ քաղաքներ աստիճանաբար ինքնակառավարման անցան: Քաղաքացիները ղեկավարում էին քաղաքացիների կողմից ընտրված *խորհրդատուների մարմինները:* Քաղաքներն ու նահանգները ղեկավարում էին շատ հայտնի անձինք (Թբիլիսիում՝ Դմիտրի Ղիփիանին, Փոթիում՝ Նիկո Նիկոլաձեն, Զուգդիդիում՝ Ռաֆիել Էրիսթավին և այլք):

Չնայած Ռուսական կայսրության գործադրած ճնշմանը՝ նրանք շատ բան կարողացան անել (օրինակ՝ Թբիլիսին սեփական միջոցներով կառուցեց ֆունիկուլյորը, ստեղծեց ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, լույսեր անցկացրեց և լուսավորեց Թբիլիսիի փողոցները և այլն):

Իսկ գյուղերում բնակչությունն ընտրում էր *գյուղական բնակավայրերի հանրային կառավարում,* որոնք դպրոցներ էին հիմնադրում, ճանապարհներ կառուցում և բարեկարգում

բնակավայրերը:

1919 թվականին Վրաստանի ժողովրդավարական հանրապետությունում (1918-1921) առաջին անգամ անցկացվեցին ինքնակառավարման համընդհանուր ընտրություններ: Երկրում ստեղծվեց երկմակարդակ ինքնակառավարում՝ վերին մակարդակ՝ գավառներ (ընտրություններ անցկացվեցին 20 գավառներում, պատրաստվում էր ևս 5 գավառում) և ստորին մակարդակ՝ քաղաքներ և համայնքներ (համակարգն ուժի մեջ մտավ 31 ինքնակառավարվող քաղաքում և 356 համայնքում, պատրաստվում էր այն տարածքներում, որոնք հետագայում միացան Վրաստանին՝ 12 քաղաք և 100-ից ավելի համայնք): Ինքնակառավարումները սկսեցին զարգացնել տնտեսական, կրթական և առողջապահական համակարգերը՝ բացվեցին դպրոցներ, հիվանդանոցներ, գործարաններ, կառուցվեց երկաթուղին և այլն (http://droa.ge/?p=26188): Ցավոք, այս գործընթացը դադարեցվեց Վրաստանում խորհրդային ագրեսիայի (1921 թվականի փետրվար) հետևանքով, և մինչև երկրի անկախության վերականգնումը՝ 1991 թվականը, այլևս չի վերականգնվել:

1991 թվականին Վրաստանը, Անկախության ակտի ընդունմամբ, հրապարակայնորեն ցանկություն հայտնեց կառուցելու ժողովրդավարական պետություն: Ժողովրդավարության հաստատումը շարունակում է մնալ նոր վրացական պետության կարևորագույն խնդիրը:

Այդ նույն տարում Վրաստանում անցկացվեցին առաջին տեղական ինքնակառավարման ընտրությունները: Սա ապակենտրոնացման գործընթացի սկիզբն էր և տեղական ինքնակառավարման հիմնադրման առաջին փորձը: Սակայն երկրում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրների պատճառով տեղական ինքնակառավարման մարմինները չկարողացան գործել:

1995 թվականի օգոստոսի 24-ին ընդունած Վրաստանի Սահմանադրությամբ, վերջապես տեղի ունեցավ տեղական ինքնակառավարման հռչակում: Երեք տարի անց, 1998-ին անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ Վրաստանի քաղաքներում և գյուղերում: Իրականում սա, ըստ էության, առաջին քայլերն էին մեր երկրում տեղական ինքնակառավարում ստեղծելու ուղղությամբ: Չնայած նրան, որ 1998 թվականին ընտրված ինքնակառավարման գործունեությունն օրենսդրական դաշտի և ինստիտուցիոնալ կազմակերպման տեսանկյունից բազմաթիվ հիմնախնդիրներ ուներ, միևնույն է ինքնակառավարման զարգացման առումով այն կարևոր փուլ էր երկրում: Հենց այդ շրջանում հիմք դրվեց ինքնակառավարման հետ բնակչության համագործակցության ավանդույթին:

2002 թվականին Վրաստանը ստորագրեց **«Տեղական Ինքնակառավարման Եվրոպական խարտիան»,** իսկ 2004 թվականի հոկտեմբերի 26-ին Վրաստանի Խորհրդարանը **վավերացրեց** այն: Ինչպես վերը նշվեց, Խարտիան ստեղծվել է 1985 թվականին և արտացոլում է ինքնակառավարման ընդհանուր եվրոպական սկզբունքները: «Տեղական Ինքնակառավարման եվրոպական խարտիան» ստորագրել են եվրոպական 47 երկրներ:

Խարտիայի վավերացումից հետո Վրաստանը ստանձնել է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների կատարման միջազգային պարտավորություն:

Եվրոպայի խորհրդի շենքը Ստրասբուրգում

ԲԱՌԱՐԱՆ

ՎԱՎԵՐԱՑՈՒՄ (ռատիֆիկացիա) – պետական գերագույն իշխանական մարմնի կողմից միջազգային պայմանագրի հաստատում, որը ստորագրված է այս պետության լիիրավ ներկայացուցչի կողմից:

ԲԱՌԱՐԱՆ

ՍՈՒԲՍԻԴԻԱՐՈՒԹՅՈՒՆ
- ինքնակառավարման եվրոպական խարտիայի կարևորագույն սկզբունքներից մեկը, որի համաձայն իրավունքների և պարտականությունների իրականացումը տեղի է ունենում իշխանության այն մարմնի կողմից, որն ամենից մոտ է կանգնած քաղաքացիներին:

Տեղական ինքնակառավարման զարգացման՝ բարեփոխումների մի նոր փուլ մեր երկրում սկսվեց 2013 թվականից: 2014 թվականին Վրաստանի Խորհրդարանն ընդունեց նոր օրենք՝ **«Տեղական ինքնակառավարման օրենսգիրք»:** Այս պահի համար Օրենքը միտված էր արմատական փոփոխությունների իրականացման, որոնք փուլերով, մինչև 2019 թվականը պետք է իրականացվեին:

Բոլոր ժողովրդավարական երկրների (այդ թվում՝ Վրաստանի) կողմից տեղական ինքնակառավարման գործունեության կարևորագույն, հիմնարար սկզբունք է ճանաչված **սուբսիդիարության սկզբունքը.** այն ամենը, ինչն անելը հնարավոր է իշխանության ստորին մակարդակում, չի կարելի իրականացման փոխանցել իշխանության վերին մակարդակին: Համաշխարհային փորձը ցույց է տվել, և Եվրոպական խարտիան ևս համարում է, որ տեղական իշխանությունն ավելի լավ գիտի տեղական կարիքները և ի զորու է շատ ավելի ադեկվատ պատասխանել, քան կենտրոնական իշխանության ներկայացուցիչները, որոնք հեռու են առանձին բնակավայրերում ապրող մարդկանցից և, բացի այդ, զբաղված են բազմաթիվ ընդհանուր-պետական գործերով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.

ԱՂԲՅՈՒՐ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

Հոդված 2. Տեղական ինքնակառավարման սահմանադրական և իրավական հիմունքները

Տեղական ինքնակառավարման սկզբունքը կճանաչվի ներքին օրենսդրությամբ և, հնարավորության դեպքում՝ Սահմանադրությամբ:

Հոդված 3. Տեղական ինքնակառավարման հայեցակարգը

1. Տեղական ինքնակառավարումը նշանակում է իշխանության տեղական մարմինների՝ օրենքի շրջանակներում հասարակական գործերի նշանակալի մասը՝ իրենց պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերին համապատասխան կարգավորելու և վարելու իրավունք և հնարավորություն:

Հոդված 4. Տեղական ինքնակառավարման իրավասությունների ոլորտը

3. Որպես օրենք, պետական իրավունքների և պարտականությունների իրականացումը տեղի է ունենում իշխանության այն մարմնի կողմից, որն ամենից մոտ է քաղաքացիներին: Պարտականությունների բաժանում այլ մարմնի հետ պետք է տեղի ունենա համապատասխան խնդիրների ծավալի և բնույթի, նաև տնտեսության և արդյունավետության պահանջների նախատեսմամբ:

Թբիլիսիի զինանշանը

ԱՂԲՅՈՒՐ 2. ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Ուժի մեջ է 2018 թվականի վերջին ընտրված Վրաստանի նախագահի կողմից երդում տալուն պես:)

Հոդված 7. Կետ 4.

Վրաստանի քաղաքացիները տեղական նշանակության հարցերը կարգավորում են ինքնակառավարման միջոցով՝ համաձայն Վրաստանի Օրենսդրության: Պետական իշխանության և ինքնակառավարվող միավորների իրավասությունների սահմանազատումը հիմնվում է սուբսիդիարության սկզբունքի վրա: Պետությունն ապահովում է **ինքնակառավարվող միավորի** ֆինանսական միջոցների համապատասխանություն **Օրգանական օրենքով** սահմանված ինքնակառավարվող միավորի իրավասություններին:

Սահմանադրության նոր խմբագրմամբ՝ ինքնակառավարման իրավունքները սահմանում է իններորդ գլուխը (Տեղական ինքնակառավարում):

ԱՂԲՅՈՒՐ 3. ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

(2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ)

Տեղական ինքնակառավարման օրենսգիրքը սահմանում է տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները, ինքնակառավարման մարմինների իրավասությունները, ստեղծման և գործունեության կանոնները, ֆինանսները և գույքը, հարաբերությունները քաղաքացիների, պետական իշխանության մարմինների և այլ իրավաբանական անձանց հետ, նաև ինքնակառավարման գործունեության պետական վերահսկման կանոնները:

Օրենսգիրքն ընդունել է Վրաստանի Խորհրդարանը 2014 թվականի փետրվարի 5-ին, և այն փոխարինել է մինչ այդ գործող «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքին:

Օրենսգիրքը միավորել է ինքնակառավարման բնագավառում գոյություն ունեցած մի շարք օրենքներ («Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի մասին», «Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության պետական վերահսկման մասին» և այլն) և ներմուծել է մի շարք նորություններ, որոնք միտված են տեղական ինքնակառավարման հզորացմանը՝ նրան լրացուցիչ իրավազորությունների և ֆինանսների տրամադրման միջոցով:

Տեղական ինքնակառավարման օրենսգիրքը հիմնվում է Վրաստանի Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայում» հռչակագրված սկզբունքների վրա: Ըստ Օրենսդրության, **«Տեղական ինքնակառավարումը ինքնակառավարվող միավորում գրանցված Վրաստանի քաղաքացիների իրավունքն է և հնարավորությունը, իրենց կողմից ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, Վրաստանի օրենդրությանը համապատասխան, որոշել տեղական նշանակության հարցեր»** (Հոդված 2):

Վրաստանի Սահմանադրությունը

ԲԱՌԱՐԱՆ

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՄԻԱՎՈՐ (մունիցիպալիտետ) - տեղական կառավարման պաշտոնական անվանում Վրաստանի օրենսդրությամբ: Ինքնակառավարվող միավորները երկու տեսակի են՝ ինքնակառավարվող քաղաք և ինքնակառավարվող համայնք:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ - օրենքների հետ կապված՝ գործում է հետևյալ **ստորակարգությունը՝** սահմանադրություն/ սահմանադրական օրենք, սահմանադրական համաձայնագիր, միջազգային պայմանագիր և համաձայնագիր, օրգանական օրենք, «սովորական» օրենք: Ստորին մակարդակի օրենքը հակասության մեջ չպետք է լինի դրանից բարձր գտնվող օրենքների հետ: («Նորմատիվ ակտերի մասին» Վրաստանի օրենք, հոդված 7):

Օրգանական օրենքն ընդունվում է այնպիսի կարևորագույն բնագավառների կարգավորման համար, որոնք Սահմանադրությամբ առանձնահատուկ են համարված և հենց Սահմանադրության մեջ է մատնանշված նման օրենքի ընդունումը, ի տարբերություն սովորական օրենքների, Օրգանական օրենքի ինչպես ընդունելը, այնպես էլ փոփոխելը բարդացված է: Օրինակ, եթե սովորական օրենքը կարող է ընդունել հասարակ մեծամասնությունը (150 պատգամավորից քննարկմանը մասնակցում էր 100-ը, և նրանցից 60-ն աջակցեց օրենքին), Օրգանական օրենքի քննարկման գործընթացը ժամկետներով երկարաձգված է, և դրա ընդունմանը պետք է աջակցի ցուցակային կազմի կեսից ավելին (150-ից առնվազն 76 պատգամավոր):

Այս նոր օրենսդրական ակտով սահմանվել են այն փոփոխությունները, որոնք արդեն իրականացվել են և հետագայում ևս պետք է իրականացվեն մեր երկրում. նոր՝ բնակչությանն ավելի մոտ գտնվող մունիցիպալիտետների ձևավորումը, մունիցիպալիտետներին լրացուցիչ իրավազորությունների և պետության ձեռքում առկա գույքի մի մասի փոխանցումը, ինքնակառավարումների սեփական եկամուտների աճը, բարձրալեռ և յուրօրինակ տարածքների զարգացմանն օժանդակումը, կառավարման գործընթացին քաղաքացիների մասնակցության լրացուցիչ մեխանիզմների ստեղծումը և այլն:

Վրաստանի քաղաքացիները տեղական ինքնակառավարման մարմին ընտրելու կամ իրենք տեղական ինքնակառավարման մարմնում ընտրվելու, ցանկացած պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն այն դեպքում, եթե բավարարում են Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված պահանջները: Նրանք իրավունք ունեն նաև ստանալ **հանրային տեղեկատվություն** տեղական ինքնակառավարման մարմիններից և նախապես ծանոթանալ նրա որոշումներին, մասնակցել դրանց քննարկումներին, պահանջել նախագծերի հասարակական լսումներ և այլն:

Կարևոր է նաև, որ բնակչությունը ճշգրտորեն իմանա, թե կոնկրետ ինչ ծառայություններ կարող է ստանալ տեղական իշխանությունից, իսկ վերջինս պետք է անի ամեն ինչ, որպեսզի իր կողմից մատուցված ծառայությունները տեղական կարիքներին համապատասխան լինեն:

Ինքնակառավարումը արդյունավետ է, երբ կենտրոնական և տեղական իշխանություններն ակտիվորեն համագործակցում են՝ ի շահ բնակչության բարեկեցության:

Տեղական ինքնակառավարման օրենսգրքի համաձայն, պետական իշխանությունն ընդունում է տեղական ինքնակառավարման հետ կապված օրենքներ, տեղական ինքնակառավարման զարգացման և նրան օժանդակելու նպատակով ընդունում է և հաստատում պետական ծրագրեր, նաև կարգավորում է բյուջեները, ապահովում տեղական ինքնակառավարման ֆինանսական անկախությունը և այլն:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ – պաշտոնական փաստաթուղթ (այդ թվում՝ գծագիր, մանրակաղապար, գծապատկեր, լուսանկար, էլեկտրոնային տեղեկատվություն, տեսա- և աուդիոձայնագրություններ) կամ հանրային հաստատությունում պահպանված, նաև ստացած հանրային հաստատության կամ ծառայողի կողմից՝ կապված ծառայողական գործունեության հետ, մշակված, ստեղծված կամ ուղարկված տեղեկատվություն: Բոլորը կարող են ծանոթանալ հանրային հաստատությունում առկա հանրային տեղեկատվությանը, եթե այն չի պարունակում պետական, կոմերցիոն կամ անձնական գաղտնիք: Հանրային հաստատությունը պարտավոր է ապահովել հանրային տեղեկատվության պատճենի մատչելիություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2.1

Դատողություն ծավալե՛ք ինքնակառավարման գործունեության ապահովման գործում կենտրոնական իշխանության դերի մասին (Տեղական ինքնակառավարման օրենսգիրք, հոդված 7): Քննարկե՛ք հետևյալ սկզբունքները.

- Ինքնակառավարման և պետության հարաբերությունը հիմնվում է փոխհամագործակցության վրա, կենտրոնական իշխանությունը տեղական իշխանության «ղեկավարը» չէ:

- Պետությունը պարտավոր է ստեղծել համապատասխան իրավական, ֆինանսատնտեսական և կազմակերպչական պայմաններ՝ ինքնակառավարումների գործունեությանն աջակցելու համար:
- Եթե պետությունը (կենտրոնական իշխանությունը) փոխում է ինքնակառավարումների հետ կապված օրենսդրությունը, այն պարտավոր է նախապես խորհրդատվություններ անցկացնել ինքնակառավարումների հետ:
- Ինքնակառավարումները, եթե նրանց իրավունքները ոտնահարվում են կենտրոնական իշխանության կողմից, իրավունք ունեն կենտրոնական իշխանության դեմ բողոքարկել դատարան:
- Ինքնակառավարումները, եթե նրանց իրավունքները ոտնահարվում են որևէ նոր օրենքով, իրավունք ունեն այդ փոփոխությունը բողոքարկել Սահմանադրական դատարանում:

Սահմանադրական դատարան, Բաթումի

ԲԱՌԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ – դատարան, որը քննարկում է օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը, օրինակ՝ եթե դուք համարում եք, որ որևէ մեկը ձեզ վնաս է պատճառել (ձեր վեճը մասնավոր անձի, որևէ կազմակերպության կամ պետական հաստատության հետ), ձեր իրավունքը պաշտպանելու համար դիմում եք սովորական դատարանի, որպեսզի այն օրենքի համաձայն որոշի, թե որ կողմն է ճիշտ:

Այն դեպքում, երբ դուք համարում եք, որ հենց օրենքն է ճնշում ձեզ (կամ օրենքը հակասում է այն իրավունքներին, որոնք Սահմանադրությամբ են երաշխավորված), դուք դիմում եք Սահմանադրական դատարան, որպեսզի նա պարզի, թե իսկապես հակասո՞ւմ է արդյոք օրենքը Սահմանադրությանը: Եթե պարզվի, որ դա այդպես է, այդ դեպքում նման օրենքը պետք է փոխվի:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2.2

Համացանցով կամ ձեր շրջապատի մարդկանց օգնությամբ տեղեկություններ հայթայթեք ձեր համայնքի, քաղաքի, ավանի, գյուղի ինքնակառավարման պատմությունից (ինչ գործունեություն էր իրականացնում այն, ով էր կառավարում ձեր ինքնակառավարման միավորը, ինչով են տարբերվում ձեր ինքնակառավարման կողմից իրականացված ակտիվությունները և դրանց արդյունքները այլ ինքնակառավարումների կողմից անցկացվածներից):

ԹԵՄԱ 3

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԹԵՄԱ 3

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ինքնակառավարման գոյությունը ժողովրդավարության հիմնարար սկզբունքն է:

Տեղական ինքնակառավարումը լիարժեքորեն միայն այն ժամանակ է գործում, երբ նրան աջակցում է կենտրոնական իշխանությունը և ողջ հասարակությունը:

Ինքնակառավարման պարտադիր հատկանիշներն են՝ սեփական տարածքի և վարչական կենտրոնի, օրենքով սահմանված իրավազորությունների (որոնց ուրիշ ոչ ոք չի կարող միջամտել), սեփական ներկայացուցչական և գործադիր կառույցների, անկախ/սեփական ֆինանսների և գույքի (սեփականության) առկայությունը: Եթե դրանցից որևէ մեկը բացակայում է, Եվրոպական խարտիան նման ձևավորումը որպես ինքնակառավարում չի քննարկում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.1

Հավելված 1-ում ծանոթացե՛ք Տեղական ինքնակառավարման օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ կետին, որտեղ տրված են տեղական ինքնակառավարման՝ մունիցիպալիտետի հատկանիշները: Անվանե՛ք, ըստ ձեզ, դրանցից երեք ամենակարևորները: Ձեր դիրքորոշումն ամրապնդե՛ք փաստարկներով:

Ավագանու նիստ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարումը, որպես երկրի կառավարման համակարգի մի տարր, կարևոր գործառույթ ունի երկրի հասարակական կյանքի կարգավորման մեջ:

Ընդհանուր առմամբ, տեղական իշխանությունը երեք հիմնական գործառույթ ունի.

1. Հանրային ծառայությունների մատուցում տեղերում:
2. Կայուն զարգացմանն օժանդակում:
3. Քաղաքացիական խաղաղության և կայունության ապահովում:

Քննարկենք այս երեք հիմնական գործառույթները:

1. Հանրային ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ է տեղական կարիքների բավարարում, այս գործընթացում բարձր արդյունքների նվաճում, քաղաքացիների համար հավասար մատչելիության ապահովում, գումարների արդյունավետ ծախսում: Իսկ գլխավոր և ամենաբարդ խնդիրը ամենահրատապ հիմնախնդիրների բացահայտումն է, ինչը, պարզ է, որ բնակչության հետ սերտ համագործակցություն է պահանջում: Ինքնակառավարման տեղական մարմինները պետք է ունենան բնակչությանը լսելու կարողություն և նրանց պահանջների նախատեսման հնարավորություն:

2. Կայուն զարգացմանն օժանդակումը տեղական ինքնակառավարման կարևորագույն գործառույթն է: Կայուն զարգացման հայեցակարգը տնտեսական զարգացման այնպիսի ձև է ենթադրում, որն ապահովում է հասարակության բարեկեցություն կարճ, միջին և, որ ամենագլխավորն է, երկար ժամկետով: Այն հիմնվում է սկզբունքի վրա, որի համաձայն արդիականության պահանջները պետք է այնպես բավարարվեն, որ վտանգ չստեղծվի ապագա սերունդների համար: Կայուն զարգացումը ենթադրում է պայմանների ստեղծում երկարաժամկետ տնտեսական զարգացման համար՝ բնապահպանական հարցերի նախատեսմամբ: Կայուն զարգացման մասին Կոպենհագենի համաշխարհային **գագաթաժողովն** (1995 թ.) ընդգծեց սոցիալական **սեգրեգացիայի** դեմ պայքարի կարևորությունը և հասարակական առողջության պահպանման անհրաժեշտությունը:

Կայուն զարգացման համար անհրաժեշտ է հողի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում (այն բանի կարգավորում, թե ով և ինչպիսի պայմանով, ինչ նպատակով է օգտագործում հողատարածքը), էներգիայի և այլ նյութերի արդյունավետ կիրառում, հողի, անտառային և ջրային ռեսուրսների այնպիսի օգտագործում, որ դրանք հետագայում ևս ապահովեն առողջ և արգասաբեր միջավայրի առկայությունը: Այսպիսի հարցերը զարգացած երկրներում (ԱՄՆ, Եվրոպա) օրենքով են կարգավորվում. երբ որևէ ընկերություն անտառահատում է սկսում (ինչն անհրաժեշտ է տնտեսական զարգացման և շինանյութի ապահովման համար), նրան հանձնարարվում է

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ - ծառայություն և ապրանք, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության կարիքներով, և որն ի զորու է մատուցել միայն հանրային (տեղական կամ պետական) իշխանությունը: Հանրային ծառայությունը ներառում է այնպիսի ոլորտներ, որոնք ընդհանրապես բոլորի համար են ստեղծում բարիք (ճանապարհաշինություն, լուսավորում, խմելու ջրի մատակարարում, դպրոցների ստեղծում և գործունեություն, քաղաքացիների անվտանգություն և այլն):

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ - բազմակողմանի միջազգային հանդիպում և խորհրդակցություն՝ բարձրագույն մակարդակով:

ՍԵԳՐԵԳԱՑԻԱ - խտրականության ծայրահեղ ձև: Նշանակում է օրենքի կամ սովորույթների հիմքի վրա էթնիկ խմբերի առանձնացում: Որոշակի էթնիկ կամ ռասայական խմբի մեկուսացում հասարակական կյանքից, խոչընդոտող իրավական կամ փաստական սահմանափակումների սահմանում այս խմբերի, նրանց անդամների նկատմամբ, հատուկ բնակավայրերում նրանց բնակեցում, տեղաշարժման սահմանափակում, հասարակական կյանքի ամենացածր աստիճանում հարկադրաբար պահում, կրթության բնագավառում առանձնացված ուսուցման ներմուծում և այլն:

հատած անտառի տեղում տնկիներ տնկել, որպեսզի նոր անտառ աճի և վնաս չհասցվի շրջակա միջավայրին:

3. Քաղաքացիական խաղաղության և կայունության ապահովում: Երկրի կառավարման, ամենօրյա որոշումների կայացման գործընթացի մեջ անհրաժեշտ է քաղաքացիների ներգրավվածություն: Եթե մեր երկրի բնակիչները հնարավորություն չունենան իրենք որոշելու, թե որն է նրանց համար ավելի կարևոր հարցը, և այդ հարցերը միայն կետրոնական իշխանությունը կարգավորի, կամ իրական կարիքների փոխարեն այլ հարցերի վրա կենտրոնացնեն ուշադրությունը, դա քաղաքացիների մեջ կավելացնի հուսահատության աստիճանը և մարդկանց վրդովմունքի պատճառ կդառնա: Այսպիսի վիճակը վտանգ կստեղծի իր՝ երկրի կայուն զարգացման գործընթացի համար և քաղաքացիների մոտ ագրեսիա կհրահրի, ինչը կարող է վերաճել ապակայունացման և վերջում՝ բռնի գործողությունների (հուզումներ, հեղափոխություններ):

Բացի այդ, չպետք է մոռանանք, որ Վրաստանում տարբեր էթնիկ ծագումով մարդիկ են ապրում, մեր երկիրը բազմազգ է: Որոշ տարածաշրջաններում ազգային փոքրամասնությունները բնակչության մեծամասնությունն են կազմում: Ցավոք, նրանք լավ չեն տիրապետում պետական լեզվին, այսպիսով, ոչ բավարար տեղեկություններ ունեն երկրում ընթացող իրադարձությունների մասին: **Քաղաքացիական խաղաղության և կայունության ապահովման համար** անհրաժեշտ է, որ ավելանա էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրումը և նրանց մասնակցությունը տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացին, նաև՝ էթնիկ փոքրամասնություններին համահավասար մատչելիություն ապահովվի ցանկացած բնագավառում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.2

Ծանոթացե՛ք ստորև տրված 4 դեպքերին և դատողություն արե՛ք, թե նրանցից յուրաքանչյուրում որ հիմնական գործառույթն էր իրականացնում կամ չէր իրականացնում ինքնակառավարման մարմինը:

1. Թեթրիծղարոյի մունիցիպալիտետում երիտասարդների խումբը ցանկություն ուներ ներդրում անել իր մունիցիպալիտետի զարգացման մեջ, ակտիվացնել հասակակիցներին, պլանավորել և իրականացնել տարբեր գործունեություններ, երիտասարդների համար հետաքրքիր և գրավիչ դարձնել Թեթրիծղարոն: Սկզբում երիտասարդներն անցան խորհրդատվություններ և թրեյնինգներ Թբիլիսիում գործող հասարակական կազմակերպություններում և հիմնադրեցին «Թեթրիծղարոյի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

Կազմակերպությունն արդեն փոքր դրամաշնորհներ է ստացել: Կենտրոնը դիմել է մունիցիպալիտետին խնդրանքով՝ կազմակերպությանը տարածք տրամադրելու համար: 2017 թվականին ինքնակառավարումը քննարկեց հարցը և, համաձայն Օրենքի, երկու տարով երկարաձգելու հեռանկարով, կազմակերպությանը փոխանցեց Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի հաշվեկշռի վրա եղած անշարժ գույք՝ նախկին դատարանի շենքը:

Կազմակերպության անդամները և կամավորները մաքրեցին

շենքը և կատարեցին ներքին վերանորոգում: Ներկայումս այդտեղ իրականացվում են մի քանի մշակութային և կրթական ծրագրեր, նախատեսվում են նաև նոր գործունեություններ:

(Տեղեկատվության աղբյուրը՝
https://cipdd.org/upload/files/local_initiatives-geo.pdf)

2. Բոլնիսիի մունիցիպալիտետի Դիսլևի գյուղում ապրում են Աջարիայից վերաբնակեցված քաղաքացիներ: Բնակավայրը գյուղի կարգավիճակ չի ունեցել մինչև 2016 թվականը, և բնակչությունը չի օգտվել «Գյուղական աջակցության ծրագրից»: Բացի դպրոցից և բնակչության կողմից կառուցված եկեղեցուց, այստեղ հանրային շենք չկար:

2017 թվականին Կովկասյան ինստիտուտի նախագծերից մեկի շրջանակներում անցկացված համայնքային հանդիպման ժամանակ, բնակչությունը որպես խնդիր է ներկայացրել հասարակական հավաքների տարածքի և ամբուլատորիայի բացակայության փաստը:

Դրանից հետո ձևավորվել է նախաձեռնող խումբ, որը հանդիպել է ինքնակառավարման ներկայացուցիչների հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել է տվյալ խնդիրը և պլանավորվել են լուծման ուղիներ:

Շուտով քաղաքապետարանը ձեռք է բերել երկու բնակելի կոնտեյներ և տեղադրել Դիսլևի գյուղում: Մի կոնտեյներում բացվել է ամբուլատորիա և գրասենյակի տեղ է հատկացվել քաղաքապետի ներկայացուցչին: Երկրորդ կոնտեյներում Կովկասյան ինստիտուտը տեղադրել է գրասենյակային կահույք, կազմակերպել հասարակական կենտրոն և գրադարան: Քաղաքապետարանը մտադիր է կոնտեյներների շուրջը բարեկարգել տարածքը և մարզահրապարակ կազմակերպել:

(Տեղեկատվության աղբյուրը՝
https://cipdd.org/upload/files/local_initiatives-geo.pdf)

3. Ախալցիխեի մունիցիպալիտետում 2016 թվականին ստեղծվել է նախագիծ, որը նախատեսում էր Ուրավելիի կիրճի 6 գյուղերի հողերի ոռուգում: Պլանավորվել է Ախալցիխեի ջրամատակարարման հին համակարգ՝ ջրի մատակարարում ինքնահոսով:

Այս համակարգը (7 կմ երկարությամբ խողովակ) վերանորոգման կարիք ուներ և միաժամանակ պատկանում էր ոչ թե մունիցիպալիտետին, այլ Վրաստանի էկոնոմիկայի նախարարությանը: Մունիցիպալիտետը չուներ ազատ գումար՝ համակարգի նորոգման համար և ոչ էլ՝ ջրանցքի վրա աշխատանքների կատարման իրավունք:

2017 թվականին Ախալցիխեի ինքնակառավարումը բանակցություններ սկսեց Էկոնոմիկայի նախարարության հետ՝ ջրանցքը մունիցիպալիտետին փոխանցելու մասին: Բացի այդ, գումարներ ձեռք բերելու նպատակով հասարակական կազմակերպության օգնությամբ նախագիծ ներկայացվեց Ճապոնիայի դեսպանատուն: 2017 թվականի ամռանը Էկոնոմիկայի նախարարությունը տվյալ ջրանցքը փոխանցեց Ախալցիխեի մունիցիպալիտետին, իսկ աշնանը Ճապոնիայի դեսպանատունը ֆինանսավորեց ջրանցքի վերականգնման նախագիծը:

2018 թվականի գարնանը սկսվեցին վերականգնման աշխատանքները: Ջրանցքը կսպասարկի 6 գյուղերի և նվազագույն գնով կոռոգի 250-300 հա հողատարածք:

(Տեղեկատվության աղբյուրը՝
https://cipdd.org/upload/files/local_initiatives-geo.pdf)

4. Եվրամիության հարևանության ծրագրին մասնակցությունը

և Վրաստանի ու Եվրամիության միջև կնքված Ասոցացման համաձայնագիրը նոր հնարավորություններ ստեղծեցին, որոնք կարող են օգտագործել Վրաստանի ինքնակառավարումները:

2017 թվականին բարձրալեռ Աջարիայի երեք մունիցիպալիտետներ (Քեդա, Շուախևի, Խուլո) հիմնեցին «Մունիցիպալիտետային ծառայությունների զարգացման կենտրոն», որի նպատակն էր միավորել մունիցիպալիտետների սահմանափակ ռեսուրսները՝ ընդհանուր գործունեության համար: Նոր կազմակերպությունն առաջին փուլում վերլուծեց մունիցիպալիտետներում մունիցիպալ թափոնների կառավարման առկա համակարգը և կազմեց դրանց հեռացման օպտիմալ սխեմաները, որոնց շնորհիվ տեղի կունենա բնակչության և հիմնարկների կենցաղային թափոնների հեռացումը և դրանց՝ աղբավայրեր տեղափոխումը՝ ժամանակակից եվրոպական չափանիշներին համապատասխան: Արդյունքում այս ծառայությունը հասանելի կլինի ոչ միայն քաղաքներում և ավաններում, այլ նույնիսկ ամենահեռավոր բարձրալեռ գյուղերում:

Եվս մեկ դրական կողմ է այն, որ այս գործում ինքնակառավարումներին օգնում են եվրոպական լավագույն մասնագետներ, իսկ գործունեության ողջ ծախսը մարվել է ոչ թե մունիցիպալիտետի փոքր բյուջեի միջոցներով, այլ Եվրամիության դրամաշնորհով, և մեր քաղաքացիները և մեր պետությունը դրա համար ոչ մի թեթրի չեն ծախսել:

(Տեղեկատվության աղբյուրը՝
https://www.coe.int/en/web/good-governance/imc/)

Թբիլիսիի շրջակայքի մաքրումը կենցաղային թափոններից

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.3

Հավելված 1-ում տեսե՛ք «Տեղական ինքնակառավարման մասին» Վրաստանի օրգանական օրենքի 16-րդ հոդվածը (կետ 2 և 4) և նրանում տրված ինքնակառավարման իրավասությունները: Ձեր հայեցողությամբ խմբավորե՛ք **Աղբյուր 1**-ում տրված աղյուսակի մեջ՝ ըստ նրա, թե ինչ գործառույթի իրականացում է կանոնակարգում առանձին կետը և ենթակետը:

Աղյուսակում օրինակի տեսքով տրված են Օրենքի 16-րդ հոդվածի մի քանի կետով/ենթակետով սահմանված ակտիվություններ:

ԱՂԲՅՈՒՐ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

Հոդված 4. Տեղական ինքնակառավարման իրավասության ոլորտը

1. Իշխանության տեղական մարմինների հիմնական իրասությունները և պատասխանատվությունը սահմանվում են Սահմանադրությամբ և սույն Օրենքով: Միևնույն ժամանակ սույն դրույթը չի խանգարի օրենքին համապատասխան իշխանության տեղական մարմիններին հատուկ նպատակներով լրացուցիչ իրավասություններ և պարտականություններ շնորհել:

2. Իշխանության տեղական մարմինները, Օրենքի շրջանակներում, ունեն լրիվ ազատություն՝ իրականացնելու իրենց նախաձեռնությունը ցանկացած հարցի նկատմամբ, որը չի բացառվում իրենց իրավասություններով կամ որը չի շնորհված իշխանության որևէ այլ մարմնի:

Հանրային ծառայության մատուցում տեղերում	**Նպաստում կայուն զարգացմանը**	**Քաղաքացիական խաղաղության և կայունության ապահովում**
Օրինակ՝ կոշտ թափոնների հավաքում և աղբահանում Կետ 2.է	*Օրինակ՝բյուջեի սահմանում, հաստատում և վերահսկում Կետ 2.ա*	*Օրինակ՝ հավաքների և ցույցերի հարցերի կարգավորում Կետ 2.ժդ*
Օրինակ՝ արտաքին լուսավորման ապահովում Կետ 2.զ	*Օրինակ՝զանգվածային սպորտի զարգացում Կետ 4*	*Օրինակ՝գենդերային հավասարությանը նպաստում, ընտանեկան բռնությունից խուսափել Կետ 4*

ՆԱԽԱԳԻԾ

II փուլ.

Ձեր կողմից նախագծի I փուլում բացահայտված հիմնախնդիրներից առանձնացրե՛ք այն հարցերը, որոնց կարգավորումը մտնում է տեղական ինքնակառավարման իրավասությունների մեջ (օրինակ՝ էկոնոմիկայի զարգացումը տեղական ինքնակառավարման ուղղակի պարտականությունը չէ, իսկ ճանապարհների նորոգումը և խմելու ջրի մատակարարումը ինքնակառավարման ուղղակի պարտականությունն է):

Բացի այդ, մտածեք, թե, որպես համախոհներ, ով և ինչ կառույցներ կարող են ձեզ օգտակար լինել՝ նշված հիմնախնդիրների վճռման գործընթացում (ձեր բնակավայրում գործող հասարակական կազմակերպություն, գործարար և այլն):

ԹԵՄԱ 4

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 4

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ-ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ (ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԲԱՌԱՐԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ – կառույց, որտեղ քաղաքացիներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին, որոնք պետք է որոշեն այսպես կոչված «խաղի կանոնները», վերահսկեն գործադիր ճյուղի կողմից վարած գործունեությունը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ – իշխանության ճյուղ, որն իրականացնում է ներկայացուցչական մարմնի կողմից ընդունված որոշումները հանրային ծառայության ոլորտում:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՔԱՂԱՔ - ուրբանային (քաղաքային) տիպի բնակավայր է, որը միտված է քաղաքներին բնորոշ հարցերի լուծման և որին Ինքնակառավարման օրենսգիրքը շնորհել է մունիցիպալիտետի կարգավիճակ:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔ – մի քանի բնակավայրերի (ուրբանային՝ քաղաքի և ավանի և ռուռալ՝ գյուղի) միասնություն, որին, համաձայն Ինքնակառավարման օրենսգրքի, շնորհվել է մունիցիպալիտետի կարգավիճակ (մինչև 2006 թվականը դրանք շրջաններ էին կոչվում): Համայնքի կենտրոնը կարող է լինել այնպիսի քաղաք, որն ինքնակառավարվող քաղաքի կարգավիճակ չունի:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – հանրային իշխանության ներկայացուցչական մարմինների (օրինակ՝Խորհրդարան, Ավագանի) և հանրային իշխանության պաշտոնեական անձանց (քաղաքապետ) ընտրությունը քվեարկությամբ:

Տեղական ինքնակառավարման կառուցվածքում նույն կերպ, ինչպես կենտրոնական մակարդակում, գոյություն ունեն ներկայացուցչական (գործողության կանոնները սահմանող) և գործադիր (սահմանված կանոնների համաձայն գործունեություն իրականացնող) ճյուղեր:

Ներկայացուցչական մարմինը կենտրոնական իշխանության մակարդակում Վրաստանի Խորհրդարանն է, իսկ տեղական մակարդակում՝ ավագանին: **Գործադիր մարմինը** կենտրոնական մակարդակում հանդիսանում է **Վրաստանի Կառավարությունը** (նախարարների կաբինետը), իսկ ինքնակառավարման մակարդակում՝ քաղաքապետը:

	Ներկայացուցչական մարմին	**Գործադիր մարմին**
Կենտրոնական իշխանություն	Խորհրդարան	Կառավարություն
Տեղական ինքնակառավարում	Ավագանի	Քաղաքապետ

Քութաիսիի քաղաքապետարանը

Տարբերությունը միայն այն է, որ. 1. Վրաստանի Խորհրդարանը ստեղծում է ընդհանրապես երկրի օրենքները, իսկ ավագանին գործում է գոյություն ունեցած օրենքների շրջանակներում, 2. տեղական մակարդակում գոյություն չունի կենտրոնական մակարդակում գործող երրորդ ճյուղը՝ **դատական իշխանությունը**, որը երկրում միասնական է:

Ավագանու՝ տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի և քաղաքապետի **ընտրություններն** անց են կացվում 4 տարին մեկ անգամ: Ընտրությունների օրը նշանակում է Վրաստանի Նախագահը, մինչև գործող ավագանու իրավազորությունների ժամկետը սպառվելը, ոչ ուշ, քան 60 օր առաջ:

Արտակարգ և պատերազմական դրության ժամանակ չեն անցկացվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Եթե ընտրությունների ժամկետը համընկնում է արտակարգ կամ պատերազմական դրությանը, ընտրություններն անց են կացվում այդ վիճակը դադարեցվելուց ոչ ուշ, քան 60 օր հետո:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ - Խորհրդարանի և Ավագանու անդամների ընտրություն՝ ըստ կուսակցական ընտրացուցակների:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.1

Ծանոթացե՛ք ընտրական օրենսգրքի հոդվածներին (Հավելված 2): Համեմատե՛ք ավագանու անդամի և քաղաքապետի ընտրությունների կարգը Վրաստանի Խորհրդարանի ընտրությունների կարգի հետ: Լրացրե՛ք աղյուսակը.

	Խորհրդարանի անդամ	**Ավագանու անդամ**	**Քաղաքապետ**
Տարիք			
Վերջին քանի տարին պետք է ապրի Վրաստանում			
Քանի տարին մեկ են ընտրում			
Առանձնահատուկ նշում			

Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ ավագանու ընտրություններն անց են կացվում համամասնական և մեծամասնական ընտրակարգով: Համապատասխանաբար, ընտրությունների ժամանակ ընտրողն ունի մեկ ձայնի իրավունք՝ ըստ համամասնական ընտրակարգի, և մեկ ձայնի իրավունք՝ ըստ մեծամասնական ընտրակարգի:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – Վրաստանի խորհրդարանի և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամների ընտրություններ՝կուսակցական ցուցակների հիման վրա:

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – Վրաստանի խորհրդարանի և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամների ընտրություններ՝ ըստ միամանդատ կամ բազմամանդատ ընտրատարածքների:

Ավագանու անդամների քանակը տարբերվում է՝ ելնելով մունիցիպալիտետների մեծությունից.

- Ինքնակառավարվող համայնքի ավագանին բաղկացած է համամասնական ընտրակարգով ընտրված 15 անդամներից և համապատասխան տարածքում առկա բոլոր համայնքներից և մեկական և քաղաքներից մեկից մինչև հինգ (ելնելով քաղաքի մեծությունից) մեծամասնական ընտրակարգով ընտրված անդամից:
- Ինքնակառավարվող քաղաքի (բացի Թբիլիսիից) ավագանին բաղկացած է համամասնական ընտրակարգով ընտրված 15 անդամից և մեծամասնական ընտրակարգով ընտրված 10 անդամից:
- Թբիլիսիի ավագանին բաղկացած է 50 անդամից, որոնցից 25 անդամը՝ մեծամասնական, իսկ 25 անդամը համամասնական ընտրակարգով է ընտրվում:

Ինքնակառավարման ընտրությունների օրը

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.2

Գտե՛ք տեղեկություններ այն մասին, թե քանի անդամ կա ձեր մունիցիպալիտետի ավագանիում, պարզե՛ք նրանց ինքնությունը և ձեզ հետաքրքիր այլ տեղեկություններ: Դրա համար օգտվե՛ք համացանցից (Քաղաքացիական մշակույթի միջազգային կենտրոնի կայք՝ http://www.lsg.ge/) կամ պաշտոնական նամակով դիմե՛ք տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնին՝ ավագանուն: Պաշտոնական նամակի նմուշը տեսե՛ք **Հավելված №3**-ում:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Ավագանու անդամներն ընտրում են ավագանու նախագահին, մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալին/տեղակալներին, ավագանու հանձնաժողովների նախագահներին: Ընտրությունների կարգը սահմանված է Տեղական ինքնակառավարման օրենսգրքով:

Բնակչության կողմից ուղիղ ընտրված քաղաքապետը ինքնակառավարման գերագույն պաշտոնատար անձն է: Հենց նա է ներկայացնում տեղական ինքնակառավարումը հասարակության, կենտրոնական իշխանության կամ այլ անձանց մոտ:

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը և գործավարության լեզուն Վրաստանի պետական լեզուն է:

Ըստ օրենքի, Վրաստանի պետական խորհրդանշանների կիրառության կանոնների պահպանմամբ, ինքնակառավարվող միավորն ունի զինանշան և դրոշ: Ինքնակառավարվող միավորի զինանշանը և դրոշը, Վրաստանի Խորհրդարանին առընթեր **Զինանիշագիտության** պետական խորհրդի հետ նախապես անցկացված խորհրդատվությունների հիման վրա և նրա համաձայնությամբ, որոշում է ինքնակառավարվող միավորի ավագանին:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԵՐԱԼԴԻԿԱ – զինանիշագիտություն, զինանշանի կազմում և պարզաբանում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.3

Գտե՛ք տեղեկություններ ձեր ինքնակառավարվող միավորի զինանշանի և դրոշի մասին: Ավագանուց պահանջե՛ք տեղեկատվություն, թե ինչպես է տեղի ունեցել ձեր ինքնակառավարվող միավորի զինանշանի և դրոշի ստեղծումը և ընտրությունը:

ՆԱԽԱԳԻԾ

III փուլ.

Հավելված 1-ում մեկ անգամ ևս վերանայե՛ք ինքնակառավարման իրավազորությունները (Տեղական ինքնակառավարման օրենսգիրք, հոդված 16): Ձեր քաղաքի, գյուղի կամ ավանի կյանքից գտե՛ք տեղեկատվություն այս իրավազորությունների շրջանակներում ձեր կողմից իրականացված որևէ ակտիվության կամ այն մասին, թե չի՞ ծագել արդյոք որևիցե դժվարություն այդ ակտիվություններն իրականացնելիս:

ԹԵՄԱ 5

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԹԵՄԱ 5

Ի՞ՆՉ ԵՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԵԶ

Լրատվամիջոցների գլխավոր պարտականությունը հասարակությանը տեղեկատվության մատուցումն է: Այս տեղեկատվության մեջ ամենից առաջ այնպիսի լուրեր ենք ենթադրում, որոնք մեզ օգնում են ավել չափով մասնակցել մեր երկրի, քաղաքի, մունիցիպալիտետի և գյուղի կառավարմանը, իմանալ, թե ինչպես են աշխատում տեղական կամ կենտրոնական իշխանությունը, պաշտպանել սեփական և ուրիշի իրավունքները, քվեատուփերի մոտ անել ճիշտ և տեղեկացված ընտրություն, որպեսզի ընտրենք այն մարդկանց, որոնք հետագայում կրկին մեզ, այսինքն՝ քաղաքացիներիս կծառայեն, լրատվամիջոցների կողմից մատուցված տեղեկատվությունն օգնում է նաև կիրառել մեր իրավունքը և ակտիվորեն ներգրավվել տեղական ինքնակառավարման իրականացման մեջ: Իսկ այդ իրավունքի կիրառումը հնարավոր է միայն ժողովրդավարական պետության պայմաններում և միայն ազատ լրատվամիջոցների օգնությամբ:

Ազատ լրատվամիջոցը ժողովրդավարական պետության հիմքերից մեկն է: Հաճախ հենց լրատվամիջոցների ազատությունն է սահմանում ժողովրդավարության աստիճանը այս կամ այն երկրում: Այնտեղ, որտեղ գոյություն չունեն ազատ լրատվամիջոցներ, չկա ժողովրդավարական պետություն:

Լրատվամիջոցները մեզ պետք է ժամանակին մատուցեն լրիվ տեղեկատվություն այն իրադարձությունների մասին, որոնք զարգանում են մեր շուրջը: Նրա գործառույթը տեղեկատվության հայթայթումը, մշակումը, վերլուծումը և փոխանցումն է բոլորին հասկանալի լեզվով: Լրատվամիջոցը շատ ավելի լայն հասկացություն է, քան միայն **լրագրությունը,** և այն ենթադրում է նաև լրատվական տեխնոլոգիաները, որոնց օգնությամբ զանգվածային հաղորդակցության միջոցներով ընդարձակ լսարանին տարբեր տիպի տեղեկատվություն է մատուցվում: Զանգվածային հաղորդակցության բոլորին հայտնի միջոցներն են հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերն ու ամսագրերը, համացանցը:

Կարող ենք առանձնացնել լրատվամիջոցների երեք գործառույթ՝ **տեղեկատվության տարածում, կրթություն և ժամանց:** Դրանք երեքն էլ անչափ կարևոր են, սակայն իրենց հիմնական հասարակական առաքելությունը լրատվամիջոցները կարող են կատարել իրենց առաջնային նշանակման՝ լրագրողական գործունեության բարեխիղճ կատարմամբ:

ԲԱՌԱՐԱՆ

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ժուռնալիստիկա) - հասարակական գործունեության բնագավառներից մեկն է: Նրա նպատակը հրատապ տեղեկատվության հայթայթումը, մշակումը և տարածումն է զանգվածային հաղորդակցության միջոցներով: «Ժուռնալիստիկա» տերմինն առաջացել է ֆրանսերեն “Journal” (օրագիր, թերթ, պարբերական հրատարակություն) բառից, որն իր հերթին բխում է լատիներենից: Սկզբից այն միայն տպագիր մամուլ՝ թերթեր, ամսագրեր, տարբեր հրատարակումներ էր նշանակում: Ժամանակի ընթացքում, տերմինն ընդլայնվեց և այսօրվա դրությամբ ընդգրկում է լրագրության ընդարձակ գունապատկերը:

ԼՐԱԳՐՈՂ - անձ, որը հայթայթում, մշակում և տարածում է տեղեկատվությունը: Արդի դարաշրջանում այլևս պարտադիր չէ, որ լրագրողը լինի որևէ լրատվամիջոցի աշխատակից, նա կարող է անկախ աշխատել:

Լրատվամիջոցները հաճախ **«չորրորդ իշխանություն»** են կոչում, քանի որ նրանց հիմնական պարտականությունը իշխանության երեք ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական իշխանության)՝ հասարակությանը մատուցվող ծառայությունը մշտապես վերահսկելն է: Այն պետք է լինի միջնորդ՝ հասարակության և իշխանություն միջև, բայց միևնույն ժամանակ՝ հասարակության անմիջական դաշնակիցը և համախոհը:

Լրատվության միջոցներով քաղաքացիներին է հասնում մեծ թվով տեղեկատվություն, սակայն դրանք ոչ բոլորն են կատարում հասարակության կողմից «չորրորդ իշխանության» վրա դրված գործառույթները: Շատ բազմազան է տեղեկատվությունը, որ տարածում են թերթերը և ամսագրերը, համացանցային հրապարակումները կամ հեռուստաընկերությունները: Դրանց մի մասը բավարարում է միայն մեր հետաքրքրասիրությունը, բայց գոյություն ունի այնպիսի տեղեկատվություն, որից մեր անվտանգությունն է կախված, մի մասն էլ, պարզապես, օգնում է մեզ մեր ամենօրյա կյանքում: Օրինակ, այն, թե ինչպիսի եղանակ կլինի վաղը, ինչպիսի իրավիճակ է ճանապարհներին, որտեղ գնել մեզ անհրաժեշտ իրերը և այլն...

Լրատվամիջոցների անբաժանելի մասն է գովազդը՝ ինչպես առևտրային և քաղաքական, այնպես էլ՝ սոցիալական: Գովազդը ուղղված է քաղաքացիական իրազեկվածության բարձրացմանը: Սոցիալական է գովազդը, որն, օրինակ, բացատրում է մեզ անվտանգության գոտիների անհրաժեշտությունը՝ ավտոմեքենա վարելիս, կամ գովազդը, որն ուղղված է բռնության կամ խտրականության դեմ:

(https://www.youtube.com/watch?v=b2OcKQ_mbiQ - այս հղումով առաջ գնալով, կարող եք *տեսնել «Հարվածի՛ր նրան» (Slap Her) տեսահոլովակը՝ կանանց նկատմամբ բռնության դեմ, որը պատկանում է իտալական fanpage.it-ին: Տեսահոլովակը պատմում է, թե ինչպես են վարվում որոշ տղաներ, երբ նրանց խնդրում են հարվածել աղջկա:)*

Լրատվամիջոցները և ընտրությունները

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Լրատվամիջոցների պատմությունը հնագույն ժամանակներից է սկսվում՝ դեռևս այն ժամանակվանից, երբ մարդիկ միմյանց կամ հնագույն քաղաքների գլխավոր հրապարակներում հավաքված մարդկանց բանավոր տարբեր պատմություններ էին պատմում, նրանց համար պարտադիր և անհրաժեշտ տեղեկատվություն հաղորդում:

Դեռևս Հին Հռոմում կային տեղեկատվության տարածման մի շարք եղանակներ. գոյություն ունեին այսպես կոչված տեղեկատուներ, որոնք տարբեր տեղեկություններ էին կարդում բազմամարդ վայրերում, իշխանությունը մարզերում տեղեկատվության տարածման համար օգտագործում էր պապիրուսի գլանաթղթեր, իսկ քաղաքում նույնիսկ հատուկ պատեր կային, որոնց վրա հայտարարություններ էին գրվում: Նմանատիպ միջոցներից էին օգտվում նաև Հին Չինաստանի կառավարիչները, ովքեր իրենց հրամաններն ու հայտարարություններն էին տարածում ժողովրդի շրջանում: Վենետիկում տեղական իշխանությունը լույս էր ընծայում ձեռագիր թերթեր, բայց դրանք բոլորն էլ ծառայում էին միայն կոնկրետ տեղեկատվության տարածմանը և, հետևաբար, չէին կարող բավարարել դասական թերթի չափանիշները:

Առաջին թերթը տպագրվել է 17-րդ դարում, գերմաներենով: Ճիշտ այստեղից է սկսվում տպագիր մամուլի պատմությունը, որը դարերի ընթացքում բավականին երկար ճանապարհ է անցել (առաջին վրացական թերթը լույս է տեսել 19-րդ դարի սկզբին, և սկզբից այն կոչվել է «Սաքարթվելոս գազեթի», այնուհետև «Քարթուլի գազեթի»): 20-րդ դարի սկզբից սկիզբ է առնում ռադիոհեռարձակումը, իսկ նույն դարի 50-ական թվականներից՝ հեռուստատեսությունը, որը մինչև օրս մնում է զանգվածային հաղորդակցության ամենից ազդեցիկ միջոցը: 20-րդ դարի վերջին լրատվամիջոցների համար բացվեց ևս մեկ տիրույթ՝ համացանցը:

Որքան զարգանում, այնքան ավելի է մեծանում լրատվամիջոցների ազդեցությունը մարդկանց վրա: Պատմության մեջ բազմաթիվ օրինակներ կան, երբ լրատվամիջոցները լուրջ ազդեցություն են ունեցել հասարակական կարծիքի, սեփական երկրի ապագայի և ամբողջությամբ լրատվամիջոցների զարգացման վրա:

Նման նշանակություն ձեռք բերեց վրացական մամուլը Վրաստանի համար 19-րդ դարում, երբ այն ժամանակվա հասարակական գործիչները հրապարակախոսական հոդվածներով փորձում էին մի շարք փոփոխությունների անհրաժեշտության մեջ համոզել ժողովրդին: Ճիշտ Իլյա Ճավճավաձեի և նրա համախոհների հոդվածների շնորհիվ էր փոխվում և ձևավորվում այն ժամանակվա հասարակական վերաբերմունքը կրթության մատչելիության անհրաժեշտության հանդեպ: «Իվերիա» թերթում հրատարակված հրապարակախոսական հոդվածներում Իլյան հաճախ խոսում էր հանրային կրթության, դեռահասների դաստիարակության, մայրենի լեզվով ուսուցման, հասարակական կյանքում կանանց ակտիվ ներգրավվածության մասին: Ահա թե ինչ է նա գրել 1886 թվականին ուսուցիչների մասին հրապարակված մի հոդվածում. *«Այս առումով ավելի վատթար պայմաններում են*

ԲԱՌԱՐԱՆ

ԹԵՐԹ՝ ԼՐԱԳԻՐ - (իտալ.՝ Gazzeta) որոշակի պարբերականությամբ, կանոնավոր կերպով լույս տեսնող հրատարակում, որն ընդգրկում է հասարակության համար նշանակալի և հետաքրքիր նորություններ, հոդվածներ տարբեր թեմաներով, նաև խմբագրական հոդվածներ և գովազդ:

կին ուսուցիչները, եթե նրանց բախտ չի վիճակվել պետական հաստատությունում որևէ տեղ ինչ-որ պաշտոն զբաղեցնել: Նրանց աշխատանքը, կատարված նույն նվիրվածությամբ և ծանրաբեռնվածությամբ, ավելի պակաս է հարգված, ավելի պակաս ապահովագրված վարձատրությամբ և պահանջարկով և, բացի այդ, որքան էլ լավ լինի պատրաստված, որքան էլ անձնուրացաբար կատարի իր պարտականությունները, դժվար թե նրան տրվի առավելություն տղամարդու հանդեպ այն դեպքում, երբ երկուսն էլ միաժամանակ ներկայանան աշխատանքի ընդունվելու»:

Չնայած այն ժամանակվա ծանր պայմաններին՝ ցարական իշխանության օրոք Վրաստանում երկրի և ժողովրդի համար նման կարևոր թեմաների մասին հասարակական կարծիք հենց վրացական մամուլն էր կարողանում ձևավորել:

Լրատվամիջոցները հատկապես ակտիվ էին Առաջին հանրապետության շրջանում (1918-1921): Այս ժամանակվա մամուլը և կինոխրոնիկան մեկ անգամ աչքի անցկացնելով կտեսնենք, թե որքան լավ էին լրատվամիջոցներով (այդ թվում՝ կենտրոնական լրատվամիջոցներով) լուսաբանվում տեղական ինքնակառավարման հարցերը և ապակենտրոնացման բարեփոխումը, որքանով լայն էին ներկայացված քննարկման հարցերը:

Բոլոր ժամանակներում, բոլոր իշխանությունները փորձում են վերահսկել լրատվամիջոցները, քանի որ լրատվամիջոցների վերահսկումն ինքնըստինքյան նշանակում է հասարակական կարծիքի և տրամադրվածությունների կառավարում՝ սեփական շահերին համապատասխան:

«Իվերիա» թերթը

ՀԱՐՑԵՐ

1. Ըստ ձեզ, ինչպիսի՞ն են այսօր ժամանակակից վրացական լրատվամիջոցները:
2. Ի՞նչ գիտեք վրացական մամուլի պատմության մասին:

Գտե՛ք ավելի շատ տեղեկատվություն առաջին վրացական թերթի մասին:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ցանկացած լրատվամիջոց ձեռնարկություն է, որն աշխատում է սպառողների համար, սակայն սովորական ձեռնարկությունից այն տարբերվում է բարձր սոցիալական պատասխանատվությամբ: Սա նշանակում է, որ լրատվամիջոցների նպատակը չի կարող լինել բացառապես եկամուտ, շահույթ ստանալը, նրա խնդիրը բոլոր քաղաքացիներին լավ ծառայելն է:

Ի՞նչ է անհրաժեշտ լրատվամիջոցին, որպեսզի լավ ծառայի հասարակությանը: Իհարկե, անհրաժեշտ է եկամուտ և ազատություն: Բայց արդյոք այս ազատությունն ամեն ինչի իրավո՞ւնք է նշանակում: Ի՞նչն է կանոնակարգում օրենքը, և ի՞նչն է մնում օրենքից դուրս:

Վրաստանի Օրենսդրությունը պաշտպանում է յուրաքանչյուր

քաղաքացու խոսքի և արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքը, ապահովում է լրատվամիջոցների ազատ աշխատանքը և միևնույն ժամանակ որոշում է նրանց աշխատելու պայմանները, հարկերը, իսկ որոշ դեպքերում նաև հանրությանը պաշտպանում է վնասակար ազդեցությունից, օրինակ, սահմանափակումներ է սահմանում լրատվամիջոցներին ալկոհոլի, ծխախոտի և զենքի գովազդման ժամանակ: Բայց այն, ինչ վերաբերում է լրատվամիջոցների խմբագրական աշխատանքին՝ ինչը և ինչպես պետք է լուսաբանեն լրագրողները և մատուցեն հանրությանը, դա օրենքի շրջանակներից դուրս է:

Աշխարհի բոլոր ժողովրդավարական պետությունները համաձայն են, որ լրատվամիջոցները պետք է լինեն ազատ, բայց դա չի կարող լինել բացարձակ ազատություն, քանի որ բացարձակ ազատությունը կարող է ենթադրել նաև հասարակության համար վնասակար գործունեություն, օրինակ, սպանության և բռնության, մարդկանց խտրականության և նվաստացման կոչերը: Միևնույն ժամանակ, չի կարելի լրատվամիջոցները վստահել պետությանը, այսինքն՝ չի կարելի, որ իշխանությունը վերահսկի լրատվամիջոցները և կառավարի լրատվամիջոցները սեփական շահերին համապատասխան: Լրատվամիջոցները սեփական շահերի համար չպետք է օգտագործեն նաև տարբեր քաղաքական, գործարար կամ ուրիշ խմբեր: Օրինակ, խորհրդային իշխանությունը տարիներ շարունակ այն օգտագործում էր՝ որպես սեփական գաղափարախոսության տարածման զենք և, հետևաբար, լրատվամիջոցներն ազատ չէին: Խորհրդային Միության տարածքում բնակվող մարդիկ լսում և կարդում էին ոչ թե իրական լուրերը, այլ միայն այն տեղեկատվությունը և այնպիսի ձևով, ինչպես այդ ցանկանում էր իշխանությունը:

Ուրեմն, ո՞րն է այն մեխանիզմը, որի միջոցով լրատվամիջոցները կարող են լինել ազատ և, միևնույն ժամանակ, չօգտագործել իրենց հսկայական ազդեցությունը ի վնաս ժողովրդի: Այս հիմնախնդրի վճռման ուղի են համարվում լրատվամիջոցների մասնագիտական և էթիկական չափորոշիչները: Մասնագիտական և էթիկական չափորոշիչները լրատվամիջոցներին պարտավորեցնում են պատշաճ կերպով վերստուգել տեղեկատվությունը, որ մատուցվում է հանրությանը, հասարակությանն ասել ճշմարտությունը և չտարածել կեղծիք, իրարից սահմանազատել փաստը և տեսակետը, պաշտպանել մարդու իրավունքները, տարբեր հիմքերով չխթանել մարդու խտրականությունը, չօգտագործել ատելության լեզուն, չմիջամտել մարդու անձնական կյանքին, նախապատվությունը շնորհել երեխայի շահերին, չստանալ որևէ տիպի շահույթ՝ նրա գործունեության վրա ներգործելու նպատակով, իրար չխառնել խմբագրական և գովազդային նյութերը, լինել օբյեկտիվ և անաչառ, ժամանակին ուղղել իրենց սխալը և այլն: Սրանք այն կանոններն են, որոնք իրենք՝ լրագրողներն են ստեղծում ու պաշտպանում, և իրենք իսկ վերահսկում այդ չափորոշիչների կատարումը: Իսկ այդ հարցում նրանց կրկին ու կրկին հասարակությունն է օգնում, հասարակությունը, որն անուշադիր չի թողնում լրատվամիջոցների սխալները՝ անընդհատ մատնացույց անելով դրանք և այս կերպ օգնելով լրագրողներին դառնալ ավելի լավը:

Այս գործընթացը, այսինքն՝ լրատվամիջոցների ինքնակարգավորումը, չի ենթադրում որևէ պատիժ կամ պատժամիջոց լրագրողների համար, այլ ենթադրում է սխալի ուղղում, անհրաժեշտության դեպքում՝ ներողություն խնդրել և սեփական մասնագիտական կարողությունները զարգացնել ապագայի համար: Ո՞ւմ պետք է դիմի քաղաքացին, եթե համարում է, որ լրագրողը, խմբագիրը, ամբողջ հրատարակչությունը կամ հեռարձակողը խախտել են վերոթվարկյալ կանոնները:

Վրաստանում 2009 թվականից գոյություն ունի **«Հեռարձակողների վարքի կանոնագիրք»,** որը ներառում է լրատվամիջոցների աշխատանքի սկզբունքները, սակայն պարտադիր է միայն հեռարձակողների համար: «Վարքի կանոնագիրքը» հեռարձակողներին պարտավորեցնում է ստեղծել ինքնակարգավորման մարմիններ, որոնք քննարկում են կանոնագրքի սկզբունքների խախտման դեպքերը: Քաղաքացին իր բողոքը կարող է ներկայացնել ինքնակարգավորման մարմնին՝ մասնագիտական կանոնագրքի խախտումները որոշելու և ներողություն խնդրելու կամ ոչ ճշգրիտ փաստն ուղղելու պահանջով: Օրինակ, եթե որևէ հեռուստաընկերություն սյուժե կամ հաղորդում է հեռարձակել, որում ձեր մասին ոչ ճշգրիտ տեղեկատվություն կամ խեղաթյուրված փաստեր են պատմվել, դուք պետք է դիմեք հեռուստաընկերության ինքնակարգավորող մարմնին՝ սյուժեն/հաղորդումը եթեր հեռարձակվելուց հետո, տասնօրյա ժամկետում: Ով և ինչպես կարող բողոքարկել կարգավորող մարմնին, ինչպես պետք է քննարկի այդ բողոքը ինքնակարգավորող հանձնաժողովը, ինչ է տեղի ունենում, երբ դիմորդը դժգոհ է՝ այս ընթացակարգերը մանրամասնորեն սահմանում է «Հեռարձակողների վարքի կանոնագիրքը», որին կարող եք ծանոթանալ **www.gncc.ge** կայքէջում:

Սեփական վարքի կանոնագիրք ունի նաև Հանրային հեռարձակողը, որը պարտադիր է նրա յուրաքանչյուր աշխատողի համար, և որը հասանելի է **www.gpb.ge** կայքում:

Վրաստանի մամուլը չունի նման ազգային կանոնագիրք,

Հանրային հեռարձակող «Մոամբեի» ստուդիան

ԲԱՌԱՐԱՆ

ՀԵՌԱՐՁԱԿՈՂ – Հանրային հեռարձակողը, Հանրային հեռարձակողի Աջարիայի հեռուստատեսությունը և ռադիոն, լիցենզավորված կամ ավտորիզացված ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն անձնական խմբագրական պատասխանատվությամբ սեփական հաղորդակցական ցանցով սահմանված ժամանակի ընթացքում իրականացնում է նյութերի հեռարձակում և միաժամանակ հասանելի է դիտողին/ունկնդրին:

սակայն երկրում գոյություն ունի ինքնակարգավորման անկախ մարմին, որին կարող է դիմել ցանկացած քաղաքացի ցանկացած լրագրողի դեմ բողոքով: Այդ կազմակերպությունը կոչվում է **«Լրագրական էթիկայի խարտիա»:** Խարտիան միաժամանակ լրագրողների էթիկայի կանոնագիրքն է, որին բաժանորդագրվելը Վրաստանում գործող լրագրողների համար կամավոր է:

«Լրագրական էթիկայի խարտիան» ունի խորհուրդ, որը կազմված է լրագրողներից, և որին կարող է դիմել ցանկացած քաղաքացի, եթե համարում է, որ խախտվել են լրատվամիջոցների էթիկայի չափորոշիչները: Խորհուրդը քննարկում է դիմումը, ուսումնասիրում վիճելի լրագրական աշխատանքը, զրուցում է ինչպես դիմումատուի, այնպես էլ պատասխանող լրագրողի հետ և քննարկման հետևանքով որոշում կայացնում: Որոշման մեջ պարզաբանվում է, արդյոք լրագրողը խախտե՞լ է խարտիայի որևէ սկզբունք, որը նրան պարտադրում էր պահպանել մասնագիտական էթիկան (Խարտիայի մասին լրացուցիչ տեղեկատվություն տե՛ս www.qartia.org.ge կայքէջում):

Եթե քաղաքացին համարում է, որ լրատվամիջոցներն իրեն առանձնահատուկ վնաս են հասցրել և ցանկանում է բարոյական և նյութական վնասի փոխհատուցում, ապա նա պետք է դիմի դատարան: Ինքնակարգավորման համակարգը, որի մասին խոսեցինք վերևում, չի նախատեսում նման տուգանքներ, սակայն, լրագրողական սխալների հայտնաբերումից և ճանաչումից բացի, այն ունի այլ կարևոր ծանրաբեռնում ևս՝ եթե լրատվամիջոցներն իրենք չեն կարողանա սեփական գործունեությունը կանոնակարգել կամ ինքնակարգավորվել, ապա դժգոհ հասարակության պահանջների կատարման համար, նրա կանոնակարգման ցանկություն կառաջանա իշխանության մոտ: Իսկ իշխանության կողմից լրատվամիջոցների կարգավորումը նշանակում է լրատվամիջոցների գրաքննություն կամ վերահսկողություն, ինչը բացառում են ազատ լրատվամիջոցները և ժողովրդավարական հասարակությունը:

ԲԱՌԱՐԱՆ

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ censura) - իշխանության կողմից տպագիր մամուլի, բեմականացումների, ռադիո և հեռուստահաղորդումների, իսկ երբեմն մասնավոր գրագրության ստուգում, որպեսզի թույլ չտան կամ սահմանափակեն իշխանության համար անընդունելի տեղեկատվության տարածումը: Ժողովրդավարական երկրների օրենսդրությունը ճանաչում է տեղեկատվության ազատությունը և արգելում գրաքննությունը:

ՀԱՐՑԵՐ

3. Ինչպե՞ս եք հասկանում լրատվամիջոցների ինքնակարգավորումը:
4. Ինչ եք կարծում, արդյոք պահպանո՞ւմ են վրացական լրատվամիջոցները էթիկայի սկզբունքները:
5. Մտաբերեք օրինակներ, երբ լրատվամիջոցների վարքագիծը անընդունելի էր ձեզ համար: Ձեր կարծիքով, ի՞նչն էր դրա պատճառը:

ԼՈՒՐԵՐ

Ինչպես ասացինք, տեղեկատվությունները բազմազան են ու բազմաբնույթ, սակայն տեղեկատվությունը, որը, թերևս, առավել հաճախ ենք ստանում լրատվամիջոցներից, լուրերն են:

Մեր շուրջը օրական կտրվածքով շատ դեպքեր են տեղի ունենում, բայց ոչ բոլորն են դառնում հեռուստատեսային կամ լրատվական նյութ: Երբ մենք լուրեր ենք դիտում, լրագիր կարդում կամ նորություններ փնտրում համացանցում, մտածում ենք, թե ինչի հիման վրա են լրագրողները, **խմբագիրները** և **պրոդյուսերները** ընտրում նյութերը, որոնց մասին պատմում են մեզ:

Ի՞նչ է լուրը: Դասագրքերում հնարավոր է հանդիպեք տարբեր բացատրությունների, թեպետ հաստատապես կարող ենք ասել, որ կան մի քանի հատկանիշներ, որոնք իսկապես անհրաժեշտ են, որ ունենա լուրը, որպեսզի այն վերածվի լրատվական նորության:

«Նոր լուր» տերմինը ինքնին ցույց է տալիս, որ այն նոր պետք է լինի, բայց նորությունը միշտ չէ, որ նշանակում է նորություն ժամանակի մեջ: Երբեմն, դա կարող է լինել մի պատմություն, որը հենց վերջերս է կատարվել կամ այս պահին է տեղի ունենում, երբեմն՝ մի պատմություն, որը վաղուց է կատարվել, սակայն շարունակվում է այսօր էլ: Երբեմն մի հին պատմություն է, որի մասին պարզապես մինչև օրս չենք իմացել և նոր ենք իմանում: Բայց միայն նորությունը բավարար չէ նրա համար, որ այդ պատմությունից հեռուստատեսային կամ ռադիո ռեպորտաժ կամ հոդված պատրաստվի: Այն պետք է **տարբերվող և աչքի ընկնող** լինի, ինչը դրա հանդեպ կշարժի մեր հետաքրքրությունը, սակայն նոր և տարբերվող լինելն էլ բավական չեն: Այս կամ այն պատմությունը մեզ համար պետք է նաև կարևոր լինի և, ի վերջո, նոր, հետաքրքիր և կարևոր պատմությունը պետք է վերաբերի **մարդկանց:** Լուրերի գլխավոր չափանիշը մենք ենք՝ քաղաքացիներս: Որքան ավելի շատ մարդկանց վերաբերի և որքան ավելի շատ մարդկանց կյանքի մեջ որևէ փոփոխություն կատարի այս կամ այն պատմությունը, այնքան ավելի մեծ և մասշտաբային նորություն կլինի այն (օրինակ, արտահերթ խորհրդարանական, նախագահական կամ տեղական ընտրություններ, նորություններ առողջապահության կամ կրթական համակարգում, ազգային արժույթի կտրուկ փոփոխություն և այլն):

Պետք է ասել նաև, որ լուրերն ընտրում են նաև՝ ըստ գտնվելու վայրի: Որքան մեզ մոտ է տեղի ունենում այն, մեզ ավելի է հետաքրքրում, չնայած աշխարհագրական սահմանները հաճախ շատ պայմանական են, հատկապես այն ժամանակ, երբ մեզանից հեռու տեղի ունեցած նորությունը մեզ ևս վերաբերում է: Օրինակ, 2014 թվականի գարնանը արտասահմանյան լրատվամիջոցները տեղեկատվություն տարածեցին, որ Արևմտյան Աֆրիկայում արձանագրվել է էբոլա վարակի նոր բռնկում (առաջին անգամ այդ վտանգավոր վիրուսը 1976 թվականին Աֆրիկա մայրցամաքում, Կոնգոյի Հանրապետությունում էր տարածվել, Էբոլա գետին հարող տարածքում: Վիրուսի անվանումը հենց հայտնաբերման վայրի հետ է կապված): Նորությունը կարևոր և հրատապ էր նաև

ԲԱՌԱՐԱՆ

ՊՐՈԴՅՈՒՍԵՐ – (անգլ.՝ Producer) անձ, ով հեռուստատեսության/ռադիոյի լուրերի ծառայությունում ղեկավարում է լուրերի պլանավորման և նախապատրաստման գործընթացը և պատասխանատու է լուրերի թողարկման համար:

ԽՄԲԱԳԻՐ - ֆր.՝ Rédacteur) - 1. անձ, ով գրքի, ամսագրի, թերթի հրատարակումն է գլխավորում, հաստատում նրա բովանդակությունը,

2. անձ, ով խմբագրում է տեքստը:

Ծանոթացե՛ք նաև.

«Երբ շունը կծում է մարդուն, սա լուր չէ, սակայն, երբ մարդն է կծում շանը, սա լուր է»,-Չարլզ Անդերսոն Դանա, ամերիկյան լրագրող, 1819-1897թթ.

«Նորություն է այն, ինչը որևէ մեկը փորձում է ինչ-որ տեղ պահել, մնացածը գովազդ է»,- լորդ Նորտկլոֆ, բրիտանացի հրատարակիչ, 1865-1922թթ.

«Մարդկանց մեծ մասի համար նորությունը լավ լուրը չէ, իսկ մամուլի համար լավ լուրը ընդհանրապես նորություն չէ»,- Գլորիա Բորգեր, ամերիկացի լրագրող

«Ազատ մամուլը կարող է լինել լավը կամ վատը, սակայն հստակ է, որ առանց ազատության մամուլը կարող է միայն վատը լինել»,-Ալբեր Կամյու, ֆրանսիացի գրող, փիլիսոփա, լրագրող, 1913-1960թթ.

«Հրապարակախոսության կարևորագույն առարկան ներկայիս կյանքն է իր լրիվ արտադրությամբ, իր լրիվ իրավիճակով»,- Իլյա Ճավճավաձե, վրաց գրող, հրապարակախոս, քաղաքական և հասարակական գործիչ, 1837-1907թթ.

Վրաստանի համար: Վրացական լրատվամիջոցներն անմիջապես սկսեցին հանրության համար տեղեկատվություն տարածել վարակի ախտանշանների, հետևանքների, վտանգների, երկրի սահմանների վրա սահմանված ստուգումների մասին:

Ի՞նչ են անում լրագրողները և խմբագիրները նրանից հետո, երբ բազում պատմություններից ընտրում են իրենց կարծիքով կարևորները: Դա դեռ չի նշանակում, որ այդ պատմությունն անպայման կհասնի ձեզ: Մինչև հեռուստատեսային ռեպորտաժը կամ հոդվածը լսարանին հասնի, այն բավականին երկար ճանապարհ ունի անցնելու. ուշադիր և մանրակրկտորեն պետք է վերստուգվեն տեղեկատվությունը, փաստերը, վերստուգվի՝ ո՞վ է այս տեղեկատվության աղբյուրը, ի՞նչ շահեր ունի նա, վստահելի՞ է, չի՞ փորձում արդյոք մոլորեցնել հանրությանը: Անհրաժեշտ է, որ լրագրողը հայթայթի լրացուցիչ տեղեկատվություն. չի՞ ունեցել արդյոք այս լուրը նախապատմություն, չկա՞ արդյոք նրա հետ կապված որևէ այլ պատմություն: Միայն դրանից հետո են սկսում մտածել և աշխատել այն բանի վրա, թե ինչ ձևով գրվի կամ պատրաստվի լրագրական նյութը (դա կլինի հոդված, համառոտ տեղեկատվություն, ռեպորտաժ, ուղիղ միացում, տեսանյութ, ռադիոսյուժե կամ հարցազրույց և այլն): Ձևն ընտրելուց հետո ստեղծվում է ենթադրյալ սցենարը, անհրաժեշտ հարցվողների և նրանց առաջադրվելիք հարցերի ցանկը, դրանից հետո պլանավորվում է կազմակերպչական մասը և լրագրողը գնում է աշխատանքի: Նմանատիպ գործընթաց կրկին սկսվում է նրա՝ խմբագրություն վերադառնալուց հետո: Լրագրողը և խմբագիրը մեկ անգամ ևս վերանայում են ծրագրած սցենարը, համաձայնեցնում և ամփոփում են հայթայթած տեղեկատվությունը և տեսողական նյութը, հետո լրագրողը սկսում է աշխատել նյութի վրա: Պատրաստած սյուժեն կամ հոդվածը մինչև տպագրվելը կամ եթեր հեռարձակվելը վերջնական ստուգում է անցնում, և միայն դրանից հետո է այն պատրաստ լսարանի համար:

Սա շատ համառոտ նկարագրությունն է այն գործընթացի, որն ամեն օր կատարում են լրատվական ծառայությունների լրագրողները և խմբագիրները՝ յուրաքանչյուր լուրի վրա աշխատելիս: Սա բարդ, սակայն անհրաժեշտ գործընթաց է՝ հասարակությանը պատշաճ կերպով ստուգված տեղեկատվություն մատուցելու համար: Ոչ ճիշտ տեղեկատվության տարածումը հնարավոր է լուրջ վնաս հասցնի մարդկանց: *«Լրատվական էթիկայի խարտիայի» համաձայն, «Ըստ պայմանավորվածության, ճշգրիտ տեղեկատվություն կհամարվի երկու աղբյուրի մոտ ստուգված տեղեկատվությունը, որում նույնականացված է անձը, տեղը, իրադարձությունը՝ ում և ինչին է վերաբերում տեղեկատվությունը»:*

Այստեղ պետք է նաև նշել, որ կան որոշ թեմաներ, որոնց բավարար չէ ո՛չ ստանդարտ վերստուգումը, ո՛չ էլ մի քանի օրվա աշխատանքը: Այսպիսի թեմաների վրա լրագրողներն աշխատում են շաբաթներով կամ ամիսներով, մանրամասնորեն գտնում են այնպիսի նյութեր, որոնք առաջին հայացքից չեն երևում, փակ են:

ՀԱՐՑԵՐ

6. Մտաբերե՛ք այն լուրերը, որոնք դիտել եք վերջին անգամ, լսել կամ կարդացել ու վերլուծել եք՝ ըստ վերոթվարկյալ չափանիշների (նորույթը, առանձնահատուկ լինելը, նշանակությունը, մոտիկությունը մարդկանց):
7. Մտաբերե՛ք որևէ լուր, որ տեղի է ունեցել Վրաստանի սահմաններից դուրս, սակայն պարզվել է, որ կարևոր է նաև մեր հասարակության համար:
8. Ծանոթացե՛ք լրագրության և լուրերի մասին լրացուցիչ ընթերցանության նյութի մեջ տրված արտահայտություններին: Համաձա՞յն եք արդյոք դրանց հետ: Բացատրե՛ք ձեր բառերով:

Նման լրագրողները կոչվում են **հետաքննող լրագրողներ:**

Լրատվամիջոցները երբեմն ճիշտ այնպիսին չեն, ինչպիսին լինել նրանց պարտավորեցնում է մասնագիտական և էթիկական չափորոշիչը: Լինում են նաև դեպքեր, երբ լրագրողներն ու խմբագիրները հայտնվում են քաղաքական կամ այլ խմբերի ազդեցության տակ, արտահայտում են նրանց շահերը, չարաշահում հասարակության վրա ազդելու իրենց հնարավորությունը և **քարոզչություն** ծավալում: Նման լրատվամիջոցները կողմնակալ են համարվում: Ահա թե ինչու է կարևոր իմանալ, թե ինչ է պահանջվում լրագրողներից, որ ծառայության մեջ պետք է լինեն նրանք, և անվիճելի ճշմարտություն չպիտի ընդունել այն ամենը, ինչ պատմում են լրատվամիջոցները: Լրագրողների աշխատանքին մենք ևս լրագրական աչքով պիտի նայենք՝ լսենք, ուսումնասիրենք և եզրակացությունները մենք ինքներս անենք: Մեր վստահությունը լրատվամիջոցն այն բանից հետո կվաստակի, երբ ժամանակը ցույց կտա, որ բարեխղճորեն է ծառայում իր գործին և հասարակությանը:

ԲԱՌԱՐԱՆ

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ – (լատ.՝ Propaganda, տարածման ենթակա) տեղեկատվության մատուցման ձև, որը ենթադրում է ցանկացած հաղորդակցական ձևի օրինաչափ օգտագործում մարդկանց գիտակցության, հույզերի և վարքի վրա ներգործելու նպատակով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5.1

1. Պարզե՛ք, ի՞նչ լրատվամիջոցներ կան ձեր քաղաքում, մունիցիպալիտետում:
2. Ի՞նչ գիտեք դրանց մասին:
3. Տեղեկատվություն գտնելուց հետո հանդիպում կազմակերպե՛ք ձեզ համար հետաքրքիր լրագրողի հետ կամ կազմակերպե՛ք այցելություն լրատվամիջոցի խմբագրություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5.2

1. Մտաբերե՛ք որևէ պատմություն, որը տեղի է ունեցել ձեր քաղաքում, մունիցիպալիտետում, և որը կարող է լրագրողների համար հետաքրքիր նյութ դառնալ:
2. Քննարկե՛ք, ի՞նչը կլիներ գլխավորը այս պատմության մեջ, շեշտը ո՞ր մասի վրա կդնեիք, ինչպե՞ս կվերնագրեիք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ – մեր երկրում հարյուրավոր լրատվամիջոցներ կան, հեռուստաընկերություններ, ռադիոներ, թերթեր, ամսագրեր, ինտերնետ հրատարակումներ:

2012 թվականին media.ge մեդիապորտալը կազմեց վրացերեն տեղեկատու, որի օգնությամբ կարող եք գտնել ձեր տարածաշրջանում կամ քաղաքում գոյություն ունեցող լրատվամիջոցը:

http://www.media.ge/ge/database/media/

ԲԱՌԱՐԱՆ

ԽՆԴՐԱԳԻՐ – մունիցիպալիտետի տարածքում

• հաշվառված ընտրողների ընդհանուր քանակի առնվազն 1 տոկոսի կամ

• կոնկրետ բնակավայրի ընդհանուր ժողովի

իրավունքը պատրաստել և ավագանուն ներկայացնել որևէ հրատապ հարցի վճռման նախագիծ: Ավագանին պարտավոր է մեկամսյա ժամկետում քննարկել այն: Քննարկմանը մասնակցելու և զեկուցումով հանդես գալու իրավունք ունեն նաև խնդրագիրը նախաձեռնողները:

Լրատվամիջոցները սնվում են այն պատմություններից, որոնք մեզ են վերաբերում, մեր շուրջն են տեղի ունենում: Հաճախ լրագրողները քաղաքացիներից են իմանում այն լուրերը, որոնք հետո օգտագործում են՝ հեռուստատեսության կամ թերթի համար նյութ պատրաստելիս: Հաճախ հանրությունը և լրագրողները միասին են աշխատում, որպեսզի ձեռք բերեն անհրաժեշտ տեղեկատվությունը: Քաղաքացին ինքը նույնպես կարող է հանրային գերատեսչություններից պահանջել իր համար կարևոր և անհրաժեշտ տեղեկատվությունը և, եթե անհրաժեշտ է համարում, փոխանցել լրատվամիջոցներին: Քաղաքացին կարող է նաև հաղորդակցության ցանկացած միջոցով տեղեկացնել այն լուրը, որն իրեն հուզում է, կամ որի ականատես է եղել ինքը: Օրինակ, եթե ձեր գյուղում, քաղաքում կամ, պարզապես, համայնքում **խնդրագիր** է պատրաստվել, որով քաղաքացիները դիմում են տեղական ինքնակառավարման մարմնին, նույն նամակը կարող եք ուղարկել կամ տանել տեղական լրատվամիջոցի խմբագրություն և նրանցից խնդրել ձեր խնդրագրում բարձրացված հարցի կատարումը վերահսկել: Գործընթացի մեջ լրագրողների ներգրավմամբ դուք ձեռք եք բերում վերահսկման լրացուցիչ մեխանիզմ:

Արդի դարաշրջանում քաղաքացին հաճախ ինքն է դառնում լրագրող և ստեղծում լուրեր, գրում է, ստանում և համացանցի միջոցով տարածում կամ արդեն պատրաստի նյութը մատուցում լրատվամիջոցին: Միխոսքով, մենք՝ քաղաքացիներս, լրագրողների համար և՛ տեղեկատվության աղբյուր ենք, և՛ հասցեատերը: Մեզ համար կարևոր տեղեկատվությունը մատուցում ենք լրատվամիջոցներին, իսկ լրագրողները, ի պատասխան, հաղորդում են, թե ինչ է անում իշխանությունը մեր խնդիրների կարգավորման համար: Հասարակությունը ժողովրդավարական կառավարումը ճիշտ այս կերպ՝ լրատվամիջոցների օգնությամբ և իշխանության վերահսկողության ճանապարհով է իրականացնում:

Լրատվամիջոցներն առանձնահատուկ դեր ունեն ինչպես քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացման, այնպես էլ ամբողջ երկրի զարգացման գործում: Ճիշտ լրատվամիջոցներն են դառնում որոշիչ գործոններից մեկը՝ երկրում ընտրությունների ժամանակ: Ընտրական գործընթացում շատ կարևոր է տեղեկատվությունը, որ ձեռք են բերում լրագրողները և տրամադրում հասարակությանը: Լրատվամիջոցներն ապահովում են, որ հասարակությունը լավ տեղեկացված լինի այս կամ այն ընտրություններին մասնակցող թեկնածուների ծրագրերի կամ ընտրական գործընթացի մասին: Լրատվամիջոցները ապահովում են նաև քննարկումներ քաղաքական և հասարակության համար հրատապ հարցերի մասին, ինչը, մի կողմից, օգնում է ընտրողներին ճիշտ ընտրություն անելու հարցում, մյուս կողմից՝ նպաստում է երկրի քաղաքական բազմազանությանը:

Ընտրությունների լուսաբանման ժամանակ առանձնահատուկ առաքելության հետ մեկտեղ լրատվամիջոցներն ունենում են նաև որոշ լրացուցիչ պարտավորություններ՝ առավելագույնս

հավասար և անաչառ ցույց տալ հասարակությանը քաղաքական գործընթացը, ընտրությունների ընթացքը, թեկնածուների և մասնակից քաղաքական կուսակցությունների նպատակները: Այս առումով մասնավոր, կոմերցիոն ալիքներից ավելի մեծ պատասխանատվություն ունի Հանրային հեռարձակողը, որը ֆինանսավորվում է քաղաքացիների կողմից վճարած հարկերից և կողմնորոշված է հասարակության բոլոր շերտերին:

Ի տարբերություն մասնավոր ալիքների, հանրային հեռուստատեսությունը կողմնորոշված չէ գովազդի ու եկամուտներ ստանալու, այդ պատճառով էլ այն պարտավոր է սեփական հաղորդումներով արձագանքել մարդկանց կարիքներին և ոչ թե գովազդատուների կամ հասարակության մի նեղ խմբի շահերի:

Վրաստանի **Հանրային հեռարձակողը** 2004 թվականին ստեղծվել է «Հեռարձակողի մասին օրենքի» հիման վրա: Այս օրենքի համաձայն, Հանրային հեռարձակողը քաղաքական և առևտրային ազդեցությունից ազատ է, ֆինանսավորվում է պետական բյուջեից, ենթակա չէ ո՛չ իշխանությանը, ո՛չ էլ որևէ հանրային գերատեսչության և լսարանին հասարակական հետաքրքրություններին համապատասխան բազմազան հաղորդումներ է մատուցում:

Մինչև 2004 թվականը Վրաստանում գոյություն ուներ պետական **հեռուստառադիոկորպորացիա,** որը ռադիոհեռարձակումը սկսել է 1925 թվականին, հեռուստահեռարձակումը՝ 1956 թվականից: 2004 թվականին դրա բազայի վրա ստեղծվել է Վրաստանի Հանրային հեռարձակողը, իսկ 2013 թվականից հանրային հեռարձակումը երկրում երեք հեռուստատեսային (Առաջին ալիք, Երկրորդ ալիք, Աջարիայի հեռուստատեսության) և երեք ռադիո (Հանրային ռադիո 1 և Հանրային ռադիո 2, Ռադիո Աջարիա) ալիքներն են իրականացնում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5.3

1. Ի՞նչ գիտեք Վրաստանի հանրային հեռարձակողի մասին:
2. Նրա հաղորդումները բավարարո՞ւմ են արդյոք երիտասարդների հետաքրքրությունները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5.4

Ծանոթացեք ստորև բերված իրավիճակին և պատասխանեք հարցերին.

Երկու քաղաքները կապող ճանապարհը առատ ձյան պատճառով փլուզվել էր: Փլուզմանը զոհեր չեն հետևել, սակայն երթևեկությունը երկար ժամանակով խափանվել էր, և ճանապարհի վերականգնմանը, հավանաբար, երկար ժամանակ անհրաժեշտ կլիներ: Դեպքի վայր են ժամանել տեղական իշխանության ներկայացուցիչները և խոստացել, որ ամենակարճ ժամանակում կլուծեն այդ խնդիրը: Ինչպես հետագայում պարզվեց, ճանապարհը քանդվել էր, իսկ դրա վերանորոգման համար տեղական իշխանություններին մի քանի տարի առաջ էին միջոցներ տրամադրել: Այս ճանապարհը բնակչության համար գլխավոր առևտրային և ուղևորատար երթուղին էր:

ԲԱՌԱՐԱՆ

ՄԱՐԶՊԵՏ – կենտրոնական իշխանության լիազոր մունիցիպալիտետների որոշակի խմբում (օրինակ՝ պատմական Գուրիայի տարածքում՝ «Լիազոր Լանչխութիի, Օզուրգեթիի, Չոխատաուրիի մունիցիպալիտետներում»):

Տեղեկատվությունը տեղի ունեցածի մասին տարածել են տեղական լրատվամիջոցները: Ստորև բերված են դրանցից մի քանիսը:

Տեղեկատվություն N1

Իշխանությունը բնակչությանը խոստացել է վերականգնել ճանապարհը:

Տեղական իշխանության ներկայացուցիչները դեպքի վայր են եկել մի քանի րոպեների ընթացքում: Ինչպես այնտեղ գտնվող լրագրողներին հայտնել է **մարզպետը**, աշխատանքը ճանապարհի վերականգնման վրա կսկսվի հենց այսօրվանից:

Երկու քաղաքները կապող ճանապարհը, որը բնակչության համար ուղևորության և առևտրային հիմնական երթուղին էր, այսօր կեսօրին առատ ձյան պատճառով փակվել է: Պաշտոնական տեղեկատվության համաձայն, ճանապարհը քանդվել է: Դեպքին զոհեր չեն հետևել:

Տեղեկատվություն N 2

Առանց ճանապարհի մնացած երկու քաղաքները

Ճանապարհը, որը բնակչության համար առևտրային և ուղևորական հիմնական երթուղին էր, այսօր կեսօրին, առատ ձյան պատճառով փլուզվել է: Դեպքին զոհեր չեն հետևել:

Ինչպես հայտարարում են դեպքի վայր ժամանած իշխանության ներկայացուցիչները, վնասված ճանապարհի վերականգնմանը մի քանի ամիս է անհրաժեշտ, իսկ աշխատանքները հենց այսօր կսկսվեն: Այս մի քանի ամսվա ընթացքում բնակչությունը ստիպված կլինի օգտվել շրջանցող ճանապարհներից, ինչը, նրանց խոսքերով, շատ խնդիրներ կստեղծի:

Պարզվում է, որ ճանապարհը, որը քանդվել է առատ ձյան պատճառով, տարիների շարունակ վատ վիճակում է եղել: Դրա վերանորոգման համար տեղական իշխանությանը տրամադրվել են գումարներ, սակայն կոնկրետ ինչ քանակության գումար էր հատկացվել և ինչու չի հաջողվել մինչև օրս աշխատանքները կատարել, մեզ համար անհայտ է: Այս հարցին դեպքի վայր եկած մարզպետը մեր թղթակցին չի պատասխանել:

Տեղեկատվություն N3

Ճանապարհը, որը պետք է վերանորոգվեր տարիներ առաջ, քանդել է առատ ձյունը:

Առատ ձյունը քանդել է երկու քաղաքները կապող գլխավոր ճանապարհի մեկ կիլոմետրանոց հատվածը: Դեպքին զոհեր չեն հետևել: Քանի որ վերականգնման աշխատանքներին ամիսներ անհրաժեշտ կլինեն, բնակչությունը պետք է օգտվի շրջանցող ճանապարհից, ինչը կդժվարացնի նրանց երթևեկությունը:

Դեպքի վայր գնացած իշխանության ներկայացուցիչները խոստացել են վերանորոգման աշխատանքները հենց այսօր սկսել: Հարցին, թե առավոտվանից ինչու չէին ընթանում ձյան մաքրման աշխատանքներ, մարզպետը մեզ պատասխանեց, որ շրջանին չի բավականացնում տեխնիկական աղը: Նա անպատասխան թողեց մեր հարցն այն մասին, թե ինչու չի հաջողվել մինչև օրս ճանապարհը վերականգնել այն դեպքում, երբ տեղական իշխանությանը մի քանի տարի առաջ էին տրամադրվել անհրաժեշտ միջոցները: Ինչպես պարզել է մեր լրատվամիջոցը Կառավարության մամուլի ծառայությունից, մարզպետարանը մի քանի հազար լարի է ստացել երկու տարի առաջ: Դրա պատճառ են դարձել բնակչության տասնյակ նամակները, որոնցում բնակչությունը խոսում է վերահաս վտանգի մասին և պահանջում շտապ սկսել աշխատանքները:

Ինչի՞ վրա են ծախսվել ճանապարհի վերականգնման համար տրամադրված գումարները, ի՞նչ ֆինանսական միջոցներով կսկսվեն վերականգնողական աշխատանքներն այսօր, և ի՞նչ վնաս են կրել բյուջեն և բնակչությունը, - լրագրողները կփորձեն ստանալ այս հարցերի պատասխանները: Թեմային կրկին կանդրադառնանք:

ՀԱՐՑԵՐ

9. Ձեր կարծիքով՝ տվյալ պատմությունը բավարարո՞ւմ է լուրերի չափանիշները (**նորություն, յուրահատկություն, կարևորություն, մարդկանց մոտիկ լինելը**):
10. Ինչո՞վ են տարբերվում տրված երեք տեղեկատվություններն իրարից:
11. Արդյոք դրանցից որևէ մեկը կողմնակալ չէ՞:
12. Դրանցից ո՞րն է ավելի լիարժեք և ինչո՞ւ:
13. Ո՞ր հրապարակումն է համապատասխանում լրատվամիջոցների՝ հասարակությանը ծառայելու գործառույթին:
14. Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է անեին լրագրողները՝ հասարակությանն ավելի ճշգրիտ և ստուգված տեղեկատվություն մատուցելու համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

1989 թվականին **Միավորված ազգերի կազմակերպությունն** (ՄԱԿ) ընդունեց **«Երեխաների իրավունքների կոնվենցիան»,** որը բաղկացած է 54 հոդվածից, և հիմնական մասը վերաբերում է երեխաների իրավունքներին և պետության պարտավորություններին: 1994 թվականին Կոնվենցիային միացել է նաև Վրաստանը, ինչը նշանակում է, որ պետությունը ստանձնել է կոնվենցիայով ընդունված պարտավորություն-ների կատարման իրավական պատասխանատվություն:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածում ասվում է. «Երեխան կարող է ազատորեն արտահայտել իր տեսակետներն այնպիսի հարցերի մասին, որոնք իրեն են վերաբերում»,13-րդ հոդվածում ասվում է, որ երեխան իր կարծիքը ազատորեն արտահայտելու իրավունք ունի: Այս իրավունքի հիման վրա, իր իսկ ընտրությամբ, երեխան ազատորեն կարող է որոնել, ստանալ և փոխանցել ցանկացած տեսակի՝ բանավոր, գրավոր կամ տպագիր տեղեկատվություն կամ գաղափար, եթե այդ տեղեկատվությունը վնասակար չէ իր կամ մեկ ուրիշի համար, իսկ Կոնվենցիայի 17-րդ հոդվածն ուղղակիորեն կապված է անմիջապես տեղեկատվության ընդունման հետ. «Պետություններն ընդունում են զանգվածային լրատվամիջոցների կարևոր դերը և երեխաների համար ապահովում տարբեր ազգային և միջազգային աղբյուրների տարածած տեղեկատվության և նյութերի մատչելիություն»:

Լրատվամիջոցները, մանկական հարցերի լուսաբանմանը, իհարկե, առանձնահատուկ ուշադրությամբ և զգուշությամբ պետք է մոտենան: Երեխայի շահերը առանձնակի ձևով պաշտպանված արտոնությունից են օգտվում, ինչը սահմանում է լրագրողների մասնագիտական և էթիկական չափորոշիչները: Լրատվամիջոցների համար կան մի շարք ազգային և միջազգային հանձնարարականներ, որոնք նրանց

Լրատվամիջոցները պետք է պաշտպանեն մանուկների շահերը:

ԲԱՌԱՐԱՆ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ - ՄԱԿ (United Nations Organization, UNO, համառոտ՝ United Nations, UN) – համընդհանուր խաղաղության ապահովման և պետությունների համագործակցության միջազգային կազմակերպություն: Ստեղծվել է 1945 թվականին:

Վրաստանը ՄԱԿ-ի անդամ է դարձել 1992 թվականին, իսկ 1993 թվականին Վրաստանում բացվել է Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակ: Վրաստանում գործում է նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), որը Վրաստանին օգնում է երեխաների պաշտպանության, առողջապահության և կրթական բնագավառներում պետական սոցիալական բարեփոխումների իրականացման հարցում:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք՝ http://www.unicef.ge/

օգնում են երեխաների հետ հարաբերություններում և նրանց մասնակցությամբ տեղեկատվություններ պատրաստելու հարցում: Հատուկ զգուշությունը չի նշանակում, որ լրատվամիջոցները պակաս ժամանակ պետք է տրամադրեն այնպիսի հաղորդումներին և լուրերին, որոնք վերաբերում են մինչև 18 տարեկան երեխաներին և դեռահասներին, ոչ էլ այն, որ լրատվամիջոցները հնարավորություն չտան նրանց կարծիք արտահայտելու՝ իրենց հետ կապված հարցերի վերաբերյալ: Աշակերտները ևս կարող են լրագրողների համար դառնալ տեղեկատվության աղբյուր այնպիսի թեմաների մասին, որոնք ուղղակիորեն կապված են նրանց բարեկեցության հետ:

Լրատվամիջոցները ոչ միայն երեխաների հետ կապված խնդիրներով, այլև աշակերտների կողմից իրականացված նախագծերով և միջոցառումներով կարող են հետաքրքրվել, աշակերտներին կարող են հրավիրել ուղիղ եթեր, նրանց մասին սյուժեներ պատրաստել, հրապարակել նրանց պատրաստած հոդվածները կամ նամակները: Դրա համար անհրաժեշտ է համագործակցել լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, նրանց տեղեկատվություն մատուցել այն միջոցառումների մասին, որոնցով, ըստ ձեզ, կարող են հետաքրքրվել լրագրողները: Սա կարող է լինել ձեզ համար հրատապ հարցերի շուրջ հանդիպում / քննարկում այնպիսի մարդու հետ, ով լավատեղյակ է և հետաքրքիր նաև լրատվամիջոցների համար, կարելի է նաև ցուցահանդես կամ գրական երեկո, դպրոցի ինքնակառավարման ընտրությունները կազմակերպել և այլն:

Աշակերտները կարող են իրենք նույնպես լինել լրագրողներ, լույս ընծայել թերթ կամ դպրոցի բազայի վրա հեռուստատեսային ստուդիա ստեղծել, պատրաստել ռեպորտաժներ և հոդվածներ դպրոցական հրատարակությունների համար, հարցազրույցներ ձայնագրել, լուսանկարներ անել, հարցումներ անցկացնել դպրոցում կամ դպրոցից դուրս:

Լրատվամիջոցներին տեղեկատվության մատուցման տարածված ձևեր են **լրատվական անոնսը և լրատվական մամլո հաղորդագրությունը (պրեսանոնս և պրեսռելիզ):** Դրանցից առաջինով լրագրողներին տեղեկատվություն եք մատուցում ձեր առաջիկա միջոցառման, իսկ երկրորդով՝ արդեն անցկացված միջոցառման մասին: Դրանք երկուսն էլ հասկանալի, պարզ և համառոտ պետք է գրվեն:

Անոնսը *գրվում է ապառնի ժամանակով և չպետք է գերազանցի մեկ էջը:*

Մամլո հաղորդագրությունը *հնարավոր է գրվի անցյալ ժամանակով: Ցանկալի է, որ չգերազանցի մեկ էջը և այն լրատվամիջոցներին մատուցվի միջոցառման ավարտից հետո:*

Ե՛վ անոնսը, և՛ մամլո հաղորդագրությունը պատասխանում են հետևյալ հարցերին՝ ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ինչո՞ւ: Լավ գրված մամլո հաղորդագրության մեջ բոլոր հինգ հարցերի պատասխանները կարելի է ստանալ առաջին իսկ պարբերությունից (նմուշներ տե՛ս ***N4*** *և* ***N5 հավելվածներում****):*

ԹԵՍՏ 6

ԻՆՉՊԵ՞Ս ԻՐԱԿԱՆԱՑՆԵՆՔ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ԹԵՄԱ 6

ԻՆՉՊԵ՞Ս ԻՐԱԿԱՆԱՑՆԵՆՔ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ժողովրդավարական հասարակությունում մասնակցությունը երկրի կառավարմանը քաղաքացու և՛ իրավունքն է, և՛ պարտականությունը:

Երկրի քաղաքացիները մասնակցում են ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և աջակցում այն քաղաքական ուժերին ու քաղաքական գործիչներին, որոնք, իրենց կարծիքով, կկարողանան լուծել հասարակության առջև ծառացած խնդիրները:

Սակայն միայն չորս տարին մեկ ընտրատեղամասեր գնալը և ցանկալի թեկնածուի համար քվեարկելը բավարար չէ: Որպեսզի իշխանությունը լավ աշխատի, անհրաժեշտ է, որ քաղաքացիները համագործակցեն նրա հետ և, միևնույն ժամանակ, նրա գործունեությունը մշտապես վերահսկեն: Պետք է համոզված լինենք, որ մեր կողմից ընտրված իշխանությունը նկատի է առնում մեր պահանջները և աշխատում մեր առջև ծառացած խնդիրների կարգավորման վրա:

Քաղաքացու մասնակցությունը կառավարման (որոշումների կայացման) գործընթացին տարբեր ձևերով է արտահայտվում.

- Երկրում ընթացող քաղաքական գործընթացների մասին տեղեկատվություն ունենալով,
- Կարևոր խնդիրների վերաբերյալ դատողություններ ծավալելով,
- Տարբեր հասարակական հավաքներին և ակցիաներին մասնակցելով,
- Կամավորական աշխատանքով,

Աշակերտները մասնակցում են ինքնակառավարման իրականացմանը:

- Բողոքի արտահայտմամբ (եթե լինի դրա անհրաժեշտությունը),
- Քաղաքական գործիչներին նամակներ հղելով:

Տեղական ինքնակառավարման գործունեությանը հնարավոր է մասնակցել այնպիսի մեխանիզմների օգտագործմամբ, ինչպիսիք են.

- Բնակավայրի ընդհանուր ժողով հրավիրելը,
- Խնդրագիր ստորագրելը,
- Քաղաքացիական խորհրդականների խորհուրդը,
- Ավագանու և նրա հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելը,
- Ընտրված քաղաքական գործիչների կողմից կատարված աշխատանքի մասին հաշվետվություն/հաշվետություններ լսելը և այլն:

Տվյալ մեխանիզմները նորություն են հանդիսանում, դրանք սահմանվել են «Տեղական ինքնակառավարման օրենսգրքով» 2015 թվականի ամռանը (Գլուխ XI), և մեր քաղաքացիների մեծ մասը դեռևս լավ չի օգտագործում այս հնարավորությունը:

Թվարկված ձևերը կարևոր են ժողովրդավարական հասարակությունում սեփական դիրքորոշման արտահայտման համար: Այնպիսի դեպքերում, երբ հասարակությունը մեկուսացված է երկրում ընթացող գործընթացներից, չեն իրականացվում իշխանության վերահսկողությունը, «ստուգման և հավասարակշռման» համակարգի հիմնական տարրերը: Նման դեպքում, կառավարության ներկայացուցիչները և հանրային ծառայողները կարող են լրիվ ազատություն զգալ և առանց սահմանափակումների գործել իրենց սեփական շահերի օգտին: Իշխանության նման գործունեությունը կվնասի հասարակության բարեկեցությունը և կարող է դառնալ մարդու իրավունքների խախտումների պատճառ:

Որպեսզի քաղաքացիները մասնակցեն երկրի կառավարմանը, պետք է ծանոթ լինեն ժողովրդավարության սկզբունքներին և կառավարման գործընթացի մեջ ներգրավվելու ուղիներն ու մեխանիզմներն իմանան:

Վրաստանի քաղաքացիները տեղական ինքնակառավարման իրավունքն իրականացնում են Վրաստանի Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման օրենսգրքով» սահմանված կանոնների միջոցով: Մենք արդեն գիտենք, որ Վրաստանի քաղաքացին, ով բավարարում է Օրենքի պահանջները (տարիք, հաշվառում), կարող է ընտրվել տեղական ինքնակառավարման մեջ և ցանկացած պաշտոն զբաղեցնել այնտեղ, եթե բավարարում է Օրենքի պահանջները (**պասիվ ընտրական իրավունք**), ինչպես նաև Վրաստանի քաղաքացին, ում 18 տարին լրացել է, իրավունք ունի մասնակցելու ինքնակառավարման ընտրություններին (**ակտիվ ընտրական իրավունք**):

Ըստ «Տեղական ինքնակառավարման օրենսգրքի», յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի պահանջելու տեղեկատվություն այն մասին, թե ինչ ծրագրեր և նախագծեր է իրականացնում տեղական ինքնակառավարումը, ինչի վրա է ծախսվում բյուջեն և այլն: Իշխանության գործունեության թափանցիկությունը ժողովրդավարության հիմնական պահանջներից մեկն է: Սակայն իշխանության թափանցիկությունը շատ ավելի է, քան պարզապես տեղեկատվության տարածումը:

ԲԱՌԱՐԱՆ

ՊԱՍԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ – քաղաքացու՝ հանրային իշխանության ընտրովի պաշտոնը զբաղեցնելու համար անձամբ քվեարկելու իրավունքը:

ԱԿՏԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ – հանրային իշխանության ընտրովի մարմիններ և պաշտոնեական անձանց քվեարկության միջոցով ընտրելու քաղաքացու իրավունքը:

Տեղական ինքնակառավարման թափանցիկության ապահովման համար քաղաքացիներին կօգնի նաև լրատվամիջոցների հետ համագործակցությունը: Այդ գործընթացում լրատվամիջոցները հասարակության դաշնակիցն են: Քաղաքացիները լրագրողների հետ կարող են աշխատել հասարակական գերատեսչություններից կարևոր տեղեկատվություն պահանջելու և մշակելու ուղղությամբ, կարող են լրատվամիջոցների օգնությամբ լայն հասարակությանը տեղեկացնել իրենց պատրաստած խնդրագրի մասին, օգտագործել լրատվամիջոցների հարթակը և բաց ու հրապարակայնորեն խոսել այն խնդիրների և հարցերի մասին, որոնք մտահոգում են նրանց և որոնց լուծումը պարտադիր են համարում: Քաղաքացիները լրատվամիջոցների հետ կարող են ավելի լավ և լիարժեք կերպով իրականացնել տեղական ինքնակառավարման հսկողությունը՝ պարբերաբար տեղեկատվություն ստանալ այն մասին, թե որքանով նպատակային է ծախսվում բյուջեն, նրանում ճի՞շտ են արդյոք նախատեսված համայնքի և բնակիչների կարիքները, ներգրավվա՞ծ են արդյոք քաղաքացիներն իրենց իսկ խնդիրների նույնականացման և վճռման գործընթացի մեջ և այլն: Նման համագործակցությունը մի կողմից քաղաքացիներին հնարավորություն է տալիս, անհրաժեշտության դեպքում, միջամտել և կարողանալ պաշտպանել և իրականացնել իրենց իրավունքները, մյուս կողմից՝ իշխանությանն առավել **հաշվետու** դարձնել ընտրողների հանդեպ:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - տեղական իշխանության կողմից իրականացված գործունեության մասին բնակչությանը լրիվ տեղեկատվության մատուցում: Սա այն ուղին է, որով բնակչությունը գնահատում է կառավարության գործունեությունը:

ՀԱՐՑԵՐ

1. Տեղյա՞կ եք, Ձեր մունիցիպալիտետում երբևէ եղե՞լ է տեղական ինքնակառավարման օրենսգրքով Վրաստանի քաղաքացիների համար շնորհված որևէ իրավունքի օգտագործման դեպք: Խնդրում ենք օրինակներ բերել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6.1

Ծանոթացե՛ք տրված օրինակներին երկրի տարբեր տարածաշրջանների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունից: Որոշե՛ք, թե յուրաքանչյուր դեպքում կոնկրետ որ իրավազորությունն են իրականացնում այս կամ այն ինքնակառավարվող միավորի բնակիչները: Ձեզ համար հետաքրքի՞ր կլիներ այդ բնույթի գործունեությանը մասնակցելը: Հիմնավորե՛ք պատասխանը:

1. Շուախևիի մունիցիպալիտետի Ցիվաձեեբի գյուղը փոքրիկ, բարձրալեռ բնակավայր է: Տասնամյակների ընթացքում Կառավարությունը քիչ ուշադրություն էր դարձնում նրան: Գյուղում սուր էր ճանապարհի և խմելու ջրի խնդիրը:

Վերջին տարիներին գյուղը ստեղծել է հասարակական կազմակերպությունների հետ աշխատելու լավ ավանդույթ: Նրանց հետ միասին (Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման Կովկասյան ինստիտուտ, Տեղական ժողովրդավարության ցանցի կենտրոն) բնակչությունը որոշեց օգտագործել Տեղական ինքնակառավարման օրենսգրքով նախատեսված մասնակցության նոր ձևը՝ հրավիրել բնակավայրի ընդհանուր ժողով:

2016 թվականին քաղաքացիների նախաձեռնող խումբը

դիմում ներկայացրեց վարչություն, անցկացրեց ընդհանուր ժողով և ընտրեց իր ներկայացուցչին: Ժողովի առաջին որոշումներից մեկը գյուղ տանող ճանապարհը վերանորոգելն էր: Առաջին փուլում նորոգվեց մի փոքր հատված (մի քանի հարյուր մետր), մունիցիպալիտետը և հասարակական կազմակերպությունները շինանյութով էին մատակարարում գյուղը, իսկ վերանորոգման վրա ինքը՝ բնակչությունն էր աշխատում: Գործընթացի մեջ ներգրավվեց նաև Աջարիայում գործող նորվեգական ընկերությունը, որը շինարարական նյութեր տրամադրեց գյուղին:

Այնուհետև գյուղը շարունակեց աշխատել առանց հասարակական կազմակերպությունների: Եթե 2016 թվականին նրանք իրենց մունիցիպալիտետի բյուջեից գործունեության համար 133 հազար լարի էին ստացել, հաջորդ տարի արդեն այդ գումարը 220 հազար լարի կազմեց, ինչը երեք անգամ գերազանցեց նախորդ 25 տարիների ընթացքում ստացած օգնությունը: Գյուղն արդեն լուծել է ճանապարհի և խմելու ջրով մատակարարման խնդիրը և ինքնակառավարման հետ մեկտեղ աշխատում է նոր նախագծերի վրա:

Գյուղի հաջողությունը հարևան փոքր գյուղերին համոզեց այդպիսի գործողության հեռանկարային լինելու մեջ: Այսօրվա դրությամբ հարևան գյուղերը ևս նման ծրագրեր են իրականացնում:

(Տեղեկատվության աղբյուրը՝
https://cipdd.org/upload/files/local_initiatives-geo.pdf)

2. 2015-2017 թվականներին Մառնեուլիի մունիցիպալիտետում գործում էր «Քաղաքացիական բյուջե» ծրագիրը, ինչը մունիցիպալիտետի բյուջեի բաշխման և ծախսման գործընթացում քաղաքացիների շահերն արտահայտելու հնարավորություն էր տալիս:

Այս նպատակով մունիցիպալիտետը տեղական բյուջեից միջոցներ էր հատկացնում, որի շրջանակներում բնակչության նախաձեռնությամբ պատրաստվում էին նախագծեր: Քաղաքացիները ներգրավված էին նաև նախաձեռնությամբ ներկայացված նախագծերի իրականացման մոնիտորինգի գործընթացի մեջ:

Այս մոդելը գործում է մի շարք երկրներում: Սկզբում այն ներդրվել է Բրազիլիայում (Սան Պաուլո): Եվրոպայում նման ծրագրեր է իրականացրել Լեհաստանը («Սոպոտի մոդել»): Վրաստանում Մառնեուլիի մունիցիպալիտետն առաջինն էր, որ 2015 թվականին ներդրեց այն:

2017 թվականին ծրագրի շրջանակներում ստեղծվեց «Քաղաքացիական բյուջեին աջակցող խորհուրդը», նրա մեջ ընդգրկվեցին մունիցիպալիտետի, հասարակական կազմակերպությունների ու բնակչության ներկայացուցիչներ և հրավիրված մասնագետներ:

Միայն 2017 թվականի համար Մառնեուլին այս ծրագրի համար 1,5 մլն լարի է տրամադրել: Քաղաքացիները պատրաստել և ներկայացրել են 1,2 մլն լարիի ընդհանուր արժողությամբ 51 նախագիծ:

(Տեղեկատվության աղբյուրը՝ http://www.marneuli.gov.ge/ge/)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6.2

Ծանոթացե՛ք «Տեղական ինքնակառավարման օրենսգրքի» XI գլխի քաղվածքին՝ 85-88 հոդվածներին (**Հավելված 1**): Թվարկե՛ք, ինքնակառավարումներում քաղաքացիների մասնակցության ի՞նչ ձևեր են կիրառած:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՑՈՒՄ - այս կամ այն հարցի հետ կապված՝ քաղաքացիների վերաբերմունքի կամ դիրքորոշման պարզում, չնայած այս տերմինը կիրառվում է նաև ընտրողների հարցման արտահայտման համար: Լրատվամիջոցները հարցումներն օգտագործում են տարբեր հարցերի նկատմամբ հասարակության վերաբերմունքի լուսաբանման համար, իսկ կուսակցությունները՝ կուսակցական տրամադրվածությունների որոշման համար: Այսպիսով, հասարակական կարծիքի հարցումը կարող է համարվել նաև ոչ պաշտոնական հանրաքվե:

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ – մարդկանց խումբ, որը շահույթ է ստանում անմիջականորեն այս կամ այն գործունեության իրականացմամբ (օրինակ, կենսաթոշակային համակարգի շահառուներ են կենսաթոշակառուները, հիվանդանոցներինը՝ պացիենտները, երիտասարդական ճամբարներինը՝ երիտասարդները):

IV փուլ

Նախագծի **I, II և III փուլերի** ժամանակ իրականացված հարցումների արդյունքների, դրանց վերլուծության և անցած նյութի օգտագործմամբ, պատրաստե՛ք և ուսուցչի հետ քննարկե՛ք հարցաշարը, որպեսզի ձեր հարևանների, ընկերների, դպրոցի, քաղաքի կամ գյուղի շրջանակներում անցկացնեք **հասարակական կարծիքի հարցում** «Սոցիալական և անհատական կարիքներ - ո՞ր հարցերի կամ խնդիրների կարգավորման հարցում է ինձ անհրաժեշտ ինքնակառավարման հետ սերտ համագործակցել» թեմայով: (Հարցարանի նմուշը տե՛ս **Հավելված N6**-ում):

Այդ նպատակով.

- Սահմանեք հարցման նպատակներն ու խնդիրները (հարցման նպատակն է բացահայտել քաղաքացիների այնպիսի կարիքները, որոնց կարգավորումը հնարավոր է տեղական ինքնակառավարման հետ համագործակցությամբ):
- Որոշեք, թե ինչ տեսակի հարցում կանցկացնեք՝ անձա՞մբ կբաժանեք հարցաշարը քաղաքացիներին, թե՞ հեռախոսով կկապվեք նրանց հետ:
- Բաշխեք գործառույթները, որոշեք, թե ով է կազմելու հարցաշարը, ով կանցկացնի հարցումը, ով կամփոփի արդյունքները և ով կպատրաստի շնորհանդես հետազոտման արդյունքների մասին:

V փուլ

Հարցումն անցկացնելիս՝ նկատի ունեցեք մի քանի խորհուրդներ. եղեք որքան հնարավոր է քաղաքավարի, լավ ձևակերպեք հետազոտման նպատակը, որպեսզի հարցվողն ինքը ևս հետաքրքրվի հետազոտությամբ և հարցերին անկեղծ պատասխանի:

VI փուլ

Հանգիստ միջավայրում ի մի բերեք և դասարանում քննարկեք արդյունքները: Առանձին-առանձին խմբավորեք **շահառուների** / քաղաքացիների անհատական և հասարակական կարիքները:

Առանձնացրեք ձեզ համար առավել հետաքրքիր մեկ կամ երկու հարց: Որոշեք, թե ինչպես կտրամադրեք այս տեղեկատվությունը տեղական ինքնակառավարմանը: Պատրաստեք շնորհանդես / շնորհանդեսներ՝ տվյալ հարցերի շուրջ:

Շնորհանդեսներ պատրաստելիս՝ օգտագործեք անցած նյութը: Մանրամասնորեն նկարագրեք, թե ինչպես կկարողանաք ինքնակառավարման հետ համագործակցությամբ լուծել այդ հարցը: Իրավական ի՞նչ մեխանիզմներ են տալիս դրա հիմքը:

VII փուլ

Ձեր կողմից ձեռք բերված տեղեկատվությունը և հիմնախնդրի կարգավորման ձեր տեսլականը տեղական ինքնակառավարմանը ծանոթացնելու ամենաարդյունավետ միջոցը հանդիպումն է ինքնակառավարման ներկայացուցիչների հետ:

Պատրաստեք նամակ: Առաջին հերթին սահմանեք նամակի հասցեատիրոջը (քաղաքապետ, ավագանու նախագահ, քաղաքացիական խորհրդականների խորհրդի անդամներ և

այլն): Նամակի հիմնական մասում նկարագրեք ձեր ծավալած գործունեությունը: Հանդիպման նպատակի հիմնավորման համար կարող եք օգտագործել «Տեղական ինքնակառավարման օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքը: Որոշեք հանդիպման ժամանակը և վայրը: Նամակը պետք է ստորագրեն հանդիպման բոլոր մասնակիցները: Դասերից հետո նամակը տարեք տեղական ինքնակառավարման մարմնի ընդունարան և սահմանված կարգով հանձնեք այն:

Ինքնակառավարման գրասենյակի աշխատակցից անպայման ստացեք նամակի (դիմումի) գրանցումը հավաստող փաստաթուղթ: Դրանում պետք է նշված լինի նամակի (դիմումի) գրանցման համարը և ամսաթիվը: Հիշե՛ք, այդ տեսակի փաստաթուղթ միշտ պետք է պահանջեք, երբ նամակով, խնդրանքով կամ դիմումով դիմում եք ցանկացած հանրային հաստատություն:

VIII փուլ

Հանդիպում տեղական ինքնակառավարման ներկայացուցչի հետ

Սկսեք կազմակերպել հանդիպումը, որոշեք.

- Ով ինչ կանի հանդիպման ժամանակ. ո՞վ կլինի ֆասիլիտատորը (նիստը վարողը), ո՞վ կկազմի հանդիպման արձանագրությունը: Քանի՞ շնորհանդես կներկայացնեն հրավիրված հյուրին: Ո՞վ կներկայացնի շնորհանդեսները: Ո՞վ կծանոթացնի հյուրին նախագծային առաջարկությունը (նիստի արձանագրության նմուշը տե՛ս **Հավելված №7**-ում):
- Նախապես պատրաստեք հանդիպման սենյակը, որոշեք տեղերը՝ որտեղ կնստեն հյուրերը, ֆասիլիտատորը, ներկայացնողները: Նախօրոք ստուգեք անհրաժեշտ սարքավորումները (համակարգիչ, պրոյեկտոր, էկրան, միկրոֆոն, տեսախցիկ):
- Եթե հնարավոր է, հանդիպմանը հրավիրեք տեղական լրատվամիջոցներին, պատրաստեք մամուլի ծանուցում և մամլո հաղորդագրություն հանդիպման մասին:

Հանդիպման ընթացքում պետք է որոշվի, թե կոնկրետ որ հարցի վրա և ինչպես կաշխատեք ինքնակառավարման հետ, ինչ ձևով կշարունակվի ձեր համագործակցությունը:

Հանդիպման արդյունքները մանրամասնորեն նկարագրեք նիստի արձանագրության մեջ: Հնարավոր է պատրաստեք տեղեկատվություն տեղական լրատվամիջոցների համար: Փոխադարձ համաձայնության (ինքնակառավարման և դպրոցի) դեպքում հնարավոր է լրատվամիջոցներին հրավիրել՝ հանդիպումը լուսաբանելու համար:

IX փուլ

Նախագծի արդյունքների ամփոփում և վերլուծում

Դասի ժամանակ անցկացրեք քննարկում այն մասին, թե ինչ արդյունքներ հետևեցին ձեր կողմից իրականացված գործունեությանը: Գո՞հ եք արդյոք հանդիպման արդյունքներից: Կոնկրետացրեք, թե ինչ սպասում ունեիք: Արդարացա՞վ արդյոք այն: Ընդհանուր առմամբ, արդյունքը լավն է, բավարար, թե՞ անբավարար: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ ստացաք նման արդյունք: Հետագայում կցանկանա՞ք արդյոք համագործակցել տեղական ինքնակառավարման հետ:

Վրաստանի օրգանական օրենք ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

(2018 թվականի մայիսի 25-ի դրությամբ)

Քաղվածք

ԳԼՈՒԽ IV. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի գործունեության բնագավառը

Սույն Օրենքը սահմանում է տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց ստեղծման և գործունեության կանոնները, դրանց ֆինանսները և գույքը, հարաբերությունները քաղաքացիների, պետական իշխանության մարմինների և հանրային ու մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ, նաև՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության պետական վերահսկման և ուղղակի պետական կառավարման իրականացման կանոնները:

Հոդված 2. Տեղական ինքնակառավարման հասկացությունը

1. Տեղական ինքնակառավարումը ինքնակառավարվող միավորում հաշվառված Վրաստանի քաղաքացիների իրավունքը և իրենց կողմից ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, Վրաստանի Օրենսդրության հիման վրա տեղական նշանակության հարցեր վճռելու հնարավորությունն է:

2. Ինքնակառավարվող միավորը մունիցիպալիտետն է: Մունիցիպալիտետը բնակավայր է (ինքնակառավարվող քաղաք), որն ունի վարչական սահմաններ, կամ բնակավայրերի միասնականություն է (ինքնակառավարվող համայնք), որն ունի վարչական սահմաններ և վարչական կենտրոն: Մունիցիպալիտետն ունի ընտրովի ներկայացուցչական և գործադիր մարմիններ (այսուհետ՝ մունիցիպալիտետի մարմիններ), հաշվառված բնակչություն և ունի սեփական գույք, բյուջե, մուտքեր: Մունիցիպալիտետն անկախ հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Հոդված 5. Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները և վերապահումները

1. Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքներն են Վրաստանի Սահմանադրությունը, «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան», Վրաստանի միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը, սույն Օրենքը, Վրաստանի այլ օրենսդիր և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերը:

Հոդված 6. Վրաստանի քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման իրականացման իրավունքը

2. Վրաստանի քաղաքացիներն իրավունք ունեն սույն Օրենքով և Ընտրական օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրել տեղական ինքնակառավարման մարմիններ և ընտրվել սույն մարմիններում՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնից, քաղաքական և այլ հայացքներից, ազգային, էթնիկ և սոցիալական պատկանելությունից, ծագումից, գույքային վիճակից և կոչումներից:

Հոդված 7. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման երաշխիքները

1. Պետության և մունիցիպալիտետի մարմինների հարաբերությունը հիմնվում է փոխհամագործակցության սկզբունքի վրա:

2. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացումն ապահովելու համար

պետական իշխանության մարմինները պարտավոր են ստեղծել համապատասխան իրավական, ֆինանսա-տնտեսական և կազմակերպչական պայմաններ:

3. Պետական իշխանության մարմինները պարտավոր են մինչև այն հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելը, որոնք վերաբերում են սույն Օրենքով սահմանված մունիցիպալիտետի լիազորություններին, նախապես խորհրդատվություններ անցկացնել այն ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց հետ, որոնք միավորում են երկրի մունիցիպալիտետների կեսից ավելին:

4. Մունիցիպալիտետն իրավազոր է դիմել դատարան այն վարչաիրավական ակտերի և գործողությունների բողոքարկման համար, որոնք սահմանափակում են Վրաստանի տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

5. Մունիցիպալիտետի ավագանին, Վրաստանի օրենսդրության համաձայն, իրավազոր է հայցով դիմել Վրաստանի Սահմանադրական դատարան՝ Վրաստանի Սահմանադրության յոթերորդ1 գլխի հետ կապված օրենսդրական ակտերի սահմանադրականության հարցի քննարկման նպատակով: Վրաստանի սահմանադրական դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ որոշումը մունիցիպալիտետի ավագանին ընդունում է ամբողջական կազմի մեծամասնությամբ:

Հոդված 8. Մունիցիպալիտետի խորհրդանիշները

1. Մունիցիպալիտետն ունի զինանշան և դրոշ: Նա կարող է ունենալ նաև այլ խորհրդանիշներ:

2. Մունիցիպալիտետի զինանշանը, դրոշը և այլ խորհրդանիշները, դրանց արտահայտության ձևերը և նկարագրությունները Վրաստանի Խորհրդարանին առընթեր Զինանշանագիտության պետական խորհրդի հետ նախնական խորհրդատվությունների հիման վրա և նրա համաձայնությամբ սահմանում է մունիցիպալիտետի ավագանին: Պարտադիր է մունիցիպալիտետի խորհրդանիշների պետական գրանցումը՝ Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 9. Մունիցիպալիտետի մարմինների աշխատանքային և գործավարության լեզուն

Մունիցիպալիտետի մարմինների աշխատանքային և գործավարության լեզուն Վրաստանի պետական լեզուն է:

Հոդված 15. Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակները

1. Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակներն են.

ա) մունիցիպալիտետի սեփական լիազորությունները,

բ) մունիցիպալիտետին պատգամված լիազորությունները:

2. Մունիցիպալիտետի սեփական լիազորությունն է սույն Օրենքով սահմանված լիազորությունը, որը նա իրականացնում է անկախ և սեփական պատասխանատվությամբ:

3. Մունիցիպալիտետի պատգամված լիազորությունն է պետական / ինքնավար հանրապետության իշխանության մարմնի լիազորությունը, որը մունիցիպալիտետին փոխանցվել է Օրենքի կամ Վրաստանի օրենսդրության համաձայն կնքված պայմանագրի հիման վրա, համապատասխան նյութական և ֆինանսական ապահովմամբ:

Հոդված 16. Մունիցիպալիտետի սեփական լիազորությունները

1. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված մունիցիպալիտետի սեփական լիազորությունները բացառիկ լիազորություններ են: Սույն Օրենքի համաձայն, մունիցիպալիտետի սեփական լիազորությունների ծավալը (շրջանակները) և իրականացման կարգը կարող են սահմանվել միայն օրենսդրական ակտի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Օրենքն ուղղակիորեն մատնանշում է Վրաստանի օրենսդրության համաձայն սեփական լիազորությունների իրականացումը կարգավորելու հնարավորություն:

2. Մունիցիպալիտետի սեփական

լիազորություններն են.

ա) մունիցիպալիտետի բյուջեի նախագծի նախապատրաստումը, քննարկումը և հաստատումը, հաստատված բյուջեում փոփոխությունների ընդգրկումը, բյուջեի կատարման հաշվետվության լսումը և գնահատումը, Վրաստանի Օրենսդրությանը համապատասխան, բյուջետային միջոցների տնօրինումը, գանձապետական գործառնությունների և բանկային գործարքների կատարումը,

բ) մունիցիպալիտետի սեփականության մեջ եղած գույքի կառավարումը և տնօրինումը՝ սույն Օրենքով և օրենքի ոլորտում գտնվող այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով,

գ) տեղական նշանակության բնական պաշարների, այդ թվում՝ ջրային և անտառային ռեսուրսների և մունիցիպալիտետի սեփականության մեջ եղած հողային ռեսուրսների կառավարումը՝ Օրենքով սահմանված կարգով,

դ) տեղական հարկերի և տուրքերի ներմուծումը և չեղարկումը՝ Օրենքով սահմանված կարգով: Դրանց տոկոսադրույքերի սահմանումը՝ Օրենքով սահմանված սահմանային քանակությունների շրջանակներում, տեղական վճարների հավաքումը,

ե) մունիցիպալիտետի տարածական-տերիտորիալ պլանավորումը և համապատասխան ոլորտում չափանիշների և կանոնակարգերի սահմանումը, քաղաքաշինական փաստաթղթերի, այդ թվում՝ հողօգտագործման գլխավոր հատակագծի, կառուցապատման կարգավորման պլանի, բնակավայրերի տարածքների օգտագործման և կառուցապատման կարգավորման կանոնակարգերի հաստատումը,

զ) մունիցիպալիտետի տարածքի բարեկարգումը և համապատասխան ինժեներական ենթակառուցվածքների զարգացումը, մունիցիպալիտետի տարածքում փողոցների, այգիների, պուրակների և այլ հասարակական վայրերի մաքրումը, տարածքի կանաչապատումը, արտաքին լուսավորման ապահովումը,

է) մունիցիպալ թափոնների կառավարումը,

ը) ջրամատակարարման (այդ թվում՝ տեխնիկական ջրամատակարարման) և սանիտարական ապահովումը, տեղական նշանակության ոռոգման համակարգի զարգացումը,

թ) մունիցիպալիտետի կառավարման մեջ եղած վաղ և նախադպրոցական դաստիարակության և ուսումնական հաստատությունների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով,

թ[1]) մունիցիպալ կառավարման մեջ գտնվող արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը,

թ[2]) մունիցիպալիտետի տարածքում գտնվող վաղ և նախադպրոցական դաստիարակության և ուսումնական հաստատությունների ավտորիզացիայի ապահովումը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով,

ժ) տեղական նշանակության ավտոճանապարհների կառավարումը և տեղական նշանակության ճանապարհների վրա ճանապարհային երթևեկության կազմակերպումը, ավտոտրանսպորտային միջոցներիապահովումըկայանատեղիներով և կանգնելու/կայանելու կանոնների կարգավորումը,

ժա) մունիցիպալիտետի վարչական սահմաններում կանոնավոր ուղևորափոխադրման թույլտվության հատկացումը, բնակչության՝ հասարակական տրանսպորտով սպասարկման կազմակերպումը,

ժբ) արտաքին առևտրի, ցուցահանդեսների, շուկաների և տոնավաճառների կարգավորումը,

ժգ) մունիցիպալիտետի տարածքում շինարարության թույլտվության հատկացումը, շինարարության վերահսկողության իրականացումը Վրաստանի օրենսդրական ակտերով սահմանված կարգով և սահմանված շրջանակներում,

ժդ) հանրահավաքների և ցույցերի անցկացման հետ կապված հարցերի կարգավորումը Օրենքով սահմանված կարգով,

ժե) մունիցիպալիտետի վարչական սահմաններում գտնվող աշխարհագրական

օբյեկտների, մասնավորապես, պատմականորեն ձևավորված թաղամասի, ինքնակառավարվող քաղաքի վարչական միավորի, այս կամ այն գոտու, միկրոշրջանի, աղբյուրի, հրապարակի, պողոտայի, մայրուղու, փողոցի, նրբանցքի, փակուղու, անցման, առափնյակի, էսպլանադի (ծառուղիով պողոտայի), ճեմուղու, պուրակի, այգու, զբոսայգու, անտառային պարկի, տեղական նշանակության անտառի, գերեզմանոցի, պանթեոնի, շենք-շինությունների, տրանսպորտային համակարգի օբյեկտի անվանումը՝ Օրենքով սահմանված կարգով,

ժզ) արտաքին գովազդի տեղադրման կարգավորումը,

ժէ) ընտանի կենդանիներ պահելու կանոնների սահմանումը և փողոցային կենդանիների հետ կապված հարցերի վճռումը,

ժը) գերեզմանոցների կարգավորումը և խնամքը,

ժթ) տեղական ինքնատիպության, ստեղծագործական գործունեության և մշակութային ժառանգության պահպանումը և զարգացումը, տեղական նշանակության մշակութային հուշարձանների խնամքը և պահպանումը, վերանորոգումը և վերակառուցումը, մունիցիպալիտետի կառավարման մեջ առկա գրադարանների, ակումբային հաստատությունների, կինոթատրոնների, թանգարանների, թատրոնների, ցուցասրահների և մարզա-առողջարարական օբյեկտների գործունեության ապահովումը և նոր օբյեկտների կառուցումը,

ի) տեղական նշանակության օբյեկտներում սահմանափակ հնարավորություններով անձանց, երեխաների և տարեցների համար համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը, այդ թվում հանրային հավաքների վայրերի և մունիցիպալ տրանսպորտի համապատասխանաբար հարմարեցման և կահավորման ապահովումը,

իա) անօթևանների ապահովումն ապաստարանով և նրանց հաշվառումը,

իբ) իր լիազորությունների շրջանակներում «Հանրային և մասնավոր համագործակցության մասին» Վրաստանի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացումը:

3. Մունիցիպալիտետն իրավազոր է սեփական նախաձեռնությամբ վճռել ցանկացած հարց, որի վճռումը Վրաստանի Օրենսդրությամբ այլ մարմնի լիազորությունների մեջ չի մտնում և չի արգելված Օրենքով:

4. Մունիցիպալիտետն իրավասու է սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով իրականացնել միջոցառումներ զբաղվածությանը նպաստելու, գյուղատնտեսությանը (այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերացիային) աջակցելու և զբոսաշրջության զարգացման, սոցիալական օգնության նպատակով, պետական քաղաքականությունն իրակա-նացնող մարմնի հետ համակարգմամբ՝ առողջության պահպանման նպատակով, ինչպես նաև, տեղական մակարդակով կազմակերպված երիտասարդական քաղաքականության զարգացմանը օժանդակելու, զանգվածային սպորտին նպաստելու, շրջակա միջավայրի պահպանությանը, հասարակական կրթությանը, գենդերային հավասարությանը նպաստելու, կանանց նկատմամբ բռնության կամ/և ընտանեկան բռնության կանխարգելման, կանանց նկատմաբ բռնության կամ/և ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության և օգնության, տեղական նշանակության արխիվների վարման, առողջ կենսակերպի հաստատման, մարդու առողջության համար անվտանգ միջավայրի ստեղծման, մունիցիպալիտետի տարածքում ներդրումներին աջակցելու, նորարարական զարգացմանն աջակցելու և այլ նպատակներով:

Հոդված 17. Լիազորությունների պատգամման կարգը և պայմանները

1. Պետական կամ ինքնավար հանրապետության իշխանական մարմինը կարող է մունիցիպալիտետին փոխանցել պետական/ինքնավար հանրապետության իշխանական մարմնի այն լիազորությունները, որոնց իրականացումն ավելի արդյունավետ է տեղական մակարդակում:

4. Մունիցիպալիտետն իրավազոր է պատգամված լիազորությունները

Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված շրջանակներում իրականացնել՝ հարմարեցնելով տեղական պայմաններին:

Հոդված 18. Պետական չափորոշիչները և տեխնիկական կանոնակարգերը մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորությունների ոլորտում

Երկրի ողջ տարածքի հավասար սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով պետական իշխանության համապատասխան մարմիններն իրավունք ունեն մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորությունների ոլորտում համապատասխան նորմատիվ ակտով սահմանել պետական չափորոշիչներ և տեխնիկական կանոնակարգեր:

ԳԼՈՒԽ IV. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմինը

Հոդված 44. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության ձևերը

Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության ձևերն են.

ա) մասնակցությունը մունիցիպալիտետի ավագանու նիստերին,

բ) մունիցիպալիտետի ավագանու որոշումների նախագծերի նախապատ-րաստումը և նախաձեռնումը,

ե) ընտրողների ընդունումը, նրանց նամակների, առաջարկությունների և բողոքների քննարկումը,

զ) Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված այլ ձևեր:

Հոդված 47. Մունիցիպալիտետի ավագանու անդամի փոխհարաբերությունը ընտրողների հետ

Մունիցիպալիտետի ավագանու անդամի փոխհարաբերությունն ընտրողների հետ ներառում է.

ա) Վրաստանի Օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների իրականացում՝ ընտրողների իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանության համար,

բ) քաղաքացիների ընդունում,

գ) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքական միավորումների հետ համագործակցություն,

դ) կատարված աշխատանքի մասին ընտրողների տեղեկացում:

ԳԼՈՒԽ V. Մունիցիպալիտետի գործադիր մարմինը

Հոդված 48. Քաղաքապետը

1. Մունիցիպալիտետի գործադիր մարմինը և մունիցիպալիտետի բարձրագույն պաշտոնատար անձը քաղաքապետն է: Քաղաքապետը ներկայացնում է մունիցիպալիտետը և ապահովում մունիցիպալիտետի լիազորությունների իրականացում սույն Օրենքի, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերի և համապատասխան մունիցիպալիտետի նորմատիվ ակտերի համաձայն:

2. Քաղաքապետը հաշվետու է մունիցիպալիտետի ավագանու և բնակչության հանդեպ:

ԳԼՈՒԽ XI. Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացմանը

Հոդված 85. Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության երաշխիքները և ձևերը

1. Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության ապահովման համար մունիցիպալիտետի մարմինները, նրանց կառուցվածքային միավորները և պաշտոնատար անձինք պարտավոր են ստեղծել կազմակերպչական և նյութա-տեխնիկական պայմաններ քաղաքացիների ընդունելության, մունիցիպալիտետի մարմինների գործունեությանը, այդ թվում, կոլեգիալ հանրային հաստատության նիստերին, քաղաքացիների մասնակցության և որոշումների ընդունման գործընթացի

թափանցիկության համար:

2. Ցանկացած անձ իրավունք ունի սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի շրջանակներում գործող ակտերով և մունիցիպալիտետի ավագանու նորմատիվ վարչաիրավական ակտերով սահմանված շրջանակներում և որոշված կարգով, առանց սահմանափակման օգտվել տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության ձևերից:

3. Մունիցիպալիտետն իրավասու է տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ապահովման նպատակով մունիցիպալիտետի բյուջեի մեջ նախատեսել համապատասխան ծրագրեր:

4. Տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ձևերն են.

ա) բնակավայրի ընդհանուր ժողովը,

բ) խնդրագիրը,

գ) քաղաքացիական խորհրդականների խորհուրդը,

դ) մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նիստերին մասնակցությունը,

ե) մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքի մասին հաշվետվությունների լսումը:

5. Մունիցիպալիտետն իրավասու է, տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության սույն Օրենքով սահմանված ձևերից բացի, համապատասխան վարչաիրավական ակտով սահմանել տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության այլ ձևեր, որոնք չեն հակասում Վրաստանի օրենսդրությանը:

Հոդված 85[1]. Տեղեկատվության հասանելիություն

1. Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են տեղական ինքնակառավարման մեջ քաղաքացիների մասնակցության ապահովման նպատակով իրականացնել միջոցառումներ՝ իրենց գործունեության և տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության հնարավորությունների մասին մունիցիպալիտետի բնակչության իրազեկման նպատակով:

3. Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված դեպքերում և որոշված կարգով հրապարակել ընդունված վարչաիրավական ակտերը, դրանց նախագծերը և այլ հանրային տեղեկատվություն:

Հոդված 85[2]. Բնակավայրի ընդհանուր ժողովը

1. Բնակավայրի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով) գյուղի / ավանի / քաղաքի բնակչության ինքնակազմակերպման և տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ձև է, որն ապահովում է համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողների՝ սույն բնակավայրի և մունիցիպալիտետի համար կարևոր հարցերի քննարկման, որոշման և տվյալ մունիցիպալիտետի մարմինների առջև նախաձեռնման գործընթացներին գործուն ներգրավվածություն:

3. Ընդհանուր ժողովի անդամ է համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողը: Ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունի նաև համապատասխան բնակավայրի տարածքում գոյություն ունեցող անշարժ գույքի սեփականատերը և այս բնակավայրում բնակվող այլ չափահաս անձ:

4. Սույն Օրենքը սահմանում են ընդհանուր ժողովի լիազորությունները, դրա հրավիրման և գործունեության կարգը այն բնակավայրի համար, որում գրանցված ընտրողների թիվը չի գերազանցում 2000-ը:

5. Այն բնակավայրի համար, որում գրանցված ընտրողների թիվը գերազանցում է 500-ը, կարող է սահմանվել ընդհանուր ժողովը բնակավայրի առանձին մասերում փուլերով հրավիրման ընթացակարգ: Ընդհանուր ժողովի բնակավայրի մասերում անցկացման և գործունեության

կարգը սահմանում է մունիցիպալիտետի ավագանին սույն Օրենքի 855 հոդվածի 6-րդ կետի համաձայն:

6. Այն բնակավայրի համար, որում գրանցված ընտրողների թիվը գերազանցում է 2000-ը, մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է, սույն Օրենքի 5-րդ կետի համաձայն, ընդհանուր ժողովի լիազորությունները, դրա հրավիրման և գործունեության կարգը սահմանել մունիցիպալիտետի ավագանու որոշումով, ինչպես նաև այս բնակավայրում ստեղծել մի քանի ընդհանուր ժողով և, սույն Օրենքի նախատեսմամբ, սահմանել դրանց լիազորությունները, անվանումները և գործունեության կարգը:

7. Ընդհանուր ժողովն իրավունք ունի իր գործունեությունը վարելու և դրան նպաստելու նպատակով սեփական կազմից ընտրել ընդհանուր ժողովի ընտրյալ: Ընդհանուր ժողովի ընտրյալին անվանելու իրավունք ունի համապատասխան ընդհանուր ժողովի անդամների առնվազն 5%-ը:

8. Ընդհանուր ժողովի ընտրյալը վարում է ընդհանուր ժողովը, ապահովում ընդհանուր ժողովի որոշումը մունիցիպալիտետի համապատասխան մարմիններին ներկայացում, ինչպես նաև կատարում է ընդհանուր ժողովի առանձին առաջադրանքներ:

9. Ընդհանուր ժողովի ընտրյալի լիազորությունների ժամկետը որոշվում է մինչև հաջորդ ընդհանուր ժողովի գումարման ժամկետը: Ընդհանուր ժողովի ընտրյալի լիազորությունները ավտոմատ կերպով կարող են երկարաձգվել ոչ ավելի, քան 5 անգամ:

10. Ընդհանուր ժողովի գործունեության մեջ պետք է ապահովվի կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության հնարավորություն:

Հոդված 85³. Բնակավայրի ընդհանուր ժողովի լիազորությունները

1. Ընդհանուր ժողովն իրավազոր է.

ա) քննարկել համապատասխան բնակավայրի համար կարևոր սոցիալական և տնտեսական հարցեր և մունիցիպալիտետի մարմիններին ներկայացնելու համար պատրաստել համապատասխան առաջարկներ,

բ) քննարկել համապատասխան բնակավայրում իրականացվելիք նախագծերը մինչև մունիցիպալիտետի բյուջեում դրանց արտացոլումը և մունիցիպալիտետի մարմիններին ներկայացնել հիմնավորված դիտողություններ ու առաջարկություններ,

գ) քննարկել մունիցիպալիտետում ընթացիկ և իրականացվելիք նախագծերը և մունիցիպալիտետի մարմիններին ներկայացնել հիմնավորված դիտողություններ ու առաջարկություններ,

դ) կազմակերպել համապատասխան բնակավայրի կարևոր հարցերի կարգավորում, մասնավորապես, բնակավայրի տարածքի մաքրում, բարեգործական գործունեություն, բնակավայրի ենթակառուցվածքների վերանորոգում և բարելավում և այլ այն ոլորտներում տեղական բնակչության ներգրավվածություն, որը չի հակասում Վրաստանի օրենսդրությանը, և անհրաժեշտության դեպքում, օգնության համար դիմել մունիցիպալիտետի մարմիններին,

ե) որոշում կայացնել մունիցիպալիտետի ավագանուն խնդրագիր ներկայացնելու մասին,

ը) քննարկել մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից ընդհանուր ժողովին նախաձեռնված հարցը,

ժ) իրականացնել սույն Օրենքով և մունիցիպալիտետի ավագանու համապատասխան որոշմամբ սահմանված այլ լիազորություններ:

3. Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են քննարկել ընդհանուր ժողովի որոշումը և քննարկման արդյունքների մասին հիմնավորված պատասխանը սույն Օրենքով և Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված ժամկետներում տեղեկացնել ընդհանուր ժողովի համապատասխան անդամներին կամ ընդհանուր ժողովի ընտրյալին:

Հոդված 85⁴. Բնակավայրի ընդհանուր ժողովի հրավիրման կարգը

1. Ընդհանուր ժողովի հրավիրման նախաձեռնման իրավունք ունեն.

ա) համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողների առնվազն 5%-ը,

բ) մունիցիպալիտետի քաղաքապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ մունիցիպալիտետի ավագանու միջնորդությամբ,

գ) Ընդհանուր ժողովի ընտրյալը:

2. Սույն հոդվածի առաջին կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում ընդհանուր ժողովի հրավիրում նախաձեռնելու համար համապատասխան բնակավայրում գրանցված առնվազն 3 ընտրողների կազմով ստեղծվում է նախաձեռնող խումբ: Նախաձեռնող խումբը մունիցիպալիտետի քաղաքապետին դիմում է ներկայացնում ընդհանուր ժողովի հրավիրման նախաձեռնության գրանցման վերաբերյալ:

8. Գրանցման տեղեկանքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում, նախաձեռնող խումբը մունիցիպալիտետի քաղաքապետին դիմում է ներկայացնում ընդհանուր ժողովի հրավիրման մասին: Դիմումի մեջ պետք է նշվի ընդհանուր ժողովի հրավիրման ամսաթիվը, ժամանակը և վայրը (համապատասխան բնակավայրի տարածքի շրջանակներում): Դիմումին պետք է կցվի ... ընտրողների առնվազն 5%-ի ստորագրությունը:

9. Ընդհանուր ժողովի հրավիրման ամսաթիվ կարող է սահմանվել սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված դիմումը ներկայացնելու օրվանից ոչ վաղ, քան 15-րդ օրը:

14. Այն բնակավայրում, որտեղ ընտրվել է ընդհանուր ժողովի ընտրյալ, մունիցիպալիտետի քաղաքապետը պարտավոր է ապահովել սեփական նախաձեռնությամբ ընդհանուր ժողովի հրավիրում տարին առնվազն 2 անգամ:

15. Ընդհանուր ժողովի հրավիրման կազմակերպումը, այդ թվում սույն հոդվածի 11-րդ կետով նախատեսված տեղեկատվության համապատասխան բնակավայրում տարածումն ապահովում են քաղաքապետարանը և նախաձեռնող խումբը, ինչպես նաև ընդհանուր ժողովի ընտրյալը (այսպիսինի գոյության դեպքում):

Հոդված 85[5]. Բնակավայրի ընդհանուր ժողովի գործունեության կարգը

1. Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե դրան մասնակցում է ընդհանուր ժողովի անդամների առնվազն 20%-ը: Ընդհանուր ժողովին ներկա ընդհանուր ժողովի անդամների գրանցման կազմակերպումն ապահովում է/ապահովում են նախաձեռնող խումբը կամ/և քաղաքապետարանի իրավասու պաշտոնյան կամ/և ընդհանուր ժողովի անդամները: Գրանցման ժամանակ նշվում է ընդհանուր ժողովի անդամի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի), Վրաստանի քաղաքացու անձնական համարը, գրանցման վայրը և ստորագրությունը:

4. Ընդհանուր ժողովը որոշում է կայացնում ընդհանուր ժողովին ներկա ընդհանուր ժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկությունը սովորաբար անցկացվում է ձեռք բարձրացնելով:

6. Մունիցիպալիտետի ավագանին որոշումով հաստատում է ընդհանուր ժողովի տիպիկ կանոնադրությունը:

Հոդված 86. Խնդրագիր

1. Խնդրագիր ներկայացնելու իրավունք ունեն հետևյալ սուբյեկտները.

ա) մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողների առնվազն 1% -ը,

բ) ընդհանուր ժողովը:

2. Մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է խնդրագիր ներկայացնելու իրավունք շնորհել մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողների ավելի պակաս քանակի:

4. Խնդրագիրը գրվում է և ներկայացվում քաղաքապետարանի ավագանու անունով: Խնդրագրի տեսքով կարող է ներկայացվել.

ա) նորմատիվ վարչաիրավական ակտի նախագիծը,

բ) նախապատրաստման նորմատիվ վարչաիրավական ակտի նախագծի հիմնական սկզբունքները կամ կոնկրետ առաջարկները,

գ) մունիցիպալիտետի կամ/և բնակավայրի համար ընդհանուր նշանակության խնդիրներից ելնելով,

հարցերը մունիցիպալիտետի ավագանու նիստին ուսումնասիրման, քննարկման և վճռման պահանջը:

5. Խնդրագիրը պետք է ներառի.

ա) համապատասխան դիմումի տեքստը,

բ) խնդրագիրը ներկայացնող սուբյեկտի զեկուցողի/զեկուցողների (ոչ ավելի, քան 3 հոգի) անունը, ազգանունը, հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը (գոյություն ունենալու դեպքում) և Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

գ) խնդրագիրը ներկայացնելու ամսաթիվը.

դ) սույն հոդվածի առաջին կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում՝ համապատասխան մունիցիպալիտետի տարածքում խնդրագիր ներկայացնող ընտրողների ցուցակը,

զ) սույն հոդվածի 4-րդ կետի, «գ» ենթակետով նախատեսված դեպքում՝ կոնկրետ ձևակերպված պահանջը և համապատասխան հիմնավորումը:

11. Սույն հոդվածի 4-րդ կետի «բ» կամ «գ» ենթակետերով նախատեսված խնդրագիրը մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի որոշումով, նրա գրանցումից հետո, 7 օրվա ժամկետում ուսումնասիրման է փոխանց-վում մունիցիպալիտետի ավագանու համապատասխան հանձնաժողովին կամ ... քննարկման է ուղարկվում մունիցիպալիտետի քաղաքապետին:

18. Մունիցիպալիտետի քաղաքապետը պարտավոր է քննարկել մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի կողմից լիազորությունների համաձայն ուղարկված խնդրագիրը և քննարկման արդյունքների մասին մունիցիպալիտետի ավագանուն և խնդրագիրը ներկայացնող սուբյեկտին տեղեկացնել՝ խնդրագիրը քննարկման ստանալուց հետո 1 ամսվա ժամկետում: Այս ժամկետը մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի համաձայնությամբ կարող է երկարաձգվել 1 ամսով:

19. Մունիցիպալիտետի ավագանու/ ավագանու հանձնաժողովի/ աշխատանքային խմբի նիստին խնդրագիրը ներկայացնում է/ներկայացնում են ... ներկայացնող սուբյեկտի զեկուցողը/ զեկուցողները:

23.Խնդրագրի գրանցման, ստորագ-ությունների ստուգման և խնդրագրի քննարկման հետ կապված այլ ընթացակարգեր սույն հոդվածի համաձայն սահմանվում են մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

24. Մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է սույն հոդվածի նորմերի նախատեսմամբ, մունիցիպալիտետի ավագանու որոշումով սահմանել խնդրագրի էլեկտրոնային ձևով ներկայացման կարգը:

Հոդված 86[1]. Քաղաքացիական խորհրդականների խորհուրդ

1. Քաղաքացիական խորհրդականների խորհուրդը մունիցիպալիտետի քաղաքապետի/շրջանային վարչության նախագահի խորհրդակցական մարմին է: Քաղաքացիական խորհրդականների խորհրդի կազմի մեջ են մտնում ձեռնարկատիրական իրավաբանական անձանց, հասարակական կազմակերպությունների և մունիցիպալիտետի բնակչության ներկայացուցիչներ: Սույն օրենքի համաձայն, քաղաքացիական խորհրդականների խորհրդի կազմը հաստատում է մունիցիպալիտետի քաղաքապետը/ շրջանային վարչության նախագահը: Քաղաքացիական խորհրդականների խորհրդի կազմը սահմանվում է առնվազն 10 անդամներով:

2. Քաղաքացիական խորհրդականների խորհրդում մեկ սեռի ներկայացուցիչների թիվը չպետք լինի 1/3-ից պակաս: Քաղաքացիական խորհրդականների խորհուրդն իրավազոր չէ, եթե խախտված է սույն կետի պահանջը:

3. Մունիցիպալիտետի քաղաքապետը պարտավոր է իր կողմից հաստատված քաղաքացիական խորհրդականների խորհրդին քննարկման ներկայացնել մունիցիպալիտետի բյուջեի նախագիծը, մունիցիպալիտետի տարածքային պլանավորման փաստաթղթեր, մունիցի-պալիտետի աշխարհագրական օբյեկտների անվանակոչության մասին առաջարկներ, ինչպես նաև այլ կարևոր վարչաիրավական ակտերի նախագծեր, ենթակառուցվածքային և սոցիալական

նախագծեր: Մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից հաստատված քաղաքացիական խորհրդականների խորհրդի այլ լիազորություններ և նրա գործունեության կարգը սահմանվում է քաղաքացիական խորհրդականների խորհրդի կանոնադրությամբ, որը հաստատում է մունիցիպալիտետի քաղաքապետը:

5. Քաղաքացիական խորհրդականների խորհրդի որոշումը կազմվում է Քաղաքացիական խորհրդականների խորհրդի նիստի արձանագրությամբ: Քաղաքացիական խորհրդականների խորհուրդը գումարվում է առնվազն 3 ամիսը մեկ անգամ:

Հոդված 87. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի՝ նիստերին մասնակցությունը

1. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի, ինչպես նաև կառավարության նիստերը հրապարակային են, բացառությամբ Վրաստանի Օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Ցանկացած անձ իրավունք ունի, առանց նախնական ծանուցման կամ/և առանց թույլտվության ներկա գտնվելու մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի հրապարակային նիստերին:

4. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի հանրային նիստերին ներկա գտնվող անձինք իրավունք ունեն, առանց նախնական թույլտվության, սակայն միայն նիստի նախագահի համաձայնության դեպքում, մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով հարցեր տալ զեկուցողներին և համազեկուցողներին, տալ բացատրություն և կատարել հայտարարություն, ներկայացնել տեղեկատվություն:

Հոդված 88. Մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքի մասին հաշվետվությունների լսումը

1.Մունիցիպալիտետի քաղաքապետը և մունիցիպալիտետի ավագանու անդամը պարտավոր են, տարին առնվազն մեկ անգամ, ոչ ուշ, քան նոյեմբերի 1-ը, մունիցիպալիտետի ավագանու համապատասխան որոշմամբ սահմանված կարգով կազմակերպել հանրային հանդիպումներ մունիցիպալիտետի ընտրողների հետ և նրանց հաշվետվություն ներկայացնել կատարված աշխատանքի մասին, հաշվետվության քննարկման ժամանակ պատասխանել մունիցիպալիտետի ընտրողների կողմից տրված հարցերին:

2. Մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողն իրավունք ունի առանց սահմանափակման ներկա գտնվել մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի հանրային հաշվետվությունների քննարկմանը:

3.Մունիցիպալիտետի համապատասխան մարմինները պարտավոր են ապահովել մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքի մասին սույն Օրենքով նախատեսված հաշվետվությունների հրապարակում:

Վրաստանի նախագահ

Գիորգի Մարգվելաշվիլի

Քութաիսի,

5 փետրվարի, 2014 թ.

Վրաստանի ընտրական օրենսգիրք
(2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ)

Քաղվածք

Գլուխ XII. Վրաստանի խորհրդարանական ընտրություններ

Հոդված 109. Վրաստանի խորհրդարանի ընտրության կարգը և լիազորությունների ժամկետը

1. Վրաստանի խորհրդարանի 77 անդամներ ընտրվում են համամասնական ընտրակարգով և 73 անդամ՝ մեծամասնական ընտրակարգով:

2. Վրաստանի խորհրդարանն ընտրվում է 4 տարի ժամկետով:

Հոդված 111. Պասիվ ընտրական իրավունք

1. Վրաստանի խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 21 տարեկան հասակից, ով տիրապետում է վրացերենին:

2. Վրաստանի խորհրդարանի անդամ չի կարող ընտրվել քաղաքացին, ով վերջին 2 տարվա ընթացքում չի ապրել Վրաստանում և ոչ մի երկրում չի գտնվում Վրաստանի հյուպատոսական հաշվառման:

3. Վրաստանի խորհրդարանի անդամը չի կարող ընտրվել թմրամոլ կամ թմրամիջոցներ օգտագործող անձը, իսկ եթե այս անձին համապատասխան ընտրական հանձնաժողովը ընտրված է հայտարարել, Վրաստանի խորհրդարանն իրավունք չունի ճանաչել նրա լիազորությունները:

Գլուխ XV. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ

Հոդված 134. Ակտիվ և պասիվ ձայնի իրավունք

1. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու անդամ կարող է ընտրվել Վրաստանի քաղաքացին, ում 21 տարին լրացել է քվեարկության օրվա պահին և Վրաստանում ապրել է առնվազն 5 տարվա ընթացքում:

2. Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 25 տարեկան հասակից, ով Վրաստանում ապրել է առնվազն 5 տարվա ընթացքում:

3. Վրաստանի քաղաքացին չի կարող միաժամանակ հանդիսանալ մեկ այլ ներկայացուցչական մարմնի կամ ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետը/ինքնակառավարվող համայնքի համայնքապետը:

Հոդված 135. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու և ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի / ինքնակառավարվող համայնքի համայնքապետի լիազորությունների ժամկետները

1. Հերթական ընտրություններում ընտրված մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու և ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի/ինքնակառավարվող համայնքի համայնքապետի լիազորությունների ժամկետը 4 տարի է:

2. Ավագանու նոր կազմի լիազորությունը սկսվում է, իսկ հինն ընդհատվում է նորընտիր ավագանու առաջին գումարման պես:

4. Ինքնակառավարվող քաղաքի նորընտիր քաղաքապետի/ինքնակառավարվող համայնքի նորընտիր համայնքապետի լիազորությունը սկսվում է, իսկ հին քաղաքապետի/համայնքապետի լիազորությունները դադարում են համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելուց (քաղաքապետին/համայնքապետին ընտրված հայտարարելուց) հետո, 11-րդ օրը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ՆՄՈՒՇ

Նմուշ #1. Անհատական նամակ

_____

(Նշե՛ք հանրային հաստատության պաշտոնական անձի պաշտոնը, օրինակ՝ սակրեբուլոյի նախագահին)

Պարոն/տիկին _____

(Նշեք նրա անունը, ազգանունը, տվյալներ դիմողի մասին)

Քաղաքացի _____

(Նշեք ձեր անունը, ազգանունը և տվյալները՝ հասցեն, հեռախոսահամարը, էլ- փոստի հասցեն)

Դ Ի Մ ՈՒ Մ

Տիկին / պարոն _____,

Առաջին մաս. հարցի կամ հիմնախնդրի էությունը

Երկրորդ մաս. հարցի կամ հիմնախնդրի մանրամասն նկարագիր

Երրորդ մաս. պահանջը

Հարգալից ավարտ

Ստորագրություն

Ամսաթիվ, ամիս, տարեթիվ

Նմուշ #2. Կոլեկտիվ նամակ

_____

(Նշե՛ք հանրային հաստատության պաշտոնական անձի պաշտոնը, օրինակ՝ սակրեբուլոյի նախագահին)

Պարոն/տիկին _____

(Նշեք նրա անունը, ազգանունը, տվյալներ դիմողի մասին)

_____

(Նշեք դիմողների խմբի անվանումը, օրինակ՝«11-րդ դասարանի աշակերտներ»)

Կ Ո Լ Ե Կ Տ Ի Վ Դ Ի Մ Ո Ւ Մ

Տիկնայք / պարոնայք _____,

Առաջին մաս. հարցի կամ հիմնախնդրի էությունը

Երկրորդ մաս. հարցի կամ հիմնախնդրի մանրամասն նկարագիր

Երրորդ մաս. պահանջը

Հարգալից ավարտ

Բոլոր աշակերտների ստորագրությունները

Նշեք կոնտակտային անձի տվյալները՝ անունը, ազգանունը, հասցեն (հնարավոր է, դպրոցի), հեռախոսահամարը, էլ-փոստի հասցեն

Ամսաթիվ, ամիս, տարեթիվ

Նմուշ. Անոնս

Թերթի վերին անկյունում տեղադրեք ձեր կազմակերպության, ընկերության, գերատեսչության տարբերանշանը, ինչպես նաև հետևյալ տեղեկությունները.

Ամսաթիվ/ամիս/տարեթիվ - քաղաք

Կոնտակտային անձ - (այն անձի ինքնությունը, պաշտոնը, ում հետ կարող են կապվել լրացուցիչ տեղեկատվության համար).

Հեռախոս (քաղաքային/բջջային).

Էլ-փոստ.

Կայքէջ.

Սոցիալական ցանցեր.

Հասցե.

Վերնագիրը

(աշխատեք, որ վերնագիրը լինի ճշգրիտ, լավ կազմված և նրանում ներկայացված լինի գլխավորը)

Ո՞վ. Ո՞վ է տարածում տեղեկատվությունը և հրավիրում լրատվամիջոցին/ով է գլխավոր գործող անձը:

Ի՞նչ. Ի՞նչ միջոցառում է:

Որտե՞ղ. Որտե՞ղ կկայանա միջոցառումը:

Ե՞րբ. Միջոցառման անցկացման օրը և ժամը:

Ինչո՞ւ. Նկարագրեք միջոցառման նպատակը, ինչո՞ւ է այն նշանակալի և հետաքրքիր:

Մամլո անոնս

Ամսաթիվ/ամիս/տարեթիվ, քաղաք _____
Կոնտակտային անձ _____
Հեռախոսահամար _____
Էլ-փոստ _____
Կայքէջ _____
Սոցիալական ցանցեր _____
Հասցե _____

Օգնենք հասակակցին

2018 թվականի հունիսի 10-ին ք.Թբիլիսիի 46-րդ հանրային դպրոցի քաղաքացիական ակումբի աշակերտների նախաձեռնությամբ Կրիայի լճում կանցկացվի վազքամրցում:

Միջոցառման ընթացքում Կրիայի լճում կկազմակերպվի աշակերտների նկարների և ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառք, իսկ հանգանակված գումարը կփոխանցվի Թբիլիսիի տեսողությունից զուրկ երեխաների 202-րդ հանրային դպրոցին:

Հաղթող աշակերտները կպարգևատրվեն հուշանվերներով և պարգևներով:
Միջոցառման աջակիցներ. «Դիո» ընկերության տնօրեն Թամազ Դաուշվիլի, Սպորտի համալսարանի ասիստենտ-պրոֆեսոր, «Սպորտը բոլորի համար» ֆեդերացիայի վարչության անդամ Մերաբ Մահսուրաձե, Երեխաների և դպրոցական սպորտի ազգային ֆեդերացիայի գլխավոր տնօրեն Լևան Կիկալիշվիլի, Մարմնամարզության և բասկետբոլի ֆեդերացիաների ներկայացուցիչներ, ք.Թբիլիսիի Բժշկական համալսարանի ուսանողներ:

(Մամուլի անոնսը կազմվել է համաձայն իրականում իրականացված նախագծի: Նախագծի մասին տեղեկությունների կարող եք ծանոթանալ http://www.civics.ge էջում:)

Հավելված 6

Սոցիալական հետազոտություն

Հարցարանի N
Ամսաթիվ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

Բարև Ձեզ, ես Գիորգի Ռազմաձեն եմ և ներկայացնում եմ №--հանրային դպրոցի - -րդ դասարանը:

Ուզում ենք մի քանի հարց տալ Ձեզ, որոնց պատասխանելուն մոտավորապես 10 րոպե է անհրաժեշտ: Հարցման տվյալները կօգտագործենք միայն ընդհանրացված տեսքով, Ձեր անունը և ազգանունը հաշվետվության մեջ չի արձանագրվի:

Հարցվողի անունը և ազգանունը	
Հարցվողի գործունեությունը	
Հարցվողի հասցեն և հեռախոսահամարը	
Հարցում անցկացնողի ստորագրությունը	

1. Ճանաչո՞ւմ եք արդյոք Ձեր ինքնակառավարման ավագանու անդամներին: (Կարդացե՛ք)
   1. Այո: Ոչ:
   3. Այլ:

2. Ինչպե՞ս կգնահատեիք ավագանու աշխատանքը: (Կարդացե՛ք)
   1. Դրական:
   2. Բացասական:
   3. Այլ:

3. Ինչպե՞ս կգնահատեիք քաղաքապետի աշխատանքը: (Կարդացե՛ք)
   1. Դրական:
   2. Բացասական:
   3. Այլ:

4. Հիմնականում ո՞ր աղբյուրներից եք ստանում տեղեկատվություն ինքնակառավարման և ավագանու գործունեության մասին: (Հնարավոր է մի քանի պատասխան)
   1. Հեռուստատեսություն:
   2. Ամսագրեր-թերթեր:
   3. Ինքնակառավարման ծառայող/աշխատակից:
   4. Անձնական շփումներ:
   5. Ավագանու անդամ:
   6. Այլ (գրեք):
   Եվ այլն ...

5. Հարցվողին շնորհակալություն հայտնեք համագործակցության համար և հրաժեշտ տվեք:

Հավելված 7

Արձանագրության գրանցման նմուշ

Հանդիպման արձանագրություն #

Հանդիպմանը մասնակցում էին. _____

(նշեք ինչպես հրավիրվածներին, այնպես էլ հյուրընկալներին)

ՕՐԱԿԱՐԳ.

1.
2.
3.

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ (կամ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ)

1. Օրակարգի առաջին հարցի քննարկում _____
2. Օրակարգի երկրորդ հարցի քննարկում _____
3. Օրակարգի երրորդ հարցի քննարկում _____

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՈՐՈՇԵՑԻՆ (ՀԱՄԱՁԱՅՆՎԵՑԻՆ).

Հանդիպման ղեկավար _____

(նշեք անունը և ազգանունը)

Քարտուղար _____

(նշեք անունը և ազգանունը)

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱԿՏԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հանրային իշխանության ընտրովի մարմիններ և պաշտոնեական անձանց քվեարկության միջոցով ընտրելու քաղաքացու իրավունքը:

ԱՆԳԼՈՍԱՔՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

անգլալեզու երկրներ՝ ԱՄՆ, Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա և այլն:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

կառավարման համակարգ, երբ հանրային իշխանության մի շարք գործառույթների իրականացման իրավունքը փոխանցվում է ինքնակառավարման մարմիններին:

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐ

ենթադրվում են Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրները:

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

բազմակողմանի միջազգային հանդիպում և խորհրդակցություն՝ բարձրագույն մակարդակով:

ԳԱՂՏՆԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ընտրությունների անցկացում քվեաթերթիկներով, երբ ընտրողներն ուրիշներից գաղտնի շրջագծում են իրենց համար ցանկալի թեկնածուի անունը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

իշխանության ճյուղ, որն իրականացնում է ներկայացուցչական մարմնի կողմից ընդունված որոշումները հանրային ծառայության ոլորտում:

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(լատ.՝ censura) - իշխանության կողմից տպագիր մամուլի, բեմականացումների, ռադիո և հեռուստահաղորդումների, իսկ երբեմն մասնավոր գրագրության ստուգում, որպեսզի թույլ չտան կամ սահմանափակեն իշխանության համար անընդունելի տեղեկատվության տարածումը: Ժողովրդավարական երկրների օրենսդրությունը ճանաչում է տեղեկատվության ազատություն և արգելում գրաքննությունը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հանրային իշխանության ներկայացուցչական մարմինների (օրինակ՝Խորհրդարան, ավագանի) և հանրային իշխանության պաշտոնեական անձանց (քաղաքապետ) ընտրությունը քվեարկությամբ:

ԹԵՐԹ՝ ԼՐԱԳԻՐ

(իտալ.՝ Gazzeta) որոշակի պարբերականությամբ, կանոնավոր կերպով լույս տեսնող հրատարակում, որն ընդգրկում է հասարակության համար նշանակալի և հետաքրքիր նորություններ, հոդվածներ տարբեր թեմաներով, նաև խմբագրական հոդվածներ և գովազդ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

պետություն, որը հիմնված է ժողովրդավարական կառավարման վրա:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(հուն. ժողովրդի կառավարում) – քաղաքական կարգի առաջադիմական ձև, որը հիմնված է մեծամասնության կառավարման վրա:

- ***Ուղղակի ժողովրդավարություն*** *– ժողովրդավարական կառավարման ձև, երբ որոշումների ընդունման գործընթացի մեջ ներգրավված են անմիջապես բոլոր քաղաքացիները:*
- ***Ներկայացուցչական ժողովրդավարություն*** *– ժողովրդավարական կառավարման ձև, երբ քաղաքացիներն ընտրում են ներկայացուցիչներին՝ իրենց ընտրյալներին (Խորհրդարան, Ավագանի) և նրանց վստահում կարևոր հարցերի լուծումը, իսկ իրենք ընտրությունների միջոցով վերահսկում են իրենց ներկայացուցչի աշխատանքը:*

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔ

մի քանի բնակավայրերի (ուրբանային՝ քաղաքի և ավանի և ռուռալ՝ գյուղի) միասնություն, որին, համաձայն Ինքնակառավարման օրենսգրքի, շնորհվել է մունիցիպալիտետի կարգավիճակ (մինչև 2006 թվականը դրանք շրջաններ էին կոչվում): Համայնքի կենտրոնը կարող է լինել այնպիսի քաղաք, որն ինքնակառավարվող քաղաքի կարգավիճակ չունի:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՄԻԱՎՈՐ (ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ)

տեղական կառավարման պաշտոնական անվանում Վրաստանի օրենսդրությամբ: Ինքնակառավարվող միավորները երկու տեսակի են՝ ինքնակառավարվող քաղաք և ինքնակառավարվող համայնք:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՔԱՂԱՔ

ուրբանային (քաղաքային) տիպի բնակավայր է, որը միտված է քաղաքներին բնորոշ հարցերի լուծման և որին Ինքնակառավարման օրենսգիրքը շնորհել է մունիցիպալիտետի կարգավիճակ:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Եվրոպական խարտիայի համաձայն, իշխանության տեղական մարմինների իրավունքն ու հնարավորությունը, Օրենքի շրջանակներում կարգավորել և վարել հասարակական գործերի նշանակալի մասը սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերին համապատասխան:

ԼՐԱԳՐՈՂ

անձ, որը հայթայթում, մշակում և տարածում է տեղեկատվությունը: Արդի դարաշրջանում այլևս պարտադիր չէ, որ լրագրողը լինի որևէ լրատվամիջոցի աշխատակից, նա կարող է անկախ աշխատել:

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժուռնալիստիկա)

հասարակական գործունեության բնագավառներից մեկն է: Նրա նպատակը հրատապ տեղեկատվության հայթայթումը, մշակումը և տարածումն է զանգվածային հաղորդակցության միջոցներով: «Ժուռնալիստիկա» տերմինն առաջացել է ֆրանսերեն “Journal” (օրագիր, թերթ, պարբերական հրատարակություն) բառից, որն իր հերթին բխում է լատիներենից: Սկզբից այն միայն տպագիր մամուլ՝ թերթեր, ամսագրեր, տարբեր հրատարակումներ էր նշանակում: Ժամանակի ընթացքում, տերմինն ընդլայնվեց և այսօրվա դրությամբ ընդգրկում է լրագրության ընդարձակ գունապատկերը:

ԽԱՐՏԻԱ

հասարակական-քաղաքական նշանակության որոշ փաստաթղթերի անվանում, հռչակագրի հոմանիշ:

ԽՄԲԱԳԻՐ

(ֆր.՝ Rédacteur) - 1. անձ, ով գրքի, ամսագրի, թերթի հրատարակումն է գլխավորում, հաստատում նրա բովանդակությունը, 2. անձ, ով խմբագրում է տեքստը:

ԽՆԴՐԱԳԻՐ

մունիցիպալիտետի տարածքում.

- հաշվառված ընտրողների ընդհանուր քանակի առնվազն 1 տոկոսի կամ
- կոնկրետ բնակավայրի ընդհանուր ժողովի

իրավունքը պատրաստել և ավագանուն ներկայացնել որևէ հրատապ հարցի վճռման նախագիծ: Ավագանին պարտավոր է մեկամսյա ժամկետում քննարկել այն: Քննարկմանը մասնակցելու և զեկուցումով հանդես գալու իրավունք ունեն նաև խնդրագիրը նախաձեռնողները:

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Կառավարումը մեկ կենտրոնում հավաքել՝ տեղական ինքնակառավարման և իրավունքների սահմանափակման հաշվին:

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խորհրդարանի և Ավագանու անդամների ընտրություն՝ ըստ կուսակցական ընտրացուցակների:

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ծառայություն և ապրանք, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության կարիքներով, և որն ի զորու է մատուցել միայն հանրային (տեղական կամ պետական) իշխանությունը: Հանրային ծառայությունը ներառում է այնպիսի ոլորտներ, որոնք ընդհանրապես բոլորի համար են ստեղծում բարիք (ճանապարհաշինություն, լուսավորում, խմելու ջրի մատակարարում, դպրոցների ստեղծում և գործունեություն, քաղաքացիների անվտանգություն և այլն):

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐԶԱԿՈՂ

Հանրային հեռարձակողը, Հասարակական հեռարձակողի Աջարիայի հեռուստատեսությունը և ռադիոն, լիցենզավորված կամ ավտորիզացված ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն անձնական խմբագրական պատասխանատվությամբ սեփական հաղորդակցական ցանցով սահմանված ժամանակի ընթացքում իրականացնում է նյութերի հեռարձակում և միաժամանակ հասանելի է դիտողին/ունկնդրին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

պաշտոնական փաստաթուղթ (այդ թվում՝ գծագիր, մանրակաղապար, գծապատկեր, լուսանկար, էլեկտրոնային տեղեկատվություն, տեսա- և աուդիոձայնագրություններ) կամ հանրային հաստատությունում պահպանված, նաև ստացած հանրային հաստատության կամ ծառայողի կողմից՝ կապված ծառայողական գործունեության հետ, մշակված, ստեղծված կամ ուղարկված տեղեկատվություն: Բոլորը կարող են ծանոթանալ հանրային հաստատությունում առկա հանրային տեղեկատվությանը, եթե այն չի պարունակում պետական, կոմերցիոն կամ անձնական գաղտնիք: Հանրային հաստատությունը պարտավոր է ապահովել հանրային տեղեկատվության պատճենի մատչելիություն:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

տեղական իշխանության կողմից իրականացված գործունեության մասին բնակչությանը լրիվ տեղեկատվության մատուցում: Սա այն ուղին է, որով բնակչությունը գնահատում է կառավարության գործունեությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՑՈՒՄ

այս կամ այն հարցի հետ կապված՝ քաղաքացիների վերաբերմունքի կամ դիրքորոշման պարզում, չնայած այս տերմինը կիրառվում է նաև ընտրողների հարցման արտահայտման համար: Լրատվամիջոցները հարցումներն օգտագործում են տարբեր հարցերի նկատմամբ հասարակության վերաբերմունքի լուսաբանման համար, իսկ կուսակցությունները՝ կուսակցական տրամադրվածությունների որոշման համար: Այսպիսով, հասարակական կարծիքի հարցումը կարող է համարվել նաև ոչ պաշտոնական հանրաքվե:

ՀԵՐԱԼԴԻԿԱ

զինանիշագիտություն, զինանշանի կազմում և պարզաբանում:

ՄԱՐԶՊԵՏ

կենտրոնական իշխանության լիազոր մունիցիպալիտետների որոշակի խմբում (օրինակ՝ պատմական Գուրիայի տարածքում՝ «Լիազոր Լանչխութիի, Օզուրգեթիի, Չոխատաուրիի մունիցիպալիտետներում»):

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Վրաստանի Խորհրդարանի և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամների ընտրություններ ըստ միամանդատ կամ բազմամանդատ ընտրատարածքների:

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ (United Nations Organization, UNO, համառոտ՝ United Nations, UN) – համընդհանուր խաղաղության ապահովման և պետությունների համագործակցության միջազգային կազմակերպություն: Ստեղծվել է 1945 թվականին: Վրաստանը ՄԱԿ-ի անդամ է դարձել 1992 թվականին, իսկ 1993 թվականին Վրաստանում բացվել է Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակ: Վրաստանում գործում է նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), որը Վրաստանին օգնում է երեխաների պաշտպանության, առողջապահության և կրթական բնագավառներում պետական սոցիալական բարեփոխումների իրականացման հարցում:

ՄԻՋԱԳԵՏՔ

տարածք Տիգրիս և Եփրատ գետերի միջև, ներկայիս Իրաքի տարածքում:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ

քաղաքի կամ գյուղի ինքնակառավարման մարմին:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

կառույց, որտեղ քաղաքացիներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին, որոնք պետք է որոշեն այսպես կոչված «խաղի կանոնները», վերահսկեն գործադիր ճյուղի կողմից վարած գործունեությունը:

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

մարդկանց խումբ, որը շահույթ է ստանում անմիջականորեն այս կամ այն գործունեության իրականացմամբ (օրինակ, կենսաթոշակային համակարգի շահառուներ են կենսաթոշակառուները, հիվանդանոցներինը՝ պացիենտները, երիտասարդական ճամբարներինը՝ երիտասարդները):

ՇՈՒՄԵՐ

հնագույն պետություն Միջագետքի տարածքում:

ՊԱՍԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

քաղաքացու՝ հանրային իշխանության ընտրովի պաշտոնը զբաղեցնելու համար անձամբ քվեարկելու իրավունքը:

ՊՈԼԻՍ

հունական քաղաք-պետություն:

ՊՐՈԴՅՈՒՍԵՐ

(անգլ.՝ Producer) անձ, որը հեռուստատեսության/ռադիոյի լուրերի ծառայությունում ղեկավարում է լուրերի պլանավորման և նախապատրաստման գործընթացը և պատասխանատու է լուրերի թողարկման համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դատարան, որը քննարկում է օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը, օրինակ՝ եթե դուք համարում եք, որ որևէ մեկը ձեզ վնաս է պատճառել (ձեր վեճը մասնավոր անձի, որևէ կազմակերպության կամ պետական հաստատության հետ), ձեր իրավունքը պաշտպանելու համար դիմում եք սովորական դատարանի, որպեսզի այն օրենքի համաձայն որոշի, թե որ կողմն է ճիշտ:

Այն դեպքում, երբ դուք համարում եք, որ հենց օրենքն է ճնշում ձեզ (կամ օրենքը հակասում է այն իրավունքներին, որոնք Սահմանադրությամբ են երաշխավորված), դուք դիմում եք Սահմանադրական դատարան, որպեսզի նա պարզի, թե իսկապես հակասո՞ւմ է արդյոք օրենքը Սահմանադրությանը: Եթե պարզվի, որ դա այդպես է, այդ դեպքում նման օրենքը պետք է փոխվի:

ՍԵԳՐԵԳԱՑԻԱ

խտրականության ծայրահեղ ձև: Նշանակում է օրենքի կամ սովորույթների հիմքի վրա էթնիկ խմբերի առանձնացում: Որոշակի էթնիկ կամ ռասայական խմբի մեկուսացում հասարակական կյանքից, խոչընդոտող իրավական կամ փաստական սահմանափակումների սահմանում այս խմբերի, նրանց անդամների նկատմամբ, հատուկ բնակավայրերում նրանց բնակեցում, տեղաշարժման սահմանափակում, հասարակական կյանքի ամենացածր աստիճանում հարկադրաբար պահում, կրթության բնագավառում առանձնացված ուսուցման ներմուծում և այլն:

ՍՏՈՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

հիերարխիական (հիերարխիա՝ ստորակարգություն, հուն.՝ սուրբ կառավարում) կառավարման սկզբունք իշխանական կառույցներում: Ստորին իշխանական մարմինների ստորակարգության կարգ ավելի բարձր իշխանական մարմինների նկատմամբ:

ՍՈՒԲՍԻԴԻԱՐՈՒԹՅՈՒՆ

ինքնակառավարման եվրոպական խարտիայի կարևորագույն սկզբունքներից մեկը, որի համաձայն իրավունքների և պարտականությունների իրականացումը տեղի է ունենում իշխանության այն մարմնի կողմից, որն ամենից մոտ է կանգնած քաղաքացիներին:

ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

պետական գերագույն իշխանական մարմնի կողմից միջազգային պայմանագրի հաստատում, որը ստորագրված է այս պետության լիիրավ ներկայացուցչի կողմից:

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

(լատ.՝ Propaganda, տարածման ենթակա) տեղեկատվության մատուցման ձև, որը ենթադրում է ցանկացած հաղորդակցական ձևի օրինաչափ օգտագործում մարդկանց գիտակցության, հույզերի և վարքի վրա ներգործելու նպատակով:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

օրենքների հետ կապված՝ գործում է հետևյալ ստորակարգությունը՝ սահմանադրություն/սահմանադրական օրենք, սահմանադրական համաձայնագիր, միջազգային պայմանագիր և համաձայնագիր, օրգանական օրենք, «սովորական» օրենք: Ստորին մակարդակի օրենքը հակասության մեջ չպետք է լինի դրանից բարձր գտնվող օրենքների հետ: («Նորմատիվ ակտերի մասին» Վրաստանի օրենք, հոդված 7)

Օրգանական օրենքն ընդունվում է այնպիսի կարևորագույն բնագավառների կարգավորման համար, որոնք Սահմանադրությամբ առանձնահատուկ են համարված և հենց Սահմանադրության մեջ է մատնանշված նման օրենքի ընդունումը, ի տարբերություն սովորական օրենքների, Օրգանական օրենքի ինչպես ընդունելը, այնպես էլ փոփոխելը բարդացված է: Օրինակ, եթե սովորական օրենքը կարող է ընդունել հասարակ մեծամասնությունը (150 պատգամավորից քննարկմանը մասնակցում էր 100-ը, և նրանցից 60-ն աջակցեց օրենքին), Օրգանական օրենքի քննարկման գործընթացը ժամկետներով երկարաձգված է, և դրա ընդունմանը պետք է աջակցի ցուցակային կազմի կեսից ավելին (150-ից առնվազն 76 պատգամավոր):

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վրաստանի Սահմանադրություն
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
3. Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգիրք
4. Վրաստանի օրգանական օրենք՝ Տեղական ինքնակառավարման օրենսգիրք
5. Վրաստանի ընտրական օրենսգիրք
6. Վրաստանի օրենք հեռարձակողների մասին
7. Երեխաների իրավունքների կոնվենցիա
8. «Տեղական ժողովրդավարության ուղեցույց Վրաստանի համար»՝ Եվրոպայի Խորհրդի տեղեկտվական բյուրո Վրաստանում, 2004
9. Բերտրան Կլոդ-Ժան: Լրատվության էթիկան և հաշվետվողականության համակարգերը = La Deontologie des Medias, Ազատության ինստիտուտ, Թբիլիսի 2004
10. Էրոբա, Ինքնակառավարման բարեփոխումը Վրաստանի Հանրապետությունում, 1918, Հատոր 1, Թբիլիսի, 2017, https://www.scribd.com/document/355542506/
11. Լոսաբերիձե Դավիթ, Ժողովրդին մոտ, ավել եկամուտներով, ավել իրավունքներով՝ ինքնակառավարման 100 տարվա վաղեմության բարեփոխման լավագույն պատմությունը, http://droa.ge/?p=26188
12. Հեռարձակողների վարքի կանոնագիրք
13. Վրաստանի Խորհրդարանի Ազգային գրադարանի Քաղաքացիական կրթության էլեկտրոնային բառարան
14. Վրաստանի լրատվական էթիկայի խարտիա
15. Վրաստանի տեղական ժողովրդավարության զարգացման տարեկան հաշվետվություններ՝ 2005, 2006, 2007, 2008, 2009-2010, 2011-2012, 2013-2014, 2016-2017 թվականներ, «Բաց հասարակություն – Վրաստան» հիմնադրամ
16. Ճավճավաձե Իլյա, Հրապարակախոսություն, «Ազգը և պատմությունը»
17. Խմալաձե Վախտանգ, «Տեղական ինքնակառավարումը Վրաստանում. անցյալը, արդիականությունը, միտումը»՝ ՄԱԿ-ի ծրագիր, Վրաստան, Թբիլիսի, 1997

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

1. Էջ 10 © Նինո Գելաշվիլի
2. Էջ 11 © iStockphoto.com/Michael Fuery
3. Էջ 13 © www.wikipedia.org
4. Էջ 21 © Council of Europe
5. Էջ 23 © www.wikipedia.org
6. Էջ 25 © Նաթիա Լուաշվիլի
7. Էջ 28 © Նինո Գելաշվիլի
8. Էջ 32 © Էրեկլե Ռոստոմաշվիլի
9. Էջ 36 © Քութաիսիի մունիցիպալիտետի ավագանու ֆեյսբուկյան էջ
10. Էջ 38 © Յանա Ղորբեզաշվիլի Civil.ge
11. Էջ 43 © Յանա Ղորբեզաշվիլի Civil.ge
12. Էջ 45 © www.wikipedia.org
13. Էջ 47 © Հանրային հեռարձակող 1tv.ge
14. Էջ 56 © Կատո Բենդելիանի
15. Էջ 60 © Մարտվիլի մունիցիպալիտետի քաղաքապետարան